




ԶՄԻԱԾԻՆ

1992

Ա-Բ-Գ



ԽԻԺ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Յոնանոս - Վեպրուսոս - Մարգար


1992



ՀՐԱՄԱՆԱԻ


Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



35-92

17708-1247



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.-Ի
ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐՈԶԸ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ
ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ
(6 Յունուար 1992 թ.)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ».

Սիրելի ժողովուրդ Մեր,

Այս տարի եւ տօնախմբում ենք սուրբ յիշատակը մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի Ծննդեան, համակուած մեր երանելի նախնեաց տեսիլքներով եւ սպասումներով:

Յիրաւի, հրաշալի պատումը Քրիստոսի Ծննդեան, ամէն տարի նոր լոյս է սփռում մեր երկրային անցաւոր կեանքի ճանապարհի վրայ եւ դառնում նոր, ազնիւ ներշնչանքների աղբիւր, ի մխիթարութիւն մեր յուսադեպ հոգիների:

Յիսուսի Ծնունդը ոգեկոչելիս, պարտաւոր ենք յիշել նաև հին աշխարհի, հեթանոս աշխարհի ժողովուրդների դարերով կուտակուած սպասումները, երբ մարդիկ ու՝ ազգեր, բազում անարդարութիւնների ու բռնութիւնների ներքոյ, երազում էին հրաշք գալուստը մի փրկչի, մի ազատարարի:

Մեծ սաղմոսերգուն արտայայտում է այդ հոգեվիճակը հետևեալ աղօթքով՝ «Յոյց մեզ, Տէր, զողորմութիւնս քո եւ զփրկութիւնս քո սուր մեզ» (Սաղմ. 27. 8):

Հին Կտակարանում բազում մարգարէութիւններ կան մի փրկչի սպասման երազանքով: Յիշենք հրեղէն խօսքերը Եսայի մարգարէի՝

«Տէր Աստուած, լոյծ զկնճիոն անհրաւորեան, քակեա զխարդախութիւն բռնութեան, արձակեա զնեղեալս թողութեամբ եւ զամենայն մութհակս անհրաւորեան պատառեա» (Ես. ԾԸ. 6):

Յոյժ նշանակալից է, որ նաև հեթանոս աշխարհում, հռոմէացի արդար ու խոնարհ մարդիկ նոյն երազանքներով ու սպասումներով էին ապրում:

Յնցող է վկայութիւնը հոռմեացի մեծ բանաստեղծ Վիրգիլիոսի, Քրիստոսի Ծննդից լիսուն տարի առաջ՝

«Պիտի գալ շարանը նոր տարիների,
Նոր մի ծնունդ պիտի իջնի երկներից,
Այն մահկան, որով մահկին երկաթեայ դարի վերջ պիտի գտնի,
Ու պիտի գալ ոսկեայ դարը համայն աշխարհի»:

Այո՛, Յիսուսի Ծննդով ստեղծեց, թէ պիտի խորտակուեն շղթաները «երկաթեայ դարի», ու պիտի յաջորդի «ոսկեայ դարը», երբ պիտի թագաւորեն մարգկային կեանքում՝ արդարութիւնը, բարի կամեցողութիւնը, ազատութիւնն ու խաղաղութիւնը:

Ինչքան լուգիչ են նաև Եղիսաբեթին ուղղուած Սուրբ Կոյս Մարիամի խօսքերը իր Ռդոմ մասին, որին նա պիտի ծնունդ տար: «Արար զօրութիւն բազկաւ իւրով, ցրուեաց զամբարտաւան մտօք սրտից իւրեանց: Քակեաց զնօրս յաթոռից և բարձրացոյց զխոնարհս. Զբաղցեալս լցոյց բարութեամբ և զմեծատունս արձակեաց ունայն» (Ղուկաս Ա. 51—54):

Բայց և ինքը Յիսուս իր հրապարակային քարոզչութեան սկզբում, յայտնեց իր աշակերտներին ու հետևորդներին, թէ՛ «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել զերեաց ազատութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն» (Ղուկաս Գ. 18—19):

Այս բոլոր մարգարէութիւնները վկայում են մեզ այն մասին, թէ Յիսուս, իրօք, դարերով սպասուած Մեսիան էր, Փրկիչն էր, որ ծնում էր Բեթղեհէմում հրաշալի պայմաններում: Յիսուսի ծնունդը պատմականօրէն հանդիսացաւ երկնքի պատասխանը՝ տառապող մարդկութեան երազանքների: Յիսուս ոչ միայն նոր օրէնք հաստատեց Աստուած-մարդ յարաբերութեան, այլ նաև՝ նոր օրէնք մարդկանց և ազգութիւնների միջև յարաբերութիւնների: Այսպիսով, բրիտանական կրօնի փրկագործական առաքելութիւնը հանդիսացաւ հրամայականը՝ Աստուծոյ կամքը, այսինքն՝ նրա պատուիրանները կեանքի կոչելու երկրի վրայ մարդկանց ու ազգութիւնների միջև: Ամէն օր աղօթում ենք՝ «Հայր մեր որ յերկինս ես... եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի»: Յիսուսի մարդեղութիւնը սկզբնաւորումն է մարդու և ազգութիւնների ազատագրման՝ մեղքի կապանքներից ու չարիքների որոգայթներից:

Մեր օրերին, երբ տագնապեայ աշխարհը որոնում է և պաշարում մի նոր արդար իրաւակարգ, մի նոր խաղաղ իրավիճակ ստեղծելու համար, չենք կարող չվկայել, որ այդ ազնի ու մարդասէր տենչանքների և քարոջական հրամայականների ակունքները գտնում են Քրիստոսի սուրբ Աւետարանում: Սուրբ Ծննդեան ու Աստուածայայտնութեան այսօրուայ տօնը, այս ճշմարտութիւնները հաստատելու և փառաբանելու սրբազան պահն է:

Մանաւանդ մենք՝ հայերս, մեր ողջ պատմութեան ընթացքում հաւատացել ենք Յիսուսի պատգամներով՝ աշխարհը վերափոխելու, մարդու հոգին պայծառակերպելու, ազգութիւնների միջև համերաշխութիւն և խաղաղութիւն հաստատելու իղեւաններին:

Ապացոյց, նաև մեր օրերում, մեր ժողովրդի պայքարը յանուն մարդու իրաւունքների, ազատ ապրելու իրաւունքի, յանուն արդար ու խաղաղ մի համաշխարհային կարգավիճակի, որոնք այնքան հարազատ են Քրիստոսի

Աւետարանին, որոնք կրօնական ըմբռնումով նշանակում են՝ մարդուն ազատել մեղքի կապանքներից և բարոյական մահուան ճիւղաններից:

Այս իմաստով, մեզ՝ հայերիս համար, մեր այս տազնապալի օրերին Մայր Հայրենիքում, Քրիստոսի Աւետարանը յոյժ աշխեական է. նա մեր Սուրբ Գիրքն է, մեր արդար պաշարի ուղին լուսաւորող:

Մենք քրիստոնէութիւնը ընդունել ենք շատ անելի առաջ քան բազում ազգեր, և Քրիստոսի աստուածային պատգամներով ենք բեղմնաւորել ու կազմաւորել մեր ազգային ոգեկանութիւնը: Հայ ժողովուրդը, Քրիստոսից առաջ, սպասում էր նրա Ծննդեան:

Սիրելի հաւատացեալներ, մեր այս խոհերով, այս սպասումներով ողջունում ենք մեծ աւետիսը մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշալի Ծննդեան, այս անգամ ինքնիշխան ու անկախ մեր Հանրապետութեան հովանու ներքոյ:

Փառք արդարութեան արեգակ և խաղաղութեան իշխան Միածին Որդուն մեր Աստծուն:

Օրհնութիւն մեր վերածննդող ազատ ժողովրդին և շերմագին մաղթանք, որ նա անկողորմ հաւատքով, համահայկական միասնական ճիգերով, եղբայրական համերաշխ գործակցութեամբ, համախմբուած իր նոր պետութեան հովանու ներքոյ, հասնի նաւահանգիստը խաղաղութեան, իր արդար իղձերի իրականացմամբ:

Սուրբ Ծննդեան այս առաւօտեան՝ «Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրեամբ և խաղաղութեամբ, առաւելոյ ձեզ յուսով, զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ. 13):

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՅԱԻ», ամէն:



Յննդդ է վկայութիւնը հոռեմացի մեծ բանաստեղծ Վիրգիլիոսի, Քրիստոսի Ծննդից լիտուն տարի առաջ՝

«Գիտի գալ շարանը նոր տարիների,
Նոր մի ծնունդ պիտի իջնի երկնքից,
Այն մանկան, որով նախկին երկաթեայ դարի վերջ պիտի գտնի,
Ու պիտի գալ ոսկեայ դարը համայն աշխարհի»:

Այո՛, Յիսուսի Ծննդով ստեղծեց, թէ պիտի խորտակուեն շղթաները «երկաթեայ դարի», ու պիտի չաջորդի «ոսկեայ դարը», երբ պիտի թագաւորեն մարդկային կեանքում՝ արդարութիւնը, բարի կամեցողութիւնը, ազատութիւնն ու խաղաղութիւնը:

Ինչքան լուրջ էն նաև Եղիսաբեթին ուղղուած Սուրբ Կոյս Մարիամի խօսքերը իր Որդու մասին, որին նա պիտի ծնունդ տար: «Արար գորութիւն բազկաւ իրով, ցրուեաց զամբարտաւանս մտօք արտից իրեանց: Քակեաց զեգօրս յաթոռից և բարձրացուց զխոնարհս. Զբաղեալս լցուց բարութեամբ և զմեծատունս արձակեաց ունայն» (Ղուկաս Ա. 51—54):

Բայց և ինքը Յիսուս իր հրապարակային բարոզութեան սկզբում, յայտնեց իր աշակերտներին ու հետևորդներին, թէ՛ «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս արտիք, բարոզել զերեաց ազատութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն» (Ղուկաս Դ. 18—19):

Այս բոլոր մարգարէութիւնները վկայում են մեզ այն մասին, թէ Յիսուս, իբօք, դարերով սպասուած Մեսիան էր, Փրկիչն էր, որ ծնունդ էր ձեռնդեմում հրաշալի պայմաններում: Յիսուսի ծնունդը պատմականօրէն հանդիսացաւ երկնքի պատասխանը՝ տառապող մարդկութեան երազանքների: Յիսուս ոչ միայն նոր օրէնք հաստատեց Աստուած-մարդ չարաբերութեան, այլ նաև՝ նոր օրէնք մարդկանց և ազգութիւնների միջև չարաբերութիւնների: Այսպիսով, բրիտանական կրօնի փրկագործական առաքելութիւնը հանդիսացաւ հրամայականը՝ Աստուծոյ կամքը, այսինքն՝ նրա պատմութիւնները կեանքի կոչելու երկրի վրայ մարդկանց ու ազգութիւնների միջև: Ամէն օր աղօթում ենք՝ «Հայր մեր որ յերկինս ես... եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի»: Յիսուսի մարդեղութիւնը սկզբնաւորումն է մարդու և ազգութիւնների ազատագրման՝ մեղքի կապանքներից ու չարիքներից որոգայթներից:

Մեր օրերին, երբ տագնապեալ աշխարհը որոնում է և պաշարում մի նոր արդար իրաւակարգ, մի նոր խաղաղ իրավիճակ ստեղծելու համար, չենք կարող չվկայել, որ այդ ազնի ու մարդասէր տենչանքների և բարոյական հրամայականների ակունքները գտնում են Քրիստոսի սուրբ Աւետարանում: Սուրբ Ծննդեան ու Աստուածայայտնութեան աչօրուայ տօնը, այս ճշմարտութիւնները հաստատելու և փառաբանելու սրբազան պահն է:

Մանաւանդ մենք՝ հայերս, մեր ողջ պատմութեան ընթացքում հաւատացել ենք Յիսուսի պատգամներով՝ աշխարհը վերափոխելու, մարդու հոգին պայծառակերպելու, ազգութիւնների միջև համերաշխութիւն և խաղաղութիւն հաստատելու իղէալներին:

Այսպցոյց, նաև մեր օրերում, մեր ժողովրդի պաշարը չանուն մարդու իրաւունքների, ազատ ապրելու իրաւունքի, չանուն արդար ու խաղաղ մի համաշխարհային կարգավիճակի, որոնք այնքան հարազատ են Քրիստոսի

Աւետարանին, որոնք կրօնական ըմբռնումով նշանակում են՝ մարդուն ազատել մեղքի կապանքներից և բարոյական մահուան ճիրաններից:

Այս իմաստով, մեզ՝ հայերիս համար, մեր այս տազնապալի օրերին Մայր Հայրենիքում, Քրիստոսի Աւետարանը յոյժ աշխտական է. նա մեր Սուրբ Գիրքն է, մեր արդար պաշարի ուղին լուսաորոշ:

Մենք բրիստոնէութիւնը ընդունել ենք շատ անելի առաջ քան բազում ազգեր, և Քրիստոսի աստուածային պատգամներով ենք բեղմնաւորել ու կազմաւորել մեր ազգային ոգեկանութիւնը: Հայ ժողովուրդը, Քրիստոսից առաջ, սպասում էր նրա Ծննդեան:

Սիրելի հաւատացեալներ, մեր այս խոհերով, այս սպասումներով ողջունում ենք մեծ անտիպ մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշալի Ծննդեան, այս անգամ ինքնիշխան ու անկախ մեր Հանրապետութեան հովանոցներքոյ:

Փառք արդարութեան արեգակ և խաղաղութեան իշխան Միածին Որդուն մեր Աստծուն:

Օրհնութիւն մեր վերածննդ ազատ ժողովրդին և շերմագին մաղթանք, որ նա անկոտրում հաւատքով, համահաշկական միասնական ճիգերով, եղբայրական համերաշխ գործակցութեամբ, համախմբուած իր նոր պետութեան հովանոցներքոյ, հասնի նաւահանգիստը խաղաղութեան, իր արդար իղձերի իրականացմամբ:

Սուրբ Ծննդեան այս առաւօտեան՝ «Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրեամբ և խաղաղութեամբ, առաւելոյ ձեզ յուսով, զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հոռմ. ԺԵ. 13):

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՅԱԻ». ամէն:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի
ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Հունվարի 12-ին)

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամեն»:

«Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իր աւերի»:

Սիրելի հաւատացյալ ժողովուրդ,

Այս խոսքերն արտասանել է մեզանից երկու հազար տարի առաջ հենց ինքը՝ մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս. այդ մասին հիշատակություն կա Ավետարանում: Ուրեմն Հիսուս ասում է. Ամեն թագավորություն, այսինքն ամեն պետություն, որ ինքն իր մեջ բաժանվի՝ կավերվի, կխորտակվի, կքայքայվի: Սա պատմականորեն հաստատված մի ճշմարտություն է բոլոր ժամանակների ընթացքում: Մտածում եմ, թե ինչպես Հիսուս այդպիսի պատմական ճշմարտության հասավ և այդ մասին արտահայտվեց երկու հազար տարիներ առաջ մի փոքրիկ ազգի սահմաններում, հրեական աշխարհի, որն այդ ժամանակ առանձին անկախ և ինքնուրույն պետություն էլ չուներ, այլ Հռոմեական Կայսրության մեկ մահաճգն էր: Սակայն այս անգամ էլ պետք է ասենք, հաստատենք, որ Հիսուս իր Աստվածային իմաստությամբ հասավ այս ճշմարտության հաստատության և արտահայտվեց իր աշակերտներին այլ մեծ ճշմարտությունների շարքին: Հիմա մենք կարող ենք հարց տալ, արդյո՞ք Հիսուսի այս երկու հազար տարիներ առաջ արտասանած խոսքերը այժմեություն ունեն, թե ոչ: Պարզ է, որ այժմեություն ունեն: Նախ այս վերջին երկու հազար տարիների ընթացքում, մեզ ծանոթ բազում թագավորություններ, պետություններ, իշխանություններ Եվրոպայում, Ասիայում մույն ճակատագիրն են ունեցել, առավել կամ նվազ չափով: Նրանք մեղքնապես բաժանվելու, ներքին պառակտումներ ունենալու, ներքնապես քայքայվելու կամ այլասերվելու հետևանքով կործանվել են: Ծճմարիտ է, որ ուրիշ ազգիակներ էլ պատճառ են դարձել երբեմն կամ հաճախ այս կամ այն պետության քայքայման, բայց այս ճշմարտությունը հաստատվում է ընդհանրապես բոլոր պարագաներում: Մեր Հայոց պատմության ընթացքում, հատկապես, մեծան էրևույթներ արտահայտվել են դժբախտաբար, երբ հայկական թագավորություններ, իշխանություններ քայքայվել են և թշնամիների ձեռքն են անցել, ներքին քայքայումների, ներքին պառակտումների, իշխանների միջև ներքին թշնամանքների պատճառով: Եվ կարծում եմ սխալ չի լինի հաստատել, թե սա՝ այս դատողությունը, ճշմարիտ է մեկ մեր օրերին և երևի միշտ ճշմարիտ պիտի լինի: Զարմանալի կերպով Հիսուսի բոլոր մեծ մեծ դատումները, դատողություններն իսկապես, հավի-


տեճապես ճշմարիտ են եղել և՛ անցյալում, և՛ ներկայում, և՛, շատ հավանական է, ապագայում: Եվ մեր օրերին երբ մեր ազգը այսօր ինքնիշխան և աերն է իր ճակատագրի, հռչակած իր պետության, իր ազգային անկախության, մենք հաշերս, մեր հայրենիքի բոլոր քաղաքացիները պետք է մտածեն այդ մասին, ներքին միասնությունը պահպանելու առումով, որպեսզի, Աստված չանի, որ ինչ-ինչ ներքին ծայրահեղ պառակտումների կամ անհասկացողությունների հետևանքով տկարանա մեր ազգային նորածին պետությունը, նույնիսկ ավերվի կամ քայքայվի: Մանավանդ մեր պայմաններում, երբ ուրիշ ազգակներ էլ կան արտաքին, որոնք աննպաստ են մեր ժողովրդի գոյատևման համար այս աշխարհագրական դիրքում:


Ահա թե ինչու մեր աղոթքը պետք է լինի, իբրև Հայ Եկեղեցի, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի, որ թեև ժողովրդավարական ղեկավարման պայմաններում, բազմակուսակցական դրության պայմաններում, բնական տարակարծություններ և վեճեր լինեն (դա հատուկ է ամեն ժողովրդավարական դրության), բայց պետք է իմաստությունը ունենանք՝ իբրև ժողովուրդ պահպանելու մեր միասնությունը հիմնական հարցերի շուրջ, հիմնահարցերի շուրջ, որպեսզի խուսափենք այդ վտանգից, որին ակնարկում է մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս:

Մենք, և ես անձնապես՝ իբրև առաջին սպասավորը Հայաստանյայց Եկեղեցվո, միշտ իմ պարտքն եմ համարել մեր ժողովրդին, մեր ժողովրդի ղեկավարներին թե՛ անցյալում, թե՛ հիմա կոչ անել միասնության, համերաշխ գործակցության և եղբայրության: Այդ պայմաններում է միայն, որ մեր ցավոտ հարցերը կարող են հետզհետե բարվոք լուծվել: Եվ շարունակելով իմ միտքը ուզում եմ այս միասնության գաղափարը տարածել ոչ միայն Հայաստանի քաղաքացիների, այլ նաև Հայաստանի տարածքից դուրս ապրող մեր ժողովրդի զավակների վրա, որոնք անբաժան մասն են կազմում մեր ազգին: Այսօր գրեթե մեր ժողովրդի կեսը ապրում է Հայաստանի սահմաններից դուրս, ունենք թե՛ ներքին, թե՛ արտաքին սփյուռք: Ահավասիկ այս ամբողջի վրա, իմ կարծիքով, պետք է տարածվի միասնության գիտակցությունը, որովհետև նաև արտասահմանի հայությունը, մանավանդ արտաքին սփյուռքը և՛ քաղաքական տեսակետից, և՛ տնտեսական, և՛ այլ տեսակետներից կարող է իր նպաստը բերել հայրենիքի հարցերի բարվոք լուծման: Եվ այս վերջին երեք տարիներին, այս տագնապալի շրջանին արտաքին սփյուռքը բավարար չափով իր օգնության ձեռքը երկարեց մեր աղետյալ ժողովրդին, մանավանդ երկրաշարժից հետո և մինչև այսօր: Ես այս մասին խոսում եմ հիմա այն տպավորության տակ, որ հենց նոր այդպիսի օգնության, կարևոր մի օգնության առջև ենք գտնվում, ուղակի ճախաձեռնությամբ Միացյալ Նահանգաց Հայ Առաքելական Եկեղեցու արևելյան թեմի Առաջնորդության, թեմական խորհրդի և ժողովրդի, անմիջական ղեկավարությանը ներքո թեմի առաջնորդ Խաժակ Եպիսկոպոս Պարսամյանին, որոնք վերջերս այդ ճախաձեռնությունը հանձն առան և ամերիկյան կառավարության հետ պայմանագիր կնքեցին, որով Միացյալ Նահանգաց Կառավարությունը տրամադրում է 15 միլիոն դոլար, որպեսզի այս ձեռնարկ ընթացքին սննդամթերք ուղարկի Հայաստան՝ աղետյալ շրջաններին, հիվանդանոցներին, զրկյալներին և կարիքավորներին: Նրանք իրենց առաջին առաքումը կատարեցին մի քանի օրեր առաջ, հեռուստացույցից էլ ցույց տվեցին, և եկան այստեղ անձնապես այդ սննդամթերքի հետ Արևելյան թեմի եկեղեցու ներկայացուցիչները հանձնին Հայկազուն

ծ. վրդ. Նաջարյանի և պրն. Զոն Կազիսի, որոնք այստեղ ներկա են հիմա, և ուրիշ չորս ասրկավագների, որպեսզի նրանք անձամբ նաև մասնակցեն այդ սննդամթերքի բաժանման, կազմակերպման և այլ կարգապահական հարցերի, որպեսզի այդ օգնությունները ուղղակի կերպով իրենց նպատակին ծառայեն: Անշուշտ այդ կազմակերպությունը արդեն սկսած է գործել անմիջական գործակցությամբ մեր պետական իշխանության ներկայացուցիչների հետ: Ահա այսպիսով տեսեք միասնության մի սքանչելի ապացույց ևս մեր օրերին, որ ես ուզում եմ ընդգծել: Սա նշանակում է, որ իրապես մեր ազգը, թե՛ մեր երկրում և թե՛ արտասահմանում նույն ժողովուրդն է միասնական, միասին մտածող, միասին ուրախացող և միասին տխրող՝ տվյալ պայմաններում: Եվ մենք մխիթարված ենք իբրև այդ Եկեղեցու ծառայող, որ խորքում թեև երբեմն տաքբեր տպավորություններ ունենում ենք, անցողակի տպավորություններ, բայց հիմնականում, հիմնահարցերում մեր ժողովուրդը մնում է մեկ անբաժան, միասնական, մեկ սիրտ, մեկ հոգի նաև մեկ պայքարի մղված, մեկ բռնկեցրով ամրապնդված, որպեսզի այս դժվարին պայմաններում մեր ազգը հասնի վերջապես իր երազանքների ամբողջական իրականացման, հասնի վերջապես արդարության և խաղաղության նավահանգիստ:

Ահավասիկ այս բարի լուրով ես վերջացնում եմ իմ այսօրվա խոսքը, սիրելիներ, և մաղթում եմ ձեզ բոլորիդ հոգվո և մարմնո քաջառողջություն, ուժ, եռանդ, համբերատար ոգի և միշտ լավատեսություն: Հավատում ենք որ Աստված, մեր հայրերի Աստվածը միշտ կմնա մեզ օգնական, պահապան և մարտակից այժմ և միշտ հավիտյանս հավիտենից, ամեն:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(22 Մարտի 1992 թ.)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

«Տուր զհամար տնտեսութեան քո».

«Տուր հաշիվը քո տնտեսության»:

Ահա այս տողերը կարդում ենք մենք Ս. Ավետարանում՝ արտասանված հենց մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի կողմից հատուկ մի նպատակով, այն է, անդրադառնալ մարդկային բնորոշ մի տկարության, մի թերության, որ մենք կարող ենք կոչել բնչաբաղցություն կամ արծաթասիրություն: Սրա մասին առաջալը արտահայտվում է ասելով, որ «արծաթասիրությունը մարդն է ամենայն չարաց: Ահա այդ չարիքի դեմ ծառանում է ինքը Հիսուս և իր միտքը արտահայտում է մի առակով: Ինչպես գիտեք Նա սովորություն ուներ արտահայտվել առակներով, ամեն մեկ առակով խոսելով մարդկային այս կամ այն թերության մասին: Այս առակը Նրա նշանավոր առակներից մեկն է արտասանված Աստուծո Որդու կողմից 2000 տարիներ առաջ և սակայն իր այժմեությունը չի կորցրել տևապես այս 2000 տարիների ընթացքում, իր այժմեությունը չի կորցրել նաև այսօր մարդկային աշխարհում ամեն տեղ, բոլոր երկրներում, բոլոր ժողովուրդների մեջ, նաև մեր ժողովրդի մեջ: Ահա թե ինչու մենք պետք է անդրադառնանք այս առակին, որպեսզի Հիսուսի համապատասխան պատգամը փոխանցենք մեր եկեղեցու և ազգի զավակներին՝ զգուշացնելով նրանց, որ հեռու մնան անազնիվ գործերից, անիրավ տնտեսություններից, իրենց զուտ անձնական շահի համար: Հիսուս պատմում է, թե մի ժամանակ եղել է մի տանուտեր, որ ունեցել է իբրև գործակատար մի տնտեսվար, նրան հանձնել է իր գործի ղեկավարությունը և ինք բացակայել է մի երկար ժամանակ: Իր վերադարձին սակայն հաստատել է, որ իր տնտեսը, իր գործերի կառավարիչը անազնիվ գործեր է կատարել ի վնաս տանտիրոջ և հօգուտ իր անձնական շահերի և նրան կանչում է և ասում. «Տուր զհամար տնտեսութեան քո» («Տուր հաշիվը քո տնտեսության»): Խիստ նկատողություն է անում նրան և որոշում է հեռացնել այդ անազնիվ մարդուն: Նա՝ տնտեսը ինչքան անազնիվ, սակայն այնքան էլ հնարամիտ և ճարպիկ, պարտատերերի հետ ինչ որ գործարքներ է կատարում ի վնաս տանտիրոջ և հօգուտ իրեն, մի

տեսակ կաշառակերությամբ է զբաղվում, որպեսզի ապահովի իր ապագա կյանքը այս անագինով ձևերով: Նույնիսկ տանուտերը մի պահ զարմանում է այդ տնտեսի հնարամտության, այսպես ասած իմաստության վրա, իմաստություն՝ գործադրված ի չարս: Իմաստություն՝ գործադրված ի չարս իր անձնական շահի համար: Արմատը նույն արժաթափրությունն է, մարդկային մեծագույն թերություններից մեկը, որից պետք է ձերբազատվել: Եվ Հիսուս ավարտում է իր առակը ասելով մի քիչ տխրությամբ երևի, թե այս աշխարհի որդիները ավելի իմաստուն են, քան թե լուստ որդիները, այսինքն քան արդար մարդիկ, որովհետև աշխարհի որդիները, սովորական մարդիկ ընչաքաղց են, եսամոլ են և դրամասեր: Սակայն Հիսուս պատգամում է մեզի չհետևել այդ անիրավ տնտեսների օրինակին՝ դառնալու համար լուստ որդիներ, ազնիվ մարդիկ: Ահա, սիրելիներ, իմաստը այս առակի, որ ինչպես կրկնեցի, այժմեական է նաև մեր օրերի համար, հենց մեր ժողովրդի կյանքին համար: Դժբախտաբար մենք լսում ենք և հաստատում հաճախ, որ մեր ժողովրդի կյանքում, հասարակական կյանքում տեղի են ունենում նման բացասական երևույթներ, անիրավ տնտեսների գործարքներ ի վնաս հաստատության, որին ծառայում են, ի վնաս մեր ժողովրդի տնտեսության, ի վնաս մեր հայրենիքի տնտեսության, մանավանդ այս տագնապալի ծանր օրերին, երբ Արցախի բարձունքներում հայ երիտասարդներ իրենց կյանքն են զոհաբերում, այստեղ մարդիկ կան, որ իրենց անձնական շահերով են հետաքրքրված միայն: Չի կարելի հանդուրժել այսպիսի երևույթ, և ահա Հիսուսի խոսքերով մենք դիմում ենք բոլորին, բոլոր հայերին, ուր որ ծառայելիս լինեն նրանք, ո՛ր հաստատության, ո՛ր հիմնարկության մեջ կրկնելով Հիսուսի հրավերը՝ տուր քո տնտեսության հաշիվը ազնվությամբ և քո իմաստությունը ծառայեցրու ի բարին, ոչ ի չարս, հօգուտ ազգի շահերի, հօգուտ հայրենիքի շահերի:


Սիրելի ժողովուրդ, այս առաջադրանքով մտահոգված է նաև մեր հայրենի կառավարությունը այս օրերին, և այս ամսվա մարտի 3-ին մեր հանրապետության նախագահը հատուկ հրամանագիր հրապարակեց՝ կոչ ուղղելով բոլոր հայերին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որպեսզի նրանցից ամեն մեկը տարին մի անգամ ինչ որ գումար նվիրաբերեն հայրենի վերաշինության գործին: Դուք գիտեք շատ լավ, որ մեր երկիրը տնտեսապես գտնվում է շատ ծանր վիճակի մեջ, պետք է անպայման մտածել բարվոքելու այս կացությունը, և առաջին հերթին մենք՝ հայերս, բոլոր հայերս, Հայաստանում թե արտասահմանում բնակվող, պետք է մեր եկամուտներից, մեր խնայողություններից, մեր տնտեսությունից ինչ որ մի բաժին հաճենք կամավոր կերպով, բաց սրտով, սիրահոժար տրամադրելու հայրենիքի տնտեսական և հոգևոր մշակութային վերականգնման, վերաշինության համար:

Ես անձնապես իբրև առաջին սպասավորը Հայաստանյայց Եկեղեցու պարտք զգացի ողջունելու մեր հանրապետության նախագահի այս հրամանագիրը և կոնդակ հրապարակելու նույն կոչով: Իմ կոնդակը այսօր արտասանվում է Հայաստանյայց Եկեղեցու բոլոր բեմերից և՛ Հայաստանում, և՛ ներքին սփյուռքում, և՛ արտասահմանում: Արտասահմանում թերթերն էլ տպել են իմ կոնդակը և բավական շարժում է առաջ գալիս հայկական մեր գաղութների մեջ, դրական պատասխան տալու մեր հանրապետության նախագահի հրավերին, թե պատրաստ են ամեն մեկը, պատրաստ են իրենց լուծման նվիրաբերելու յուրաքանչյուրն իր կարողության չափով: Պատկե-

լուսքերը, որ մեր ժողովրդի թիվը մոտ 7—8 միլիոն է աշխարհի վրա, եթե ծերերը, երեխաները չհաշվենք, առնվազն մի երկու միլիոն հաշ մարդ կարող է իր լուսման նվիրաբերել, և ես մտածում եմ, որ իրոք, եթե հաջողվի այս ծրագրի գործադրումը, կարող է պահատիլ և սպասելի է, որ տարին շուրջ 100 միլիոն դոլարի գումար նվիրաբերվի Հայաստանի տնտեսական և մշակութային վերաշինության օգտին: Ահա այս է մեր հանրապետության, մեր կառավարության կոչը, այս է նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերը ուղղված մեր եկեղեցու, մեր ազգի բոլոր գավակներին: Ինչպես կոնդակում ես արտահայտվել եմ, այսօրվա պայմաններում ներելի չէ մեզ, որ նման ծրագիր լրիվ կերպով չհաջողվի, անպայման պետք է հաջողվի: Մեր հայրենիքի, մեր հանրապետության անկախ հռչակումը լոկ խոսք պետք չէ մնա, այլ պետք է ամրապնդվի տնտեսական և մշակութային իրագործումներով և վերաշինության մեծ գործերով, որպեսզի մոտ ապագային մեր երկիրը գտնի իր բաբօր կյանքի, իր ազատ, անկախ կյանքի ճշմարիտ ուղին:

Ահավասիկ սիրելիներ, լսենք Հիսուսի խոսքը կրկին անգամ. «Տուր զհամար տնտեսութեան քո», թող ամեն մի հաշ ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի իր տնտեսության հաշիվը տա ազգի և հայրենիքի առջև և իրականանա այս հիմնադրամի գոյառումը և մեր ժողովուրդը, մեր հայրենիքը քաջ առ քաջ առաջադիմի դեպի իր նոր, իր ազատ և բարգավաճ ապագան:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիլն ընդ ձեզ ընդ ամենեւեւանդ». ամեն:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻԶԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԵՅ Բ-ԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ողղափառ Եկեղեցու Պապ և
Պատրիարք, Նորին Սրբություն ՊԱՐԹԵՆԻՈՍ Գ-ԻՆ (Կահիրե),
Երուսաղեմի Ողղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՌԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Ղաթի Ողղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՄԵՐԿՈՐԻՈՍԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս, Նորին Սրբու-
թյուն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Բոթալամ),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍԻՆ (Բուխարեստ),
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի Ասորի Ողղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱԲԶԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),

Անտիոքի և համայն Արևելի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն **ԻԳՆԱՏԻՈՍ Գ.ԻՆ** (Գամաակոս),
Քրեթերերի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտ-
րոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **ՋՈՐՋ ԿԱՐԵՅԻՆ** (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհու-
թյուն **ՎԱՍԻԼԻՆ** (Վարշավա),

Պրահայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհու-
թյուն **ԴՈՐՈՅԵՅԻՆ** (Պրահա),

Գիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՍԱՄՈՍԻՆ (Նիկոզիա),

Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԱՐ ՆԱՍՐԱԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՅԵՅՐԻՆ (Բքերքե),

Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),

Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
Դոկտ. **ՀԵՐՄԱՆ ԳՐՈԵՐԻՆ** (Վիեննա),

Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենա-
պատվություն կարդինալ, **Ժ. Գ. Մ. ՎԻԼԵԲՐԱՆԴՍԻՆ** (Վատիկան),

Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵՆՆ (Փարիզ),

Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԲԵՐ ԳԵԿՈՒՐՏՐԵՆՆ (Լիոն),

Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նո-
րին Գերազանցություն **ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ** (Ռիգա),

Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նո-
րին Գերազանցություն **ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԱՅԻՆ** (Տալլին),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԿԱՐԼՈ ՉԵԿԿԻՏԵԼԻՆՆ (Երուսաղեմ),

Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազ-
նություն **ԿԱՐՈՒՆ ՏՈԹԻՆ** (Պրահա),

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար
դոկտ. **ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ** (Ժնև),

Մխիթարյան ուխտի ընդհանուր քարտուղար Հայր
ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապաշտոն Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՅԵՏ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
հաճութիւն»:

Այսօր գոհություն ենք մատուցում հարձրյալն Աստուծո, որ կրկին բե-
րում է մեզ և համայն մարդկությանը մեծ ավետիսը մանուկ Հիսուսի հրա-
շափառ Ծննդյան՝ ի մխիթարություն մեր հուսացյալ հոգիների:

Ահա այս հույսով և այս ուրախությամբ դիմավորում ենք ավետիսը
Սուրբ Ծննդյան:

Թող մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի կենարար շնորհները առատապես բաշխվեն աշխարհի բոլոր ժողովուրդներին անխտիր, որպեսզի մարդկությունը, փոխադարձ բարի կամեցողությամբ, կարողանա հասնել մավահանգիստը խաղաղության և բարօրության:

Թող Բարերարն Աստված Ձերո՞ւ Սրբությանը պարզևի կենաց երկար և բաջատողջ տարիներ՝ ի գլուխ Ձեր պատմական մեծ Եկեղեցու և Ձեր բոլոր հավատացյալների:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.


ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

* * *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանում Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հա-
նութիւն»:

Այսօր, այո փառք ենք տալիս բարձրյալն Աստուծո, որ վերստին բե-
րում է մեզ բոլորիս և համայն մարդկությանը, մեծ ավետիսը մանուկ Հի-
սուսի հրաշք Ծննդյան ի մխթարություն մեր հուսացալ հոգիների: Մա-
նավանդ մեր Սուրբ Եկեղեցին ու հավատավոր ժողովուրդը մեր, որ ապ-
րում է իր դարավոր պատմության ամենատագնապալի պահերից մեկը իր
Մայր Երկրում, հալացքը դեպի երկինք հառած, օգնություն է հայցում
Աստվածորդուց, որն աշխարհ եկավ որպէս փրկիչ ազգի մարդկան: Ահա
մեր հուշը և մեր ուրախությունը այս օրերին, որով դիմավորում ենք այս
տարի ավետիսը լուսաշող Սուրբ Ծննդյան:

Թող մեր Փրկչին Քրիստոսի կենարար շնորհները առատապէս բաշխ-
վեն Ձերոյ Սրբության, Ձեր Սուրբ Աթոռին, ուխտապահ հոգևոր դասին,
վարչական մարմինների հարգարժան անդամներին ու համայն Մեր հավա-
տացալ զավակներին:

Ամենայն բարիք, սեր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ,
ամեն:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Եղբայրական սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհա-
փառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաշերտ և հարգալից զգաց-
մունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ

մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի սուաշնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրհորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԶԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ

ԴՈԿՏ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ

Ծառ խիստ ձմեռ է անում մեզ մոտ: Գազի և էլեկտրականության տագնապը այն ավելի ծանր է դարձնում: Հատկապես մանկական սննդի և կաթի փոշու կարիք ունենք: Մի քանի շաբաթ առաջ պրն. Նիկո Կոլեմանից տեղեքս էր ստացվել, որով նա ցուցակ էր խնդրում մեզանից: Եթե տակավին հնարավոր է, խնդրում ենք մեզ ուղարկել կաթի փոշի, շաքար, կաքաղ և այլ սննդեղեն: Մեծապես պարտավորված ենք ԵՀԽ-ի կողմից մեզ ցույց տրվող օգնության համար:

Սիրով ի Տեր մեր Հիսուս Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,
17 հունվար 1992 թ.

* * *

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈԶԱՊԱՆՅԱՆԻՆ

Ա. Էջմիածին

Հանում դուկտ. Կաստրոյի պատիվն ունեմ պատասխանելու հունվար 17 թվագրված կոչին Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, որովհետև դուկտ. Կաստրոն այցելությամբ Եթովպիայում է:

Ինձ ուղղված Ձեր նույնական կոչի առիթով արտահայտում եմ մեր խոր մտահոգությունը ձեր ծանր վիճակի համար և կիսում ենք ձեր տանջանքները: Վախենում եմ, որ ոչինչ չկարողանանք անել էլեկտրական տագնապի համար, բայց ես կապվել եմ DDW-ի պրն. Հաննելորի հետ, որպեսզի համատեղ գործողություններ կատարի սննդի այն ցուցակի առթիվ,

որ ուղարկել էիք: Ըստ մեր աշխատանքային համաձայնագրի DDW կօ-
ծանդակի ԵՀԽ ֆոնդը մեծացնելու համար:

Լավագույն մաղթանքներով և եղբայրական սիրով՝

ՆԻԿՈ ԿՈՒԼԵՄԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱԾՏՈՆՅԱ

Ժնն,

28 հունվար 1992 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀՈՒՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Լեռնային Ղարաբաղի շրջանից մեզ հասած լուրերը տխուր են և մտա-
հոգիչ: Խնդրում ենք Ձեզ տեղյակ պահել մեզ իրադարձությունների ըն-
թացքի մասին և հայտնել, թե ինչպիսի խելամիտ գործողությունների կարող
է ձեռնարկել Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը ներկա հանգամանք-
ներում:

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահությունն ու խոր-
հրդակցական կոմիտեն հավաքվելու են Ժնևում 1922 թ. փետրվարի 13-ից
մինչև 18-ը: Սպասում ենք խորհրդակցական կոմիտեի անդամ Ս. Տիրան
Եպիսկոպոսի մասնակցությանը սույն ժողովին, որը նախապատրաստելու
է Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի 10-րդ համագումարը:

Վերոհիշյալ կարևոր հանդիպմանը Ս. Տիրան Եպիսկոպոսի բերելիք
նպաստը անհրաժեշտ է Եվրոպական Եկեղեցիների ներկայացուցիչների
համար, որոնք սպասում են մանրամասն և ճշգրիտ տեղեկություններ ստա-
նալ այժմ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տիրող կացության մա-
սին:

Հայտնելով Ձերդ Սրբությանը Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերան-
սի բոլոր անդամների համերաշխությունը Հայ Առաքելական Եկեղեցու հետ՝
խնդրում եմ ընդունել իմ լավագույն զգացումների հավաստիքը:

Հարգանք՝

ԺԱՆ ՖԻՇԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

Ժնն,

30 հունվար 1992 թ.

* * *

**ԵՀԽ ՆԱԽԱԳԱՀ ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ ԵՎ
ԵԵԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԺԱՆ ՖԻՇԵՐԻՆ**

Ժնն

Գոհունակությամբ ստացանք Ձեր հեռագիրը: Ծնորհակալ ենք, որ ան-
ձամբ Դուք և ԵԵԿ-ի ժողովը այդքան մանրամասնաբար մտահոգված եք

Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության տառապանքներով և պաշտպանում էք հայերի ինքնորոշման իրավունքը: Այս օրերին իրավիճակը չափազանց ծանր է, և եկեղեցական միջազգային կազմակերպությունների խոսքը և ազդու միջոցառումները կարող են կանխել մի մոր համատարած կոտորած Ղարաբաղում:

Մեր ներկայացուցիչ Տիրան եպիսկոպոսը պիտի մասնակցի փետրվարի ձեռ կարևոր ժողովին ի Ժնև և կհաղորդի Ձեզ մանրամասն տեղեկություններ կացության մասին:

Մնում ենք աղոթող, որ Աստված Ձեզ գորացնի և լինի Ձեզ օգնական: Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
31 հունվար 1992 թ.

* * *

ԺՆԵՎԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԸ, ԸՆԴԱՌԱՌԱՋԵԼՈՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԳՐՈՒԹՅԱՆԸ, ԴԻՄԵԼ ԵՆ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ
ՀԵՏԵՎՅԱԼ ՀԵՌԱԳՐՈՎ

Դ. ԲՈՒՏՐՈՍ ՂԱԼԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԱԿ-Ի

Նյու Յորք

Թանկագին Ընդհանուր Քարտուղար,

Խոր անհանգստությամբ իմանում ենք շարունակվող բռնության և վտանգավոր իրադրության մասին Լեռնային Ղարաբաղի երկրամասի տարածքում: Մենք առանձնապես վրդովված ենք տարածքում բախումների լուրերից և դրանց մեծացման հավանականությունից, դրանց հաջորդող չարդի վտանգից անհաշիվելի տառապանքի, որին ենթարկվում է քաղաքացիական անմեղ բնակչությունը: Այս զինված գործողությունները բացահայտ խախտումն են 23 սեպտեմբերին Ժնեվյան լիդսկույում ստորագրված համաձայնագրին, Հայաստանի և Ադրբեջանի միջազգային կողմից: Նաև գազի և երկաթգծի շրջափակումը մեծապես ավելացրին բնակչության դժբախտությունը:

Մենք անմիջապես կոչ ենք անում Ձեզ սաստկացնել և ուժեղացնել Ձեր ջանքերը՝ միջազգայնացնելով կողմերին, կանգնեցնելու ընդհարումը, և հեշտացնել մի բանաձև, որով իրենց տարակարծությունները բանակցությամբ՝ ոչ բռնի միջոցներով լուծեն: Այս գործում Դուք կարող եք վստահել մեր անդամ եկեղեցիների օժանդակությանը, ինչպես նաև բոլորին, որոնք մեծացող անհանգստությամբ են հետևում բազմաթիվ ոճիրներ կատարվող մարդկային իրավունքների ոտնահարումները այդ տարածքում: Նկատի ունենալով մեր երկարամյա և մոտ հարաբերությունները Հայ Առաքելական Եկեղեցու հետ, մեր անդամ եկեղեցիներից մեկը և մեր հետևողական մտահոգությունը այդ տարածքի բոլոր ժողովուրդների համար,

մենք պատրաստ ենք օգնելու որևէ ձևով որ մենք կարող ենք՝ խաղաղության և կայունության բերելու այդ անհանգիստ տարածքաշրջանին:

Հարգանք՝

ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ

ԽՈՐՀՐԴԻ

ԺԱՆ ՖԻՇԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

5 փետրվար 1992 թ.

* * *

ՌՈԼՖ ԿՈՊՊԵԻՆ ԵՎ ՆԻԿՈԼԱՍ ՈՒԻՐՎՈԼԻՆ

Գերմանիա

Ստացանք Ձեր հեռագիրը՝ որոշ անընթեռնելի տողերով, հասկացանք սակայն, որ խոսքը վերաբերում է պրն. Ծպելդինգի հետ մեր ունեցած տեսակցության՝ մի շաբաթ առաջ: Ողջունում ենք Ձեր առաջարկը: Ինչպես հայտնեցինք պրն. Ծպելդինգին, պատրաստ ենք մի պատվիրակություն ուղարկել Ֆրանկֆուրտ: Սակայն կարծում ենք, որ նախօրոք պետք է ճշտվի հստակ կերպով հանդիպման նպատակը և օրակարգը: Մանավանդ որ Լեոնային Ղարաբաղի տագնապը որևէ կրոնական բնույթ չի կրում և Հայ Եկեղեցու ու մահմեդական կրոնի միջև անհասկացողություններ չկան: Այսօր էլ Մենք պատրաստ ենք խաղաղության կոչ ուղղելու մեր երկու ժողովուրդներին, ինչպես արեցինք 1989-ին, Ռոստով քաղաքում ստորագրելով նման մի կոչ Բաքվի Ծելյս ու Իսլամի հետ Սումգայիթի հայերի կոտորածից հետո: Ինչ վերաբերում է Ղարաբաղյան հարցին, դա քաղաքական հարց է և ազգային ինքնորոշման, որի լուծման համար այս օրերս հատուկ պատվիրակություն է գնացած ալանդ՝ Եվրոպայի Անվտանգության Կոնֆերանսի կողմից պաշտոնապես: Վերջերս Եվրոպական Պառլամենտը նույնպես ընդունել է համանման մի որոշում: Նույն հարցով մի քանի օրեր առաջ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղարներ Էմիլիո Կաստրոն և Ժան Ֆիշերը դիմած են ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին, քաղաքական խաղաղ լուծում գտնելու համար:

Առաջարկում ենք սպասել մի քանի շաբաթ վերոհիշյալ միջոցառումների արդյունքին և ապա սպրիլ ամսի մեջ տեղի ունենա Ֆրանկֆուրտի հանդիպումը հստակ օրակարգով: Աղոթում ենք, որ Աստված մի ճանապարհ բացի խաղաղ լուծման Ղարաբաղյան ողբերգության:

Սպասում ենք Ձեր պատասխանին անգլերեն կամ ֆրանսերեն լեզվով: Ծնորհակալ ենք Ձեզ մարդասիրական վերաբերմունքի համար: Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,
15 փետրվար 1992 թ.

* * *

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ ԵՎ ԺԱՆ ՖԻՇԵՐԻՆ

ԺԱՆ, Շվեյցարիա

Երախտապարտ արտով կարդացինք Ձեր հեռագիրը, որով կհաշտնեիք Մեզ, թե ընթացք տալով Մեր խնդրանքին, դիմած եք Մ. Ազգերի կազմակերպության ընդհանուր քարտուղարին՝ կոչ անելով նրան, որ ինք ն Մ. Ազգ. կազմակերպությունը պաշտպան կանգնի Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության հանուն մարդու իրավունքների և ազգությունների ինքնորոշման իրավունքներին:

Ձեր հեռագիրը հրատարակվեց Հայաստանի մամուլում ի մեծ մխիթարություն հայ ժողովրդի:

Ծնորհակալ ենք Ձեր քրիստոնեական գույթի և մարդասիրական զգացումների համար: Կխնդրենք շարունակել Ձեր ազդու միջոցառումները՝ փրկելու համար մոտ երկու հարյուր հազար հայ քրիստոնյաների դժոխսին պայմաններից:

Աստված սիրո և խաղաղության եղիցի ընդ ձեզ. ամեն:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
17 փետրվար 1992 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահությունը և խորհրդատվական կոմիտեն, ժողով գումարելով Ժնևում, արտահայտում են իրենց խոր երախտագիտությունը Ձեր ուղերձի համար Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի ընդհանուր քարտուղարներին, ինչպես նաև Ձեր օրհնության համար:

Այս միացյալ ժողովի անդամները ամբողջ Եվրոպայից, վստահեցնում են Ձեզ և Անդրկովկասի շրջանի բոլոր քրիստոնյա հայերին, որ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը պիտի շարունակի մասնակցել և պաշտպանել հայ բնակչության օրինական իրավունքները Լեռնային Ղարաբաղում՝ Արցախում: Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը շարունակելու է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հետ միասին, քրիստոնեական կարեկցության ոգով Էկումենիկ օգնություն բերել հայ բնակչության և միջնորդել միջազգային կազմակերպությունների մոտ՝ օգնել փրկելու համար կյանքերը հարձակման ենթարկվող հայ ժողովրդի: Ձեր ներկայացուցիչ գերաշնորհ Ս. Տիրան եպիսկոպոսից միացյալ ժողովում ստացանք առա-

վել խորապես ցնցող և անհանգստացնող տեղեկություններ՝ Ստեփանակերտի կրկնվող ումբակոծումների մասին: Մենք սգում ենք սպանված մարդկանց ընտանիքների հետ, աղոթում և որոնում ենք արդյունավետ ուղիներ՝ հասնելու համար կայուն խաղաղության, հաշտության և արդարության հայ քրիստոնյա համայնքին, որը հալածվել է դարեր շարունակ:

Մենք վճռական կերպով բողոքում ենք կատարվող բոլոր ումբակոծումների և բռնությունների դեմ, քաղաքային բնակչության վրա կատարվող հարձակումների դեմ և գտնում, որ մահն միջոցներ որևէ կողմից պետք չէ օգտագործվեն քաղաքական կոնֆլիկտները կարգավորելու համար: Մենք կողմնակից ենք այդ հարցերը լուծելու քաղաքական բանակցությունների միջոցով՝ միջազգային հովանավորության ներքո:

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը պատրաստ է միջնորդել CSCE-ի մակարդակով և պատրաստակամ է նպաստել հաշտեցման տանող հանդիպումների:

Թող մեր Տերը մեզ շնորհի իր խաղաղությունը և արժանացնի մեզ լիներու դեսպանները հաշտեցման: Թող մեր Տերը հավիտենական հանգիստ տա զոհվածների հոգիներին և մխիթարություն իրենց ընտանիքներին: Ամեն:

Հանուն միացյալ ժողովի՝

ԶՈՆ ԱՌՆՈՂԴ

ԵՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

ԺԱՆ ՖԻՇԵՐ

ԵՆԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

21 փետրվար 1992 թ.

* * *

ԴԻՏՐԻՒՆ ԸՊԵՐՈՒՆԳԻՆ

Գոհունակությամբ կարդացինք Ձեր վերջին հեռագիրը: Գնահատում ենք Ձեր բարի կամեցողությունը: Որոշած ենք Ֆրանկֆուրտ ուղարկել Մայր Աթոռի պատվիրակությունը՝ բաղկացած երեք եպիսկոպոսներից և մեկ աշխարհական խորհրդականից, մարտի 12-ի շուրջ հանդիպում ունենալու Ադրբեյջանի հոգևորականաց պատվիրակության հետ, Աստվածահաճո նպատակով, որ երկու պատվիրակությունները համերաշխ ու միախորհուրդ խմբագրեն ու հրապարակեն մի կոչ՝ ողղյալ Հայաստանի, Ադրբեյջանի և Լեռնային Հարաբաղի կառավարություններին ու ժողովուրդներին, հրավեր կարդալով բոլոր կողմերին, որ անհապաղ դադարեցվեն զինյալ բախումները, որ վերացվեն շրջափակումները, որ Հարաբաղյան հարցը գտնի մի քաղաքական արդար լուծում, խաղաղ ճանապարհներով, բանակցությանց միջոցով, և շուտով կարելի լինի մարդասիրական օգնություն ցուցաբերել աղետյալ բնակիչներին:

Մեր պատվիրակության անդամները լիներու են Ներսես արքեպիսկոպոս Պողոսյան, Գրիգորիս եպիսկոպոս Բունիաթյան, Լեռնային Հա-

րաբաղի առաջնորդ Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյան և օրինորդ Լարիսա Ալավերդյան:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

* * *

ԶԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Դոկտ. Ուիրվուլի և Կոպպե եպիսկոպոսի անունից պատասխանում եմք Ձեր 17 փետրվարի հեռագրին:

Զեզ պատասխանելու համար մենք սպասեցինք մինչև փետրվարի 21-ի առավոտյան՝ տեղեկություններ ստանալու ժնկից (Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից) և Պրագայից (Եվրոպայի Անվտանգության դիտորդների խմբից) և Լեյդի Կոքսից ու դոկտ. Բալայանից, որոնք հենց նոր այցելեցին Բոնն: Ապրեցինք արագորեն վատթարացող իրավիճակի տպավորության տակ. չա Լեյդի Կոքսին և Գերմանիայի Բունդեստագի նախագահի երկու տեղակալներին, որոնց նա հանդիպեց, մղեց խնդրելու, որ գործենք մի քանի օրում, ոչ շաբաթներում: Մոսկվայից լուրերը այս առավոտ մի փոքր հույս բերեցին՝ տեղեկացնելով արտաքին գործերի նախարարների համաձայնության մասին Ղարաբաղում կրակը դադարեցնելու վերաբերյալ:

Այնուամենայնիվ, անհրաժեշտության մասին համաձայնությունը կրակը դադարեցնելու համաձայնություն չէ: Որով մենք գտնում եմք, որ կոնֆերանսը կամ ժողովը, որը մենք հրավիրել եմք, հրատապ է: Բացի այդ, Բաքվի աչքին մենք կկորցնենք լավ հավատքը, եթե մենք փորձենք հետաձգել ժողովը: Մենք խոստացանք Օեյխ ու Իսլամին, որ մենք ողջունելու ենք նրան որևէ առիթով՝ Ղարաբաղում խաղաղությունը հաստատելու նախաձեռնող մի ժողովի համար: Ուստի մենք ակնկալում եմք ադրբեջանական կողմի գալը, որովհետև նրանք որևէ բան անելու ճնշման տակ են զգում իրենց: Եվ եթե նույնիսկ կրակի դադարեցումը հաստատվի մարտի սկզբին, մենք լավ գաղափար կնկատենք խոսելու միացյալ ջանքերի մասին, երկու կողմերի մարդասիրական օգնության համար և բերելու դիտորդների միացյալ խմբեր՝ այլակրոն տարբեր երկրներից: Այս պահին մենք աշխատում ենք այս գաղափարի վրա՝ զարգացնելով այնպես, որ Լեյդի Կոքսի հետ միասին ունենանք արևմտաեվրոպական երկրների պարլամենտականներ, Թուրքիան և մի այլ իսլամական տերություն՝ գլխավորությամբ չեխոսլովակ կոլլեգայի, ճանապարհորդելու Բաքու, Ղարաբաղ և Երևան:

Ֆրանկֆուրտի ժողովի օրակարգը կարող է բովանդակել նաև այնպիսի գործողություններ և համադրել դրանք մարդասիրական օգնություն բերելու և երկու կողմերի ավերված քաղաքների ավերածությունները վերա-

կառուցելու ջանքերի հետ, ինչպես Ղարաբաղում, մաս շրջակայքում, որտեղ որ վնաս են կրել պատերազմից:

Թերևս կրակը դադարեցնելուց հետո, որ արտաքին գործերի նախարարները համաձայնվել են, սակայն մույն դժվարությունները մնան այն նպատակին հասնելու համար, այնպես, ինչպես նախկին համաձայնություններից հետո եղան:

Ֆրանկֆուրտի օրակարգը կարող է բովանդակել միջոցների որոնումը, որոնք կարելի է միասին հաստատել՝ երկու կրոնների համայնքների կողմից՝ շարժվելու համար այս նպատակի ուղղությամբ:

Մենք դեռևս չգիտենք, թե Պրագայի Անվտանգության Խորհրդի դիտորդների զեկուցագիրը ինչպիսի առաջարկներ պիտի ներկայացնի: Բայց բոլոր նախատեղեկությունները Պրագայից հավանական են համարում, որ նրանք պիտի ողջունեն որևէ գործողության, որ կօգնի ստեղծելու այնպիսի մի կլիմա, որ կառաջնորդի համագործակցության երկու պատերազմող կողմերի միջև: Պրագայի զեկուցագրում շահողներ և կորցնողներ պիտի չլինեն, դիտելով փաստերն ու ընդհարման սկիզբը:

Մենք խնդրում ենք Ձեզ ողարկել մի պատգամավորություն՝ մասնակցելու այս կնոֆերանսին: Մենք հուսով ենք, որ Դուք կողարկեք նրանց անուններն ու ծննդյան թվականները (հոգալով նրանց առողջության ապահովագրումը նրանց այստեղ մնալու ընթացքին) հնարավորին չափ շուտ: Մենք դրանք պիտի ողարկենք Մոսկվայում գերմանական դեսպանին: Ես խոսեցի նրա հետ Մոսկվայում այնտեղից վերադառնալիս, և մա խոստացավ իր գործակցությունը՝ փզաները արագ տալու համար: Թերևս պրն. Մամիկոնյանին, Մոսկվայում Հայաստանի ներկայացուցչին, խնդրվի նախապես ձեռք բերել անհրաժեշտ դիմումները և ապահովել Գերմանիայի դեսպանին, որ ուշացում չլինի:

Մենք մույնպես խնդրել ենք Մոսկվայում Ֆրիդրիխ-Երերտ-Հաստատության մեզ տալ անպաշտոն օգնություն, եթե անհրաժեշտ լինի հաղորդակցական գործընթացների համար: Օրինակ, շաբաթավերջին...:

Մենք հուսով ենք ողջունելու Ձեր պատվիրակությունը մույնպես և խնդրում ենք Ձեզ նկատի ունենալ մեր շարժառիթները՝ օգնելու, որ հասնենք կրակի դադարեցմանը և խաղաղության, մարդասիրական օգնության և վերակառուցում բերելու ջանքերի անկեղծության:

Դուք. Ուիրվուլի և Կոպպե եպիսկոպոսի անունից՝

Անկեղծորեն Ձեր՝

ԴԻՏՐԻՆ ԵՊԵՐԼԻՆԳ

22 փետրվար 1992 թ.

* * *

ԴԻՏՐԻՆ ԵՊԵՐԼԻՆԳԻՆ

Գերմանիա

Այսօր շնորհակալությամբ ստացանք Ձեր տեղեքը Ֆրանկֆուրտի Կոնֆերանսի մասին: Մենք հմակացանք, որ Մեր երեկվա հեռագիրը չեղյալ է

հայտարարվում: Ծառ շուտով Ձեր տեղեքսը վերլուծելուց հետո, Մենք կուղարկենք Մեր պատասխանը:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,

23 փետրվար 1992 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ինչպես Դուք տեղյակ եք, անցյալ տարվա հունիսին Ձեզ այցելած մեր պատվիրակությունից ստացված հանձնարարականներին հետևյալը օգնեց, որ հայ ժողովրդի հետ երկարատև Էկումենիկ համերաշխությունը խորացման մի նոր մակարդակի հասնի: Անդամ Եկեղեցիներին տրվեց լայնածավալ տեղեկություն Լեոնային Ղարաբաղում տիրող ճգնաժամային կացության մասին: Տեղեկություն տրվեց Միացյալ Ազգերի Կազմակերպության Մարդկային Իրավունքների կենտրոնին և համապատասխան ոչ-կառավարական և միջազգային մարմիններին:

Կացությունը Լեոնային Ղարաբաղում շարունակում է մեծապես մտահոգել մեզ: Այդ մտահոգությունը, որ մեզ մղեց ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին կոչ անել անհապաղ գործելու, նույնպես պատճառ դարձավ, որ անմիջապես կազմվի հաստիքային անձնակազմի մի խումբ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսից, առաջարկելու և համակարգելու համար հետագա Էկումենիկ նախաձեռնությունները:

Այս խմբի դերերից մեկն է հետևել և նպաստել, որ զարգանան ներկայիս կատարվող այլ և այլ խաղաղության և հաշտության ջանքերը: Նրանք քաջալերում են միջազգային տեղակության և հետաքրքրության աճի նշանները: Հուսով ենք և աղոթում ենք, որ այս ջանքերի պտուղը լինի բանակցությամբ մի հաշտություն՝ շատ շուտով: Բայց մենք միաժամանակ տեղյակ ենք, որ ընթացիկ նախաձեռնություններից մի քանիսը մրցակցության մեջ են ուրիշների հետ և նրանցից շատերը թվում է, թե ղեկավարվում են դրսի ուժերի շահասիրությամբ:

Մենք ուզում ենք շարունակել ճնշում բանեցնել, որ Լեոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնակառավարման և ինքնորոշման իրավունքը որևէ և բոլոր հաշտության կամ բանակցության ջանքերի կենտրոնում լինի:

Այս բանը վստահորեն և արդյունավետ կերպով անել կարողանալու համար մենք զգում ենք, որ կարևոր է հնարավորին չափ շուտ այցելել Ադրբեջան և Մոսկվա՝ տեղեկություններ հավաքելու, ստուգելու փաստերը և, յուսումնասիրելու այն հնարավոր դերը, որ մեր ունեցածի նման Էկումենիկ մարմինները պիտի ունենան՝ հասնելու համար մի արագ և կայուն կարգավորման:

Դուք անցյալ հունիսին քաջալերեցիք մեր պատվիրակությունը այսպես գործելու համար, բայց մենք փափագում ենք խորհրդակցել Ձեզ հետ նախքան մեր վերջնական ծրագիրը կազմելը և ունենալ Ձեր իմաստուն խորհուրդը՝ նախքան մենք սկսենք պատրաստել վերջնական ծրագրերը: Այժմ մենք մտածում ենք՝ Սանտյագոյում (Չիլի) եկող ամսին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գործադիր Կոմիտեի ժողովից անմիջապես հետո, ողարկել մասնագետների մի փոքր խումբ: Իհարկե, պատվիրակությունը պիտի փափագի այցելել Ձեզ՝ իր ճանապարհորդությունից բերած եզրակացությամբ, Ձեզ տեղեկացնելու և խորհրդակցելու Ձեզ հետ իր հետագա քայլերի մասին:

Մենք շատ ու շատ երախտապարտ կլինենք շարունակ ունենալու Ձեր քաջալերանքը և խորհուրդները:

Ձերդ ի Քրիստոս՝

ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՏՈՒՂԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Պատաններ՝

Պրն. Ժան Ֆիշերին,

Ընդհանուր քարտուղար

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի

28 փետրվար 1992 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Հաճեցեք չանհանգստանալ մեր հաստատականությունից. սա Ֆրանկֆուրտի կոնֆերանսի մեր հրավերի վերահաստատումն է.

1. Մենք առաջարկում ենք հանդիպել Ֆրանկֆուրտում կա՛մ մարտի 27-ից 29-ը, կա՛մ մայիսի 22-ից 24-ը:

2. Մենք նորից հրավիրում ենք մինչև 10 անձեր 7 օրով ճամփորդելու առավել հարմար կարգադրություններ անելու, պաշտոնական կոնֆերանսը երկարաձգելու, կամ այն լրացնելու անձնական առանձին խոսակցություններով:

3. Որպես նյութ այս կոնֆերանսի, մենք նորից առաջարկում ենք՝ միացյալ ջանքեր Ղարաբաղի խաղաղության համար:

4. Ֆրանկֆուրտի կոնֆերանսի իսկապես տեղի ունենալու հավանականությունը ավելացնելու համար, մենք առաջարկում ենք մի նախապատրաստական հանդիպում:

5. Այս նախապատրաստական հանդիպումը կարելի է անել Սանկտ-Պետերբուրգում մարտի 15-ին (երեկոյան) մինչև մարտի 16 (կեսօր), շուրջ 12 ժամ: Այդ ժամանակամիջոցի համար երկու կողմերը կարող են համա-

ձայնության գալ: Այդ ժամանակ պրն. Ուիրվոլլը ամեն կերպ պիտի լինի Սանկտ-Պետերբուրգում: Պրն: Ծպերլինգը կամենում է գնալ այնտեղ 12 ժամով՝ հաստատված նախապատրաստական ժողովի համար:

6. Նախապատրաստական ժողովին ներկա պետք է լինի մեկական անձ յուրաքանչյուր կողմից (այլ առաջարկներ կարող են լինել):

7. Նախապատրաստական ժողովը ազատ պետք է լինի քննարկելու որևէ այլընտրական կամ լրացուցիչ առաջարկ՝ տեղի կամ թվականի կամ նյութի վերաբերյալ:

8. Նախապատրաստական ժողովը պետք է քննարկի առավել մասնահատուկ թելադրանքներ Ֆրանկֆորտի կոնֆերանսի օրակարգի համար: Օրինակ՝ միացյալ ջանքեր՝ վերակառուցման համար օգնություն բերելու Ղարաբաղ:

9. Յուրաքանչյուր կողմ պետք է ազատ լինի անելու հավելյալ առաջարկներ նախապատրաստական կոնֆերանսի համար:

10. Յուրաքանչյուր կողմ պետք է անմիջապես հաղորդի պրն. Ծպերլինգին իր կեցվածքի և կամ կոնֆերանսի և նախապատրաստական ժողովի վերաբերյալ որոշումների մասին: Պրն. Ծպերլինգը առանց ուշացնելու պիտի հաղորդի երկու կողմերից յուրաքանչյուրի կարծիքը մյուս կողմին:

Դոկտ. Ուիրվոլլի և Կոպպե եպիսկոպոսի անունից ես խնդրում եմ Ձեր բարյացակամ նկատառությունը մեր առաջարկների վերաբերյալ:

Լավագույն մտղթանքներով՝

Անկեղծորեն Ձեր՝

ԴԻՏՐԻՍ ԵՊԵՐԼԻՆԳ

ԱՆԴԱՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՒՆԴԵՍԱԳԻ

29 փետրվար 1992 թ.

* * *

ՊԱՐՈՆ ԴԻՏՐԻՍ ԵՊԵՐԼԻՆԳԻՆ

Ամ Ռաբենշտայն (Գերմանիա)

Ընդհակադրություն մարտի 14-ի Ձեր տեղեքսի համար: Նորին Սրբություն Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունում է Ձեր առաջարկը Սանկտ-Պետերբուրգում հանդիպելու Ծեյխ ու Իսլամ Փաշազադեի հետ մարտի 21-ին և 22-ին կամ դրանից հետո: Սպասում ենք Ձեր պատասխանին:

Լավագույն մտղթանքներով՝

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

ԴԻՎԱՆԱՊԵՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ս. Էջմիածին,
14 մարտի 1992 թ.

* * *

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱՅԱՆԻՆ

Ս. Էջմիածին

Սիրելի Պոգապայլան,

Ծնորհակալություն Ձեր հեռագրի համար, որ ես գտա տանը Բոննից վերադարձին մարտի լույս 14-ի կեսգիշերին:

Մի քանի լույս հետո զանգահարեցի Բաքու (մարտ 14 ժամը 16.10, տեղական ժամանակով): Անձը, որի հետ խոսեցի, բացատրող է, որ մաս չի կազմում մզկիթին: Նա պիտի փորձի զանգահարել Ծելխ ու Իսլամ Փաշա-զադեին և հետո ինձ տեղեքս ուղարկել: Բայց մենք նայեցինք օրացույցին և իմացանք, որ Ծելխ ու Իսլամը ուզում էր Սանկտ-Պետերբուրգ գնալ միայն մարտի 15-ին և 16-ին, որովհետև շաբաթվա մնացած օրերին նա պետք է վերադառնար Բաքու՝ մասնակցելու Գերագույն խորհրդի սեսիային: Ուստի կարծում ենք, որ Վազգեն Ա. կաթողիկոսի հետ հանդիպումը կարող է կազմակերպվել միայն շաբաթավերջին՝ մարտի 21-ին և 22-ին կամ դրանից հետո:

Ես հույս ունեմ, որ այս կեսօրից հետո կկարդամ Բաքվի պատասխանը Էջմիածնին: Հետո ես անմիջապես տեղեքսով այն կհաղորդեմ Ձեզ*: Փորձեցի Ձեզ զանգահարել, բայց ասացին ինձ, որ ճամփորդել եք Լիբանան: Հույս ունեմ, որ որևէ մեկը Էջմիածնում այս գրությունը և այն, ինչ պիտի ուղարկեմ կեսօրից հետո, կփոխանցի այն անձանց, ովքեր զբաղվում են այս հանդիպումով:

Ծնորհակալության և լավագույն բարեմաղթություններ Էջմիածնին:
Սիրով Ձեր՝

ԳԻՏՐԻՍ ՇՊԵՐԼԻՆԳ

ԱՆԴԱՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՒՆԴԵՍԱԳԻ

* Նամակում խոստացված տեղեկությունը չստացվեց Մայր Աթոռում, ընդհատվեց նախաձեռնությունը և հանդիպումը տեղի չունեցավ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ





ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1991 թվականի դեկտեմբերի 31-ն է: Տարեմուտ: Եվս մի քանի ժամ, և կսկսվի նոր տարին՝ իր հետ բերելով նոր հույսեր, նոր իրագործումներ, նոր տեսիլքներ:

Ահա այս հույսով ու հավատքով Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, պատմական Ղազարապատի շքեղորեն զարդարված միաբանական սեղանատանը հավաքվել են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, թեմակալ առաջնորդներ, վարդապետ և քահանա հայրեր՝ տարբեր վանքերից ու եկեղեցիներից, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և Մայրավանքի պաշտոնեությունը:

Ահավասիկ, փառք տալով Աստծուն ներկաները միաբերան արտասանում են Տեղումական աղոթքը: Նորին Սրբությունը օրհնում է բարիքներով լի տոնական սեղանը:

Հնչում են Հայաստանի Հանրապետության օրհներգը և հոգևոր ճեմարանի քայլերգը, որից հետո Ե լսարանի սան Համլետ սրկ. Մեհրաբյանը կարդում է մի հատված Ա. Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» գրքից: Այնուհետև հանդիսավոր երեկոյի բացման ու շնորհավորանքի խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,
հարգելի անդամք Գերագույն Հոգևոր Խորհրդի,
սիրելի դասախոսներ, հյուրեր և շատ սիրելի սաներ.

Եվս մի քանի ժամ, և պատմության գիրկը կանցնի անցնող՝ 1991 թվականը:

Որքան հույզեր ու ապրումներ քերեց այն մեր ժողովրդին: Դարերով իր անկախությունը կորցրած հայ ժողովուրդը այսօր, լայնածավալ կայսրության փլուզումից հետո, կարողացավ իմաստուն կերպով դեկլարել իր նավը և բազում ավելոծությունների միջով քերել այն անկախության և խաղաղության նավահանգիստը տանող ճանապարհը:

Ծիշտ է, դեռ վերքերի մեջ մոռնում է վիրավոր աշուն-Արցախը, դեռ փոքրիկ Հայաստանը, Աստծո հրաշք տեսքով ստեղծված այս անգին գոհարը, երբեմն-երբեմն ստիպված է լինում պաշարի ելնելու՝ ետ մղելու համար բարբարոս ու լկտի հարևանի ոտնձգությունները իր սահմաններից ներս, դեռ զգալի կերպով մեր կյանքում իրենց դաժան գործն են անում շրջափակումն ու երկրի տնտեսական վատ կացությունը, սակայն այսօր ավելի ու ավելի հաստատուն են դառնում մեր հրաշամանուկի՝ Հայաստանի Հանրապետության քայլերը: Ծնորհիվ իմաստուն իր դեկլարության նրբորեն տարվող քաղաքական աշխատանքի, քաղաքակիրթ աշխարհը սկսում է ճանաչել արդեն մեր երկիրը, հարգել ու գնահատել նրա ժողովրդի խիզախությունն ու անհողողող կամքը՝ ապրելու ազատ ու կանգնած և ոչ թե ծնկի իջած՝ ստրուկի նման:

Ինչ կերի մեզ եկող՝ 1992 թվականը: Դժվար է կանխավ ասելը, առավել ևս՝ գուշակելը: Մաղթենք միայն, որ այն քիչ հոգսեր, չարչարանքներ ու մտահոգություն պատճառի մեզ:

Հայ Եկեղեցին ևս, ինչպես բոլոր ժամանակներում, անցնող տարի նույնպես անմասն չմնաց մեր ժողովրդին բաժին հասած քաղաքական անցքերից: Ամենայն Հայոց իմաստուն Հայրապետի դեկլարությամբ, մեր Սուրբ Եկեղեցին կարելին արեց՝ օգտակար լինելու համար մեր ազգին: Դրանք և՛ կոչեր էին, և՛ իմաստուն խորհուրդներ, և՛ Հայրապետական կոնդակներ ու գրություններ և՛, անշուշտ, նյութական ու դրամական օգնություններ:

Ու թեև մեր Եկեղեցին, անկախ ժամանակներից, միշտ էլ հարգի է եղել հայրենի կառավարությանց մոտ, սակայն այս օրերին Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները դրական իմաստով հասան իրենց ամենաբարձր մակարդակին: Դրա վառ ապացույցը եղավ Խորհրդարանի կողմից նոր ընդունված խղճի ազատության մասին օրենքը: Մնում է մաղթել միայն, որ այդ հարաբերությունները զնալով է՛լ ավելի սերտանան, ու պետություն-Եկեղեցի դաշինքը առաջնորդի հայ ժողովրդին դեպի նորանոր բարձունքներ:

Վեհափառ Տեր, Ամանորի այս խաղաղ երեկոյին, հանուն հոգևոր ճեմարանի տեսչական, դասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողության անունից թույլ տվեք շնորհավորել Ձեր Նոր տարին և գալիք Ս. Ծնունդը:

Ի սրտե մաղթում ենք Ձերդ Սրբությանը բազում լուսաշող տարիներ, որպեսզի Դուք, որպես բարի և արդար Հովվապետ, անմիբն աչքով հսկեք Ձեզ վստահված հոտին: Ինչ վերաբերում է մեզ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սպասավորներին, ապա մենք պատիվ ենք համարում ու հպարտ ենք, որ մեր աչքերի առջև ունենք Ձեր անձի օրինակը: Թող այն ոգեշնչի մեզ բոլորին՝ մեր ժողովրդին ծառայելու սուրբ գործում:

Վաղվանից սկսյալ է՛լ արև ու լույս ենք մաղթում Ձեզ՝ Ձեր առաքելագործ ճանապարհին:

Թող է՛լ ավելի ծաղկի ու պայծառանա մեր Մայր Եկեղեցին իմաստուն

Հովվապետիդ ղեկավարության ներքո, ու Ջեզնով, Ջեր անձով միախառնվի մեր բազմաշարչար ու սուրբ ժողովուրդը:

Սիրելի ներկաներ ու ուսանողներ, թող բարին Աստված, 1992-ի շեմից սկսյալ, հոգեկան միախառնություն տա ձեզ, ձեր հարազատներին ու մեծ համբերություն՝ գալիք երջանկություն բերողի դերում տեսնելու համար: Իսկ ձեզ, սիրելի սաներ, թող Տերը պարզի մեծ եռանդ ու աշխատասիրություն՝ ձեր ուսումնառության ճանապարհին: Դուք եք վաղվա գալիքը, ձեր անձի մեջ պիտի տեսնենք մեր ժողովրդի և մեր եկեղեցու ապագան: Ուրեմն եղեք մաքուր անոթ՝ կրելու համար Ս. Հոգու շնորհները:

Այս մտածումներով ու խոհերով առաջնորդված, թույլ տվեք, Վեհափառ Հայր, համբուրելու Ջեր Ս. Աջը և ասելու՝

«Շնորհավոր Նոր տարի և Ս. Ծնունդ»:

Տեսուչ արքայան հոր խոսքից հետո հոգևոր ճեմարանի սաները երգում են Ս. Մեսրոպ Մաշտոցի ապաշխարության շարականների մի փունջ: Ապա բարեշնորհ Համլետ արկ. Մեհրաբյանը և Ա. լսարանի սան Էդվարդ Մելքոնյանը արտասանում են մի հատված Ս. Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն»-ից: Այնուհետև Դ. լսարանի ուսանող Վազգեն Գալստյանն արտասանում է Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը, և հոգևոր ճեմարանի ուսանողությունը կրկին ոտքի կանգնելով երգում է Մ. Եկմալյանի «Ով Հայոց աշխարհ» և Տիգրան Չոխասյանի «Լեբլեբիջիներ» գեղեցկահունչ երգերը: Հանուն ուսանողության Վեհափառ Հայրապետին և ներկաներին ողջված շնորհավորական խոսքով հանդես է գալիս Ե. լսարանի սան Վարուժան արկ. Տերտերյանը:

«Հրաժեշտի և սպասման ապրումներով են համակված մեր բոլորի հոգիներն ու սրտերը տարեմուտի շեմին:

Մի քանի ժամ ևս՝ և դեպի հավիտենականություն տանող ժամանակը մեր առջև կպարզի 1992 թվականը, որ լի է հույսերով ու ակնկալիքներով, ուսման ու գիտության անդաստանում խորամուխ լինելու մեր ձգտումներով:

Մեկտեղված այստեղ՝ արբաշումն ու լուսավոր այս հարկի տակ, Արարատյան մայր աշխարհի բերք ու բարիքով առատ այս սեղանների շուրջ, մեր մտածումները կարծես ճուշմանում են, դառնում հաշվառու և պահանջող զհամար տնտեսության:

Մեր ազգի համար այս անբարենպաստ ժամանակներում իր ժողովրդի կամքն ու հավատքը իր արարչին կապելու, ապագայի համար համեստ կարողությունների փորձ կուտակեց հոգևոր ճեմարանի ուսանողությունը: Որպես մասնակիցներ մեր պատմություն ու ապագա կերտող հայ ժողովրդի՝ որպես հոգևոր արի զինվորներ՝ մեր աղոթքներն ենք վերադառնում առ բարձրյալն Աստված, որպեսզի հարատև խաղաղության մեջ պահի մեր հայրենիքն ու ժողովրդին:

Վեհափառ Տեր, թույլ տվեք հանուն ուսանողության շնորհավորել Ջերդ Սրբության Նոր տարին: Մաղթելով նաև, որ մեր Տերը Հիսուս Քրիստոս երկար կյանք պարգևի Ջերդ Սրբությանը լուսավորչահաստատ Ջեր գահի վրա, սեփական աչքերով տեսնելու նորաստեղծ մեր պետության լիակատար և հաղթական անկախությունը»:

Ապա հոգևոր ճեմարանի Դ լսարանի ուսանող Գեղամ Տիգրանյանը կարդում է Ս. Նարեկացու «Մատյան ողբերգության» Հ գլուխը: Ծեմարանի սաների կատարմամբ հնչում է Ս. Մովսես Խորենացու «Աստվածածին երկնային» ու «Մատագայթ և կերպարան» հոգեցունց շարականները:

Ավանդական «Կաղանդչեքեր»-ից և «Վիճակահանություն»-ից հետո, հոգևոր ճեմարանի երգչախումբը, Խորեն Պալյանի ղեկավարությամբ, երգում է «Փրկչի ծնունդը» և «Տեր կեցո» սրտառուչ երգերը: Սիմեոն Սրբազան Հայրապետի «Յաարտ տարւոյն» ճառը կարդաց Դ լսարանի սան Գեղամ Տիգրանյանը:

Այնուհետև տարեմուտի հանդիսության ներկաներին իր օրհնության և շնորհավորանքի խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ
ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Ինձ համար անշուշտ հոգեկան մխթաբությունն է և գոհունակությունն ողջունել բոլորիդ Նոր տարվա սեմին: Իմ ողջույնները և բարեմաղթանքները իմ սրբազան հոգևոր եղբայրներին, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամներին, դասախոսական կազմին, մեր երիտասարդ հոգևորականներին, միաբաններին և մեր սիրելի սաներին, որոնք բոլորը մեկ այս պահում իրենց հաչաքքն ուղղել են դեպի ինձ՝ սպասելով ինձանից մի քանի խոսք այս հուզիչ պահին:

Ամեն Նոր տարվա սեմին ես մի պահ հիշում եմ Նոր տարին սրանից յարանասուն տարի առաջ 1916 թ. դեկտեմբերի 31-ը, երբ ես վեց ու կես տարեկան էի և իմ հոր ու մոր հետ գտնվում էի Օդեսայում՝ Ռուսաստանում:

Պիտի հարցնեք ինչո՞ւ համար, ինչպե՞ս:

Մենք Ռումինիա էինք ապրում, ես ծնվել եմ Բուխարեստում: Ծնողքս եկել են Ռումինիա այս դարի սկզբներին: Ի միջի ալոց ասեմ, որ հայրս փախել էր Պոլսից 1895 թվականին: Նա քաղաքական մարդ չի եղել, ոչ էլ կուսակցության անդամ, բայց հետևել է այն ժամանակի հայ հեղափոխականներին, որոնք ցույց էին կազմակերպել: Առաջին բավական ցնցիչ ցույցը, որ կազմակերպեցին հայ հեղափոխականները՝ Հնչակյան կուսակցության ղեկավարությամբ, Բաբը Ալի կոչված հրապարակում, Իստամբուլում:

Անշուշտ ոստիկանությունը կրակ է բացել, ոմանք վիրավորվել են, մահացողներ ալ եղել են, ոմանք էլ փախել են և փրկվել: Հայրս իր մի քանի լեկերներով, առանց այլևս տուն վերադառնալու փախել են Թուրքիայից դեպի Բուլղարիա:

Այդ ժամանակ, ինչպես միշտ՝ ընդհանրապես, բուլղարացիները համակրանք են ունեցել հայերի նկատմամբ և սահմանն անցնողներին սիրով ընդունել և պատուարել են, աշխատանք են տվել: Հայրս սևագործ բանվոր է եղել Վառնայի նավահանգստում: Երկու տարի հետո Բուխարեստ է անցել:

Ուրեմն բնակվում էինք Բուխարեստում: Սակավել էր առաջին Համաշխարհային պատերազմը 1914 թ.: Երկու տարի Ռումինիան մնաց չեզոք, այսինքն չմասնակցեց պատերազմին: Բայց Ռումինիան իր չեզոքությունը

պահեց մինչև 1916-ի աշունը: Այն ատեն ռումինացի ժողովուրդը պողոկաց մի տեսակ, որովհետև հողային հարց ուներ Ավստրո-Հունգարիայի հետ՝ Տրանսիլվանիո հսկա նահանգը, որ ռումինական էր և տիրապետվում էր հունգարացիների և ավստրիացիների կողմից: Ռումինիան պատերազմի մեջ մտավ ռուսների, ֆրանսիացիների և անգլիացիների կողքին: Բայց ավստրիական բանակները հյուսիսից, գերմանական բանակները հարավից, Հունգարիո կողմից, հայտնի Մակենզե գորավարի գլխավորությամբ հարձակվեցին Ռումինիայի վրա և սկսեցին գրավել ռումինական հողերը: Բուխարեստում հայերը զարհուրած վիճակի մեջ էին: Այն ատեն հայերի թիվն այնքան մեծ չէր, հազիվ մի երկու հարյուր ընտանիք լինեք, այն հայերը, որոնք Թուրքիայից փախել էին:

Արդեն կոտորածների մասին լուրերը տարածված էր: Ստույգ տեղեկություններ չկային, որովհետև թուրքերը կոտորածներ արեցին այնպիսի պայմաններում, որպեսզի որևէ լուր չհասնի արտաքին աշխարհ: Այնուամենայնիվ լուրերն սկսել էին տարածվել և հայերը գիտեին, որ բուն Հայաստանում ցեղասպանություն է սկսվել: Հայերը վախեցան, որ եթե գերմանացիները մտնեն Ռումինիա, նրանց հետ կմտնեն նաև թուրքերը, որոնք դաշնակից էին, ուստի կարող է հավաքել հայերին և տանել: Դրա համար գրեթե կեսը այդ հայության փախան դեպի Ռուսաստան, դեպի ապահով երկիր: Ծատ դժվար եղավ մեր փախուստը, շատ դժվարությունների հանդիպեցինք: Գրեթե առանց որևէ ունեցվածքի. արդեն հարուստ չէինք, հայրըս պարզ կոշկակար էր, և ընդհանրապես շատ համեստ էինք ապրում: Լեզու չգիտեինք: Հասանք Օդեսա խեղճ ու կրակ վիճակի մեջ, ինչպես բոլոր հայերը: Բարեբախտաբար Ռումինիայում ոչինչ չպատահեց: Գերմանացիները գրավեցին, թուրքերը կենտրոն ունեցան, բայց հայերին ձեռք չտվեցին: Սակայն վերջին տարիներին պարզվեց մի փաստաթուղթ, որ այն ժամանակ Թալեաթ փաշան դիմել է Մակենզե գորավարին, որ Բուխարեստի և Ռումանիո մեջ Թուրքիայից տեղափոխված բոլոր հայերը վերադառնան իրենց մայր հայրենիք՝ աչսինքն Թուրքիա, որպեսզի նրանք «բարեսիրաբար» պաշտպան կանգնեն խեղճ հայերին: Անշուշտ նա միտք ուներ ոչնչացնել նրանց: Բայց գորավար Մակենզեն ընթացք չի տվել Թալեաթ փաշայի այդ դիմումին, որով Բուխարեստի հայերը մնացին:

Մենք 1916-ի ձմեռը հասանք Օդեսա: Խստաշունչ ձմեռ էր: «Սիբիրյան ձմեռ» ասում էր մայրս: Եվ հիշում եմ, մի փոքրիկ սեմյակ ճարեցինք Օդեսայի ծալքամասերում: Մեծ բակ էր, և բակում փոքրիկ տնակներ կային՝ մեկ-մեկ հարկյան. բնակիչների մեծ մասը ռուսներ էին: Նրանք բոլորն էլ չքավոր մարդիկ էին գրեթե: Մենք մեկ սեմյակի մեջ էինք, ոչ Էլեկտրական լույս կար, ոչ ջեռուցում, բակում միայն աղբյուր կար և բոլորն օգտվում էին այդ ջրից:

Ավանդաբար Կադանդի գիշերը, գոնե մեր կողմերը, իմ ծնողներս ասում էին, որ սեղանի վրա գոնե յոթ տեսակ կերակուր պետք է լինի: Մայրըս ջանք էր թափում, որ յոթ տեսակ լինի, վերջապես յոթ տեսակ եղավ, հաշվելով ջուրը և հացը և այն փոքրիկ թխվածքի մեծան բան, որ ռուս դրացին տվել էր, գիտե՞նալով, որ մենք չքավոր մարդիկ ենք: Գիտեմ, որ մայրս լոբի խաշած էր, սպիտակ լոբի, սոխ կար սեղանի վրա, մի քանի ձու և մի քիչ էլ ընկույզ, մնացածն էլ՝ հացը, ջուրը և այդ թխվածքը:

Այդպիսի պայմաններում ուրեմն մենք անցկացրինք 1916 թ. դեկտեմբերի 31-ը: Ես իմ հոշոդությունը, առաջին անգամ լինելով, հրապարակավ

հայտնեցի, խորհելով, որ ինչ-որ մեծություն կա այդ Կադանդի և այս Կադանդի միջև: Ես ցավով պետք է մտածեմ, որ հավանաբար այսօր Հայաստանում և Արցախում մեծ թվով մեր հարազատները կան, որոնք յոթ տեսակ կերակուր չունեն իրենց սեղանի վրա: Բայց մենք այն ատեն ոչ ուրախացանք և ոչ էլ տխրեցինք, «Փառք Աստուծո, — ասացինք, — որ այս էլ ունենք, ապահով հողի վրա նստած ենք, թուրքերը չկան, և մենք կարողանում ենք խաղաղ մեր սեղանի շուրջ, ինչ որ կա ճաշակել»:

Ահավասիկ այդ մխիթարությունը մենք հիմա էլ ունենք, ընդհանրապես, բայց պետք է հիշենք այս պահում ոչ միայն սեղանի յոթ տեսակ կերակուր չունեցողներին, այլ պետք է հիշենք նաև այն քաջամարտիկներին, ֆիդայիներին, որոնք զենքն ուսին հենց այս պահում պաշտպանում են մեր սահմանները և պաշտպանում են չքնաղ երկիրը մեր Արցախի: Որոնց մեջ մեր հոգևորականներից ոմանք, գլխավորությամբ մանավանդ մեր Պարգև սրբազանի, որի տուն վրա, լսեցինք այսօր, մեկ ումբ է ընկել, բայց բարեբախտաբար ինքը չէ վիրավորված: Եվ ուրիշ հոգևորականներ, մեր երիտասարդ քահանաներից, որոնք ուղղակի գործակցում են այդ քաջամարտիկներին, նույնիսկ ոմանք զենք են կրում ինքնապաշտպանության համար և սնունդ են հասցնում, և մխիթարական խոսք:

Ահա այս պայմաններում ապրում ենք մենք իբրև ժողովուրդ: չենք վհատվում, չենք հուսահատվում և չպետք է հուսահատվենք, մանավանդ, որ լսում ենք քաջալերիչ լուրեր Արցախից, երբ հաչերը ուժեղ դիմադրություն են ցուցադրում թշնամուն: Այսօրվան միայն նրանց վախեցնելով կարող ենք պաշտպանել մեր ունեցվածքը, մեր հողը, և մեր ազգային արժանապատվությունը:

Մեր հայրենի կառավարությունը մեծ չափերով օժանդակում է Արցախի պաշտպանության գործին:

Սկսում ենք Նոր տարին՝ 1992 թ. և կարծում եմ, որ մենք և մեր ժողովուրդը, մեր ժողովրդի հետ նաև մեր հոգևորականները, պետք է պահպանենք մեր հավասարակշռությունը, հոգևոր տոկոսությունը, կարգապահությունը առհասարակ. սա կվերաբերի ոչ միայն՝ հոգևորականներին, այլ ընդհանրապես մեր ժողովրդին: Այսպիսի պայմաններում մեր ողջ ժողովուրդը պետք է իմանա պահպանել քաղաքացիական կարգապահություն՝ համախմբված մեր ազգընտիր պետական իշխանությանց շուրջ, և լավատեսության ոգի: Այդ պայմաններում ես կարծում եմ, որ Աստված էլ մեզ կօգնի և մենք կհասնենք մեր խաղաղության ճավահանգիստը: Գուցե հենց հառաջիկա տարվա ընթացքում՝ 1992 թ. ընթացքում, մանավանդ, որ դրական երևույթներ մեզ հուսադրում են: Իսկապես մեր անկախությանը անսպասելի արագությամբ ողջ աշխարհը ճանաչում տվեց: Դա մեզ համար ոչ միայն քաղաքական հաջողություն, այլ նաև մեր ժողովրդի համար հոգևոր քաջալերանք է և վստահություն, որ աշխարհը մեզ հետ է և մեր անկախությունը ճանաչելով, ճանաչում է նաև մեր դատի արդարությունը:

Եվ ահա այս բարի մաղթանքներով և այս լավատեսությամբ ես կուզենայի կրկին անգամ իմ ողջույնը և օրհնությունը բերել ձեզ բոլորիդ, հատկապես իմ խոսքն ուղղելով մեր երիտասարդներին, մեր սաներին, որ լավ հասկանան այդ, մեր ժողովրդի այսօրվա կացությունը, մեր դժվարությունները, մեր գրկանքները և նաև մեր հաղթանակները, մեր հույսերը և մեր ապագայի նկատմամբ ակնկալությունները: Եվ մենք իբրև հոգևորականներ նեցուկ կանգնենք մեր ազգի բոլոր մարտիկներին: Մենք մեր ձեռ-

քում նյութական գեներ չունենք, բայց մենք էլ պետք է մասնակցենք մեր հոգևոր գեներով: Ակնկալելով, սպասելով՝ ողջունելու մեր ժողովրդի և մեր հայրենիքի վերջնական հաղթանակը և բարօրությունը: Թող Աստված շարունակի մնալ մեր ազգի, մեր հայրենիքի վրա, օգնական, պահապան և մարտակից, և մեր ժողովուրդը և մեր Եկեղեցին միասնական ճիգերով կարողանան հաղթահարել ամեն տեսակ դժվարություն:

Օրհնություն ձեզ՝ բոլորիդ, օրհնություն մեր անմահ ազգին, օրհնություն մանավանդ Արցախի հերոսական ժողովրդին և օրհնություն նոր եկող՝ 1992 տարուն. ամեն:

Ամանորյա ուրախ երեկոն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Կեսգիշերին Մայր տաճարի զանգերի խորհրդավոր դղանջներն ազդարարում են հին տարվա ավարտը և նոր՝ 1992 թվականի գալուստը:

Հաջորդ օրը, հունվարի 1-ին, Մայր տաճարի Ավագ խորանի վրա ամանորյա ս. պատարագ մատուցվեց: Պտարագիչն էր հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Միքայել վրդ. Աջապահյանը: Ս. պատարագի վերջում հոգեշնորհ հայր սուրբը բովանդակալից քարոզ խոսեց.

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. Ամեն»

«Եւ չունեցին որդիքն Իսրայելի յանապատին յարևելս...»

«Եվ Իսրայելի որդիներն անապատի միջով շարժվեցին դէպի արևելք...»
(Թվոց ԻԱ 11)

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Մարդ արարածը ժամանակի ու տարածության մեջ իր սահմանափակությունն ու անցողիկությունը գիտակցելով, անսկիզբ ու անվերջ ժամանակը բաժանել է մասերի, որպեսզի կարողանա տիրել նրան, որպեսզի կարողանա իր ծրագրերն ու նպատակներն իրականացնել անձայրածիր անորոշության մեջ իրեն հատկացված մի որոշակի հատվածում, որպեսզի կարողանա հասնել իր իղձերին ու երազանքներին: Եվ այսօր, ամբողջ երկրագնդի վրա համայն մարդկությունը անձայրածիր ժամանակի գծի վրա ավելացրեց մեկ խազ ևս և այն թվագրեց Քրիստոսից հետո 1992 թվականով:

Եվ այսօր, երբ մենք հավաքվել ենք այստեղ, աղոթքով ու խոկումով սկսելու 1992 թվականի այս ազգաբացը, մի նոր իմաստ ու մի նոր բովանդակություն են տեսնում Աստվածաշնչի Հին Կտակարանյան այս խոսքի մեջ. «Եվ Իսրայելի որդիներն անապատի միջով շարժվեցին դէպի արևելք»: Այն վերաբերում է Իսրայելի ժողովրդի՝ Եգիպտոսից դուրս գալուց և 40 տարիներ անապատում թափառելուց հետո Ավետչաց երկիր մտնելուն: Սակայն Աստվածաշնչի այս պարզ, առարկայական խոսքերի հետևում ես այսօր տեսնում եմ նաև թաքնված բանաստեղծական, խորհրդանշական իմաստ ու նշանակություն: Աշխարհագրական պարզ բացատրությունից այն կողմ ես տեսնում եմ այս տողերի ողջ աստվածաբանական կարևորությունը, տեսնում եմ Եգիպտոսում Իսրայելի որդիների ստրկական անլուր տառապանքները, տեսնում եմ Սինայի անապատում նրանց թափառումներն

ու սայթաքումները, և տեսնում եմ մասն անհատներ, լեցուն ընթացք դեպի արևելք, դեպի արշալույս, դեպի Ավետյաց երկիր:

Եվ այսօր, երբ մենք՝ հայ ժողովուրդ, դիմավորում ենք 1992 թվականի լուսաբացը, մեր միտքը սլանում է հետ՝ չորս տարիներ առաջ, երբ 1988 թվականի սկզբին մեր ժողովուրդը միահամուռ ու միաբերան ոտքի կանգնեց կեղծիքի ու խաբեության անապատում, ընդդիմացավ ստիճ ու խարդախությանը և այդ անապատի միջով փորձեց իր անապարհը հարթել դեպի արևելք, դեպի արևածագ ու դեպի արշալույս: Եվ ինչպես 3500 տարիներ առաջ Իսրայելի ժողովուրդը չունեի մեծաքանակ բանակներ, չունեի հզոր ուժ, սակայն ուներ հավատք առ Աստված, հավատարմություն դեպի իր ուխտի Աստվածը, այնպես էլ հայ ժողովուրդն իր թիկունքում չունենալով ոչինչ, բացի իր Աստծուց, իր հավատքից ու իր ճշմարտությունից, դուրս եկավ պայքարի ընդդեմ բռնության, հանում իր կշանքի ազատության ու անկախության: Եվ այս չորս տարիների ընթացքում անցնելով բազում փորձությունների միջով, ճաշակելով ամեն տեսակի զրկանքներ, մեր ժողովուրդը կարողացավ պահպանել իր հաստատականությունը, իր հավատարմությունն իր ուխտին և այսօր 1992-ի լուսաբացը դիմավորել որպես հավասարն ընդ հավասարի երկրագնդի ազգերի ու պետությունների կողքին որպես լիիրավ, անկախ և ինքնիշխան պետություն: Եվ այստեղ է, որ հիշում ենք Աստվածաշնչի իմաստունի խոսքը, թե՛ «այս երկնքի տակ ամեն ինչ ունի իր ժամանակը՝ ժամանակը լալու և ժամանակը ծիծաղելու, ժամանակը քարեր նետելու և ժամանակը քարեր ժողովելու, ժամանակը պատերազմի և ժամանակը խաղաղության» (Ժող. Գ 1—18):

Եվ այժմ չորս տարիների տոնապանքներից հետո մենք դիմավորում ենք նոր տարին առաջին անգամ, որպես ազատ ու անկախ մի պետություն: Սակայն ամեն ինչ չէ, որ վերջացած է, և մենք նույն ոգով ու հավատքով պետք է շարունակենք մեր պայքարը մինչև հաղթական ավարտ, որպեսզի մեր երկնակամարի վրա ծագած արեգակը մնա հավիտյան հավիտենից, լուսավորի մեր ժողովրդին և երբեք այլևս մայր չմտնի: Եվ թող մեր ազգի քաջարի զավակների շուրթերին, որոնք այսօր, այս րոպեին աշալուրջ հսկում են մեր երկրի սահմանները, միշտ հնչի Դավիթ սաղմոսագրի այս խոսքը, թե՛ «քեզ հուսացի, ով Տեր, որովհետև դու ես իմ Աստվածը, քո ձեռքում է իմ ժամանակը, փրկիր ինձ իմ թշնամիներից ու հալածիչներից» (Սաղմ. Լ 15—16): Եվ իմանալով իմաստավորել ժամանակը, ապրենք հավատքով ու հույսով, ապրենք այն խորին համոզումով, որ մի նպատակ ունենք այս հողի վրա, այս հայրենիքում, այն է՝ ավելացնելու լույսը Լուսավորչի կանթեղի մեջ և մեկ անգամ ևս հնչեցնելու հավիտյաններից առաջ հնչած խոսքը, թե՛ եղիցի լույս:

Ահա այս մտածումներով, այս խորհրդածություններով է, որ, սիրելի եղբայրներ և քույրեր, դիմավորում ենք այս անգամ Նոր տարին՝ նոր ակնկալիքներով, նոր սպասումներով ու նոր իղձերով:

Քիչ հետո պիտի կատարվի Հայրապետական մաղթանք, որի ընթացքում մենք պետք է աղոթենք վասն Հայրապետության և Հանրապետության ազգիս հայոց: Պիտի աղոթենք, որ մեր Տերն անստատև և անշարժ պահի ստաբիլահաստատ Հայաստանյայց Ս. Եկեղեցին իր ազգընտիր հովվապետով, ում շուրջն այսօր հավաքված միաբանակից մեր եղբայրներով, մեր աղոթքն ենք վերադարձնում առ Աստված: Մեր աղոթքի ձայնն ենք միացնում

բոլոր այն հայորդիներին, որոնք այստեղ, թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս, աղոթում են հանուն մեր Եկեղեցու պայծառության:

Պիտի աղոթենք նաև մեր հանրապետության՝ Հայաստան աշխարհի առավել պայծառության և առավել բարգավաճման համար: Եվ պիտի հուսանք ու աղոթենք, որ գալիք տարիները դիմավորենք առավել պայծառ, առավել լավատես, ճակատներս բաց համայն մարդկության առջև, և կարողանանք հպարտորեն վկայել, որ բաղաբացիներն ենք Հայաստանի Հանրապետության: Եվ թող Աստված բոլորիս գորավիզ ու ապավեն լինի մեր առաքելության ճանապարհին, որպեսզի ամեն երեկո, երբ կրկին հավաքվենք աղոթելու մեր սուրբ եկեղեցիների խնկաբույր կամարների տակ, կարողանանք մեր փառքն ու գոհությունը մատուցել Բարձրալին՝ Ամենագոր Տիրոջը և ասել. «Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

«Ծնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ ընդ ամենեւեւան, Ամէն»:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք: Ապա եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Վեհարան, որտեղ Մայր Աթոռի միաբանությունն ու ուսանողությունը շնորհավորեցին Հայոց Հայրապետի Նոր տարին:





ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ին, կիրակի.— ԾՐԱԳԱՆՈՅՑ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱ-
ԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

«Այսօր տօն է Ս. ԾՆՆՈՒՄԱՆ, աւետիս,
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս»:

Սրբազան տաղերգոյ աչս գեղեցիկ ավետիսով խորհրդավոր հանդի-
սությամբ ավետվում է մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ծնունդը:

Ավելի քան 17 դարեր Հայ Առաքելական Եկեղեցին մեծ շուքով և հան-
դիսավորությամբ է տոնում Քրիստոսի Ծնունդն ու Հայտնությունը:

Այս տարի ևս, օրվա մեծ տոնի առիթով, երեկոյան ժամը 17-ին, Մայր
տաճարում տեղի ունեցաւ «Ծաշու» և «Երեկոյան» հանդիսավոր ժամերգու-
թյուններ:

Ամեն տարի հայ հաւատաւոր ժողովուրդը այդ խորհրդավոր երեկո-
յան ուխտի է եկել Ս. Էջմիածին՝ հաղորդակից դառնալու սրբազան արա-
րողություններին, ջերմեռանդ աղոթելու՝ Հայոց աշխարհի խաղաղության
և անասանության համար:

Երեկոյան, հանդիսավոր թափորով, Մայր տաճար է առաջնորդվում
Վեհափառ Հայրապետը: Սկսվում է Ծրագալույցի ա. պատարագը: Ավագ
ա. խորանի վրա սուրբ և անմահ պատարագ է մատուցում Ս. Հռիփսիմե
վանքի վանահայր գերշ. Տ. Անանիա եպս. Արաքաշյանը:

Հավարտ ա. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ
կատարվում է Ս. ԾՆՆՈՒՄԱՆ նախատոնակի կարգը:

Սրբազան արարողությունից հետո եկեղեցական թափորը «Քրիստոս
ծնաւ և յայտնեցաւ» ու «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» շարականների եր-
գեցողությամբ Վեհափառ Հայրապետին առաջնորդում է Վեհարան, ուր
Մայրավանքի միաբանությունը Հայոց Հայրապետին շնորհավորում է Ս.
ԾՆՆՈՒՄԱՆ մեծ տոնի առթիւ:

*
*
*

Հունվարի 6-ին, երկուշաբթի.—ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏ-
ՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր տաճարում տոնական ժամերգությունից հետո, ժամը 11-ին, սկսվում է ա. պատարագը:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում, Ավագ ա. խորանի վրա, հանդիսավոր ա. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողոսպալյանը:

Մայր տաճարի զանգերի ավետաբեր դողանքների ներքո հնչում է Ս. Ծննդյան բերկրալի ավետիսը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» մեղեդին: Հավատացյալների և ուխտավորների խոռոներամ բազմությունը հոգևոր ուրախության ու ցնծության պահեր է ապրում:

Ավագ ա. սեղանի առաջ, առյանում, ա. պատարագին ներկա են Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, փոխնախագահ, վարչապետ տիար Գագիկ Հարությունյանը, Հայաստանի խորհրդարանի նախագահ տիար Բաբկեն Արարքյանը և պաշտոնական ալլ անձինք:

Պատարագի սրբազան արարողությունը Երևանի հեռուստատեսությանը, ուղիղ եթերով, սփռվում է մեր հանրապետության ողջ տարածքում:

Հավարտ ա. պատարագի Վեհափառ Հայրապետը հավուր պատշաճի բարոզ է խոսում՝ շնորհավորելով բովանդակ հայության, որ ի Հայաստան և որ ի Սփյուռն աշխարհի, Նոր տարվա և Ս. Ծննդյան տոնը: Այնուհետև Նորին Սրբության նախագահությանը, Ավագ ա. խորանի վրա, կատարվում է Զրօրհնյաց հանդիսավոր արարողությունը՝ ոգեկոչելով հիշատակը Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտությունը:

Ապա Հայոց Հայրապետը եկեղեցական թափոռով առաջնորդվում է Վեհարան, որ օրվա մեծ տոնի առիթով Նորին Սրբության կողմից տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում էին Մայրավանքի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Ծաշկերույթին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանը և խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքյանը:

Վեհափառ Հայրապետին, Հայաստանի նախագահին և ներկաներին Ս. Ծննդյան տոնի առիթով շնորհավորական խոսք է ասում Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոքյանը:

Այնուհետև փոխադարձ շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսքեր են ասում Հայաստանի Հանրապետության նախագահը և Վեհափառ Հայրապետը:



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 23-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապալյանի, քահանայական կոչում և ձեռնադրություն ստացան Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարանի յոթ սարկավագներ:

Փետրվարի 22-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարի Իջման ս. սեղանի առջև կատարվեց բարեշնորհ Գրիգոր արկ. Մնացականյանի, Հրանտ արկ. Բարսեղյանի, Արմեն արկ. Մելիքյանի, Խորեն արկ. Մարտիրոսյանի, Լևոն արկ. Իսայանի, Լուսեղեն արկ. Համբարյանի և Հրանտ արկ. Հովհաննիսյանի «Կոչումն քահանայութեան յերեկոյէ» կարգը՝ ըստ Հայաստանյայց Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի:

Սրբազան արարողության խարտավիլակ հոգեշնորհ Տ. Վազգեն արք. Միրզախանյանը վկայեց նորընծաների հոգևոր-ինացական պատրաստվածության և արժանիքների մասին: Ապա նորընծաներն ուխտեցին «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացրն և կալ ըստ կանոնաց նոցա»:

«Կոչումն քահանայութեան» արարողության ավարտին, նորընծաները հանդիսավորությամբ արտասանեցին Ս. Գրիգոր Տաթևացու «Հաատոյ խոտովանութիւն»-ը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Փետրվարի 23-ին, կիրակի օրը, Մայրավանքը լեցուն էր հավատացյալների խոտներամ բազմությամբ: Մայր տաճարի Ավագ ս. խորանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը:

Ս. պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած և աստուածաւեր ես

Աստուած գոյով» աղոթքը: Ապա խարտավիլակ հոգեշնորհ հայր սուրբը բարեշնորհ սարկավագներին ծնրադիր առաջնորդեց Ավագ ա. սեղան: Նորընծաները «Աստուածային և երկնատուր շնորհ» հոգեթով շարականի երգեցողության ներքո, ձեռամբարձ, դարձան դեպի հավատացյալների բազմությունը՝ ի նշան աշխարհից հրաժարվելու: Այնուհետև պատարագիչ սրբազան հայրը, ձեռքը դնելով բարեշնորհ սարկավագների վրա, արտասանեց «Ես ձեռս դնեմ ի վերայ սոցա և դուք ամենեքեան աղոթս արարեք» ձեռնադրության խորհրդավոր աղոթքը:

Ձեռնադրող սրբազան հայրը նորընծաներին շնորհեց քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ կրելու իրավունք:

Ապա ընթերցվեցին մեր սրբազան հայրերի աղոթքներն ու երգվեցին սրտատուշ շարականներ: Ահավասիկ հոգևոր վերացման խորհրդավոր պահն է՝ օծման սրբազան արարողությունը: Ձեռնադրող սրբազանը սրբալույս մեռնող օծում է նորընծաների ճակատը և ձեռքերը՝ վերանվանելով Գրիգոր սարկավագին՝ Ս. Մանուկ քահանա, Հրանտ սարկավագին՝ Ս. Եղիշե քահանա, Արմեն սարկավագին՝ Ս. Ստեփանոս քահանա, Խորեն սարկավագին՝ Ս. Խորեն քահանա, Լևոն սարկավագին՝ Ս. Հարություն քահանա, Լուսեղեն սարկավագին՝ Ս. Թադեոս քահանա, Հրանտ սարկավագին՝ Ս. Հովհաննես քահանա: Ապա նորընծաները, դառնալով ժողովրդին, տալիս են իրենց անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղությո՜ւն ամենեցուն»:

Հանդիսավոր ձեռնադրության ավարտին պատարագիչ սրբազան հայրը նորընծաներին օրհնության և շնորհավորանքի խոսքեր ասաց ու տվեց իր հայրական պատգամը.

«Այսօրվա խորհրդավոր օրն իր մեջ բովանդակում է յոթ նորած թափանցներ, որոնք հոգևոր ճեմարանի քահանայից լսարանի դասընթացն ավարտելուց հետո, երեկ երեկոյան կոչման արարողությամբ, ծունր դրին Իջման ա. սեղանի առջև՝ նվիրվելու համար մեր ժողովրդի և Եկեղեցու ծառայությանը: Այս յոթ թեկնածուներից ամեն մեկը եկել է Հայաստանի և ներքին Սփյուռքի տարբեր վայրերից: Նրանցից ոմանք Ռուսաստան պիտի գնան ծառայելու, ուրիշներ Արցախ պիտի գնան, այնտեղ իրենց ծառայությունը մատուցելու Եկեղեցուն և Եկեղեցու միջոցով՝ ժողովրդին:

Ահավասիկ հոգևոր ծառայությունը, որ ամբողջ կյանքով նվիրվում է ժողովրդին, իր գիտակցական, իմացական ողջ աշխարհը և իր հավաքած գիտելիքները ծառայության է դնում ժողովրդի համար: Այս է իսկական նահատակությունը, այս է իսկական վկայությունը, այս է իսկական զոհողությունը, որ մարդիկ, հակառակ իրենց երիտասարդ տարիքին, իրենց կյանքը նվիրում են Աստծուն»:


Այնուհետև սրբազան հայրն անդրադարձավ հոգևոր սպասավորի ներքին կոչման գիտակցության կարևոր խորհրդին, երբ անհատը, անդրադառնալով իր ներքնաշխարհին, ունկնդրում է աստվածային կոչման ձայնին և դառնում նրա սպասավորը:


«Թող Ս. Հոգին նրանց իմացական աշխարհը հերկի և բեռնավորի, նրանց առաքելական շնորհք տա՝ քարոզելու, ծառայելու, նվիրվելու, մխիթարելու: Երբեք նյութի ետևից մի ընկեք, նյութը կապականի ձեզ, այլ հոգեվորի ետևից վազեք, ինչ որ ավելին ստանում եք, փորձեցեք աղքատին և խեղճին տալ՝ նրան բարձրացնելու և օգնելու համար: Այդ ձևով, այդ զոհողությամբ ու նվիրումով միայն դուք Աստուծո առջև մեծ պատիվ կստանաք»:

Սրբազան հոր ոգեշունչ քարոզը և ձեռնադրության հանդիսավոր արարողությունն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:

* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա քահանա հայրերին՝ մաղթելով հավատարիմ մնալ իրենց կոչման ուխտին և լինել անձնդիր մշակները հայ հոգևոր անդաստանի:






Տ. ՄԱՆՈՒԿ ՔԱՀԱՆԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1962 թ. նոյեմբերի 28-ին Ադրբեջանի Հանրապետության Կիրովաբադ (Գյանջա) քաղաքում:

1969—1976 թթ. սովորել է տեղի Խ. Աբովյանի անվան № 10 հայկական միջնակարգ դպրոցում:

1976 թ. ընտանիքով տեղափոխվել են Հայաստան և բնակություն հաս-



տատել էջմիածին քաղաքում: Այստեղ ուսումը շարունակել է Երվանդ Օտյանի անվան № 7 միջնակարգ դպրոցում և ավարտել 1979 թ.:

1979—1988 թթ. աշխատել է զանազան բնագավառներում:

1988 թ. հաճախել է էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցի և մասնակցել հոգևոր արարողություններին:

1989 թ. ընդունվել է Ս. էջմիածնի հոգևոր ճեմարան:


1990 թ. տեղափոխվել է Գուգարաց թեմ ծառայելու և կրոնական դասեր է ավանդել Օձունի միջնակարգ դպրոցում:


1990 թ. հուլիսի 4-ին, ձեռամբ գերշ. Ս. Արսեն եպս. Բերբերյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1991 թ. մայիսի 8-ից ծառայել է Ս. Էջմիածնում՝ որպես սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է քահանա:

Այժմ հոգևոր ծառայության է գշանակվել Սյունյաց թեմում:






Տ. ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ծնվել է 1965 թ. մարտի 15-ին Իրանի Փերիա գավառի Հազարջրիք գյուղում:

1968 թ. ընտանիքով հայրենադարձվել են Մայր Հայրենիք և քնակություն հաստատել Աշտարակ քաղաքում:

1972—1982 թթ. սովորել և ավարտել է տեղի № 5 միջնակարգ դպրոցը:



1982—1983 ուսումնական տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983—1985 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

1987 թ. ծառայության է նշանակվել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

1990 թ. հունիսի 24-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապպյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապպյանի, ձեռնադրվել է քահանա:


Այժմ հոգևոր ծառայության է նշանակվել Գուգարաց թեմում:

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ

Ծնվել է 1961 թ. դեկտեմբերի 20-ին Էջմիածին քաղաքում:

1969—1979 թթ. սովորել և սվարտել է Էջմիածնի № 2 միջնակարգ դպրոցը:

1979—1981 թթ. սովորել և սվարտել է Երևանի № 8 գեղարվեստա-տեխնիկական ուսումնարանը:



1981—1983 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Էջմիածնի գյուղ. շին. կոմբինատում՝ որպես արտադրամասի վարպետ:

1990—1991 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի բանահայից լսարան:

1991 թ. սեպտեմբերի 15-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս Պողապալյանի, ձեռնադրվել է քահանա:


Այժմ իր ծառայությունն է կատարում հոգևոր ճեմարանում:

Տ. ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ

Ծնվել է 1965 թ. մարտի 8-ին Էջմիածին քաղաքում:

1972—1982 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի № 1 միջնակարգ դպրոցը:

1982—1987 թթ. սովորել և ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետը:



1987—1990 թթ. աշխատել է Էջմիածնի շաթական մեքենայական շարադրումում որպես ինժեներ:

1990—1991 թթ. ուսումնական տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարան:

1991 թ. սեպտեմբերի 15-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է քահանա:


Այժմ իր հոգևոր ծառայությունն է կատարում հոգևոր ճեմարանում:

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ԻՍԱՅԱՆ

Ծնվել է 1936 թ. նոյեմբերի 23-ին Թեհրանում (Իրան):

Սկզբնական կրթությունն ստացել է տեղի Ս. Գևորգ եկեղեցում կից միջնակարգ դպրոցում:

1971 թ. ընտանիքով հայրենադարձվել է Մայր հայրենիք և բնակություն հաստատել Աշտարակ քաղաքում:




Երկար տարիներ ծառայել է Աշտարակի Ս. Մարինե եկեղեցում՝ որպես դպիր:

1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարան:

1992 թ. հունվարի 19-ին, ձեռամբ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաշյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապալյանի, ձեռնադրվել է քահանա:

Այժմ հոգևոր ծառայության է նշանակվել Այունյաց թեմում:




Տ. ԹԱԴԵՈՍ ՔԱՀԱՆԱ ՀԱՄԱՐՅԱՆ

Ծնվել է 1962 թ. նոյեմբերի 16-ին Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի Չալդր գյուղում:

1970—1980 թթ. սովորել և ավարտել է տեղի № 1 միջնակարգ դպրոցը:

1981—1986 թթ. սովորել և ավարտել է Ռոստովի մանկավարժական ինստիտուտի գեղանկարչական ֆակուլտետը:



1986—1990 թթ. աշխատել է Չալդր գյուղի № 2 դպրոցում՝ որպես նկարչության, հայոց լեզվի և հայոց պատմության ուսուցիչ:

1987 թվականից սովորում է Երևանի պետական հմտալսարանի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժնում:

1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի բաժնապետի լսարան:

1992 թ. հունվարի 19-ին, ձեռամբ գերշ. Տ. Անանիա եպս. Արաքաջյանի,, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է քահանա:


Այժմ ծառայության է նշանակվել Նոր Նախիջևանի հայոց թեմում:

Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1963 թ. փետրվարի 10-ին, ԼՂԻՄ-ի Մարտակերտի շրջանի Վանք գյուղում:

1970—1978 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1978—1982 թթ. սովորել և ավարտել է Ստեփանակերտի գյուղ. տեխնիկոմի զոոտեխնիկական բաժինը:



1982—1984 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:


1984—1990 թթ. աշխատել է Վանք գյուղում՝ որպես զոոտեխնիկ:

1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարան:

1992 թ. հունվարի 19-ին, ձեռամբ գերշ. Ս. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Ս. Ներսես արքեպս. Պողպալյանի, ձեռնադրվել է քահանա:

Այժմ հոգևոր ծառայության է նշանակված Արցախի թեմում:



ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ավելի քան 1500 տարիներ Հայ Առաքելական Եկեղեցին և բովանդակ հայ ժողովուրդը մեծ տոնախմբությամբ ոգեկոչում են Վարդանանց հերոսամարտը՝ որպես հայ ազգի հարատևության և ինքնահաստատման առհավատոյա: Տասնհինգ դարեր Հայաստանյայց եկեղեցիներում հնչել են Վարդանանց հոգեթով շարականները և մեր հավատավոր ժողովրդին շիջուցանել հոգևոր զենքով ու դարձել նրա պայքարի ոգեշնչումը՝ «վասն հաւատոյ և վասն հայրենաց»:

Անշուշտ այդ ներշնչումը կա այսօր ևս, երբ Վարդանանց հիշատակի օրը Ս. Էջմիածնի Մայր տաճարը լեցվում է հայ հավատացյալների և ուխտավորների բազմությամբ՝ աղոթքի և խոկման՝ «զհանրապետութիւն և զհայրապետութիւն ազգիս հայոց՝ ի շինութեան, ի խաղաղութեան և յանասանութեան»:

Ահալասիկ նաև այս տարի, փետրվարի 27-ին, մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշվեց Վարդանանց հերոսամարտի հիշատակը:

Այդ օրը միաժամանակ նշվեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա.-ի անվանակոչությունը:

Առավոտյան, հանդիսավոր ժամերգությունից հետո, ժամը 11-ին, Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, սկսվեց ա. պատարագը: Պատարագիչն էր Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը: Արարողության ընթացքին եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր տաճար իջավ Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ա. պատարագի կատարվեց Հայրապետական Մաղթանք, և պատարագիչ հայր սուրբը օրվա մեծ տոնի խորհրդով քարոզ խոսեց:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Ավարայրի հերոսների հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանդիսություն:

Հանդիսությանը ներկա էին Մայրավանքի միաբանությունը, հոգևորա-

կանգնե՛ր՝ Հայաստանի տարբեր շրջաններից և սփյուռքից, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, հայրենի մտավորականության ներկայացուցիչներ, հավատացյալներ և հյուրեր:

Հանդիսությունն սկսվեց խմբովին արտասանված «Հայր մեր»-ով և Հայաստանի Հանրապետության օրհներգի երգեցողությամբ: Տոնակատարության բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպս. Արաքսյանը:

ԱՆԱՆԻԱ ՍՐԲԱԶԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, հարգելի անդամք Գերագույն Հոգևոր Խորհրդի, սիրելի հյուրեր և շատ սիրելի ուսանողներ:

Այսօր զարման սկիզբն ավետող այս պայծառ առավոտ հավաքվել ենք այստեղ Վեհարանի հանդիսությանց դահլիճում հիշատակելու համար սրբոց Վարդանանց պայծառ տոներ: Թե՛ ինչ է եղել Ավարայրը հայ ժողովրդի կյանքում, մեզ բոլորիս քաջ հայտնի է, կասեմ միայն այն, որ մութ գիշերներին մեր պատմության այն եղել է մեզ համար լույսի և հույսի մի աստղ և ցուրտ ձմեռներին եղել է ջերմություն և կրակ: Պատմությունը ունի իր ողորապատյալը, որ կատարում է երկրագնդի վրա ժողովուրդների կյանքում և հաճախ այդ մեծ շրջանի մեջ երբեմն կարճ ժամանակով ինչ որ մի հատվածում պատմությունը մի ժողովրդի կրկնվում է: Այսպես է մաս մեր ժողովրդի կյանքում, Ավարայրը կրկնվել է բազում անգամներ, հայ ժողովուրդը տեսել է շատ ավարայրներ և հաղթանակով է դուրս եկել: Այդ ավարայրները տարբերակումն է ունեցել Ձիրավ, Դվինի առումը, Սարդաբադապատ, քայց էությունը նույնն է եղել՝ վասն հայրենյաց, վասն Հիսուսի:

Այսօր ես, 1992 թվականին մեր Ավարայրը կրկնվում է, մեր Ավարայրը կրկնվում է Արցախում և մեր ժողովուրդը նույն պայքարն է մղում այսօր ևս ասելով վասն հայրենյաց:

Վեհափառ Տեր, այսօր մաս Ձեր անվանակոչության տոնն է, ինչպես տեսանք եկեղեցում հայրապետական մաղթանքի ժամանակ, լսեցինք Ձեզ, մաղթեցինք հավերժան ժամանակով ապահով անդորրություն: Բայց թող թույլ տրվի իմ համարձակությանս և ներվի ասելով, որ ինչքան որ ես արդեն 22 տարի ծառայում եմ մեր եկեղեցում, Ձեր կողմից երբեք չտեսա ապահով անդորրություն: Դուք երբեք չփնտրեցիք այդ անդորրությունը, Դուք եղաք Վարդանի և Ղևոնդի հոգիներով: Դուք վարվեցիք մեկի հայրենասիրության և մյուսի քրիստոսապաշտության և երկու կրակներից Ձեր սրտի մեջ առաք այն մեծ ջերմությունը, որ մեզ այսօր առաջնորդում է: Ցանկանում եմ Ձեզ, Վեհափառ, երկար տարիների կյանք, թող լինի այդ հավերժան ժամանակով Ձեր ապահով անդորրությունը այն ժամանակ, երբ Հայոց գեներլ վար կորվի հաղթականորեն, երբ հայոց 1000 տարվա Հայաստանը կգտնի իր հանգիստը, իր իսկական անկախությունը և տնտեսական և քաղաքական իմաստներով: Այն ժամանակ մեր բոլոր ժողովուրդը, բոլոր հոգևորականները, մեր ամբողջ հավատացյալ հայ համայնքները, թող լիիրավ ասեն Ձեզ, Վեհափառ Տեր, ցանկանում ենք հավերժան ժամանակով Ձեզ ապահով անդորրություն:

Տեսուչ սրբազան հոր խոսքից հետո հոգևոր անմարանի երգչախմբի կատարմամբ հնչեց Ս. Ներսես Շնորհալու «Նորահրաշ» հոգեցունց շարականը: Ճեմարանի Դ լսարանի սան Վազգեն Գալստյանը Եղիշեից արտասանեց «Որոց ոգիքն» հատվածը:

Այնուհետև օրվա խորհրդի շուրջ բովանդակալից բանախոսությամբ հանդես եկավ հոգևոր անմարանի մատենագրության դասախոս պրն. Հակոբ Բյուսեյանը:

ՊՐՆ. ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ազգերի պատմության մեջ կան պահեր, որոնք վճռում են ոչ միայն դեպքերի, իրադարձությունների հետագա ընթացքը, այլև մեծապես նպաստում ազգի բարոյական նկարագրի կերտումին: Հայոց պատմությունը մասն պահեր շատ է ապրել. Դարձ, Գրոց գյուտ, Ավարայրի ճակատամարտ, Սարդարապատ...: Այս պահերի մեջ բացառիկ է Ավարայրի նշանակությունը:

Ավարայրի ժայթքումին նախորդեցին մի շարք քաղաքական իրադարձություններ, որոնք զգալիորեն նպաստեցին ազգային ինքնագիտակցության աճին:

Թագավորական իշխանության վերացումից հետո (428 թ.) երկրի կառավարման դեկն անցավ հայոց նախարարների ձեռքը: Սակայն նրանց տրված իրավասություններն հարաբերական էին: Ըստ էության երկրի վարչաքաղաքական կառավարումն իրականացնում էին Պարսից արքունիքի կողմից նշանակված մարզպանները: Այս է պատճառը, որ հինգերորդ դարի երկրորդ քառորդից սկսյալ պարսից Վուս Գոռ (421—439) արքայի օրոք Հայաստանը վերածվում է Սասանյան պետության վարչական միավորներից մեկը: Այսուամենայնիվ, ի տարբերություն մյուս մարզպանությունների Հայաստանի մարզպանությունն ուներ որոշ իրավասություններ: Բանն այն է, որ մարզպանության ենթակա երկու գործակալությունները՝ սպարապետությունն ու հազարապետությունը գտնվում էին հայոց իշխանների ձեռքում, քանզի զինական ուժի ղեկավարումն ու վարչատնտեսական կյանքի կազմակերպումը նրանք էին իրականացնում: Սպարապետությունից և հազարապետությունից զատ Հայաստանում գործում էր մի երրորդ գործակալություն ևս. դա «մեծի դատաորությունն» էր, որ, ի տարբերություն առաջին երկուսի, զգալիորեն անկախ էր պարսից գերիշխանության քնահանություններից: Այս գործակալությունը տնօրինում էր Հայ եկեղեցին: Սա նշանակում էր, որ ներքին կյանքի կարևորագույն մարզերից մեկը ներկայացնող իրավունքն ու արդարադատությունը գտնվում էր եկեղեցու ձեռքին: Երկրի ներքին կյանքը կառավարող եկեղեցու այս անկախ վիճակը բնականաբար չէր կարող չանհանգստացնել պարսից արքունիքը, որովհետև պետականության կորստից հետո գաղափարաքաղաքական կյանքի գլխավոր լծակներն իր ձեռքում պահած Հայ եկեղեցին կարևորագույն դեր էր կատարում հոգևոր կյանքում: Նա ոչ միայն կառավարն էր ներքաղաքական կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների, այլև՝ դրանք իմաստավորող, կանխանշող ուժ: Սասանյան Պարսկաստանի համար շատ ավելի վտանգավոր ու սպառնական էր նկատվում Հայ եկեղեցու արևմտյան կողմնորոշումը: Եվ պատահական չէ, որ զրադաշտա-

կանությունը պետական կրոն հռչակած Սասանյանները սկսեցին մասնավոր զգուշավորությամբ նայել Հայ եկեղեցու գործունեությանը։ Աստիճանաբար այդ վերապահ, զգուշավոր վերաբերմունքը տեղի տվեց բացահայտ թշնամանքին։ Հայ եկեղեցին համարվում էր Արևմուտքի, Բյուզանդական կայսրության գործակալը։ Ուստի Սասանյանները անապով մոլեռանդ մոգերի հարաճում պահանջին, գնալով ուժեղացնում էին եկեղեցու նկատմամբ հալածանքն ու ճնշումը։ Սասանյանների այս թշնամանքը բացորոշ քաղաքականության վերածվեց արդեն Սահակ Պարթև հայրապետի աթոռակալության օրոք (387—436 թթ.), երբ պարսից արքունիքը, վախենալով նրա ծավալած գործունեության հետևանքներից՝ մեկուսացնում է նրան, և կաթողիկոսական պառփին բազմեցնում Սուրմակին, իսկ մեկ տարի հետո՝ ազգալ ասորի Բրքիշոյին։ Հայաստանի վիճակը շատ ավելի ծանրացավ Հազկերտ Բ արքայի օրոք (439—457 թթ.)։ Իրականացնելով իր սախորդների հայտնի քաղաքականությունը՝ Հազկերտ Բ-ը նրանց գերազանցեց իր հեռուն գնացող նեմգաղալ ծրագրերով։ Նա ենթակա քրիստոնյա տերություններից զորքեր էր հավաքագրում պարսից սահմանները ասպատակող հոների դեմ։ Ենթակա երկրներին (Հայաստան, Վիրք, Ադվանք) զրկելով սեփական զինուժից՝ Սասանյանները նպատակ էին հետապնդում վերջնականապես նվաճել այդ երկրները։ Զինուժի հավաքագրումին հետևեցին պարսից արքունիքի կողմից իրականացված աշխարհագիրն ու հարկային քաղաքականության խստացումը։ Բավարար չհամարելով այս բոլորը՝ Սասանյանները հայերի ձեռքից խլեցին երկու կարևոր գործակալությունները՝ հազարապետությունն ու «մեծի դատաւորութիւն»-ը, և հանձնեցին պարսիկներին։ Սասանյանների այս քաղաքականությունը նպատակ ուներ լիովին անդամալուծել հայոց վարչաքաղաքական, հոգևոր կազմակերպությունները, և Հայաստանը դարձնել Պարսկաստանի նահանգներից մեկը։ Հայոց այսօրինակ իրավազրկումը պատճառ դարձավ ժողովրդական զանգվածների խուլ դժգոհության։ Սակայն պարսից արքունիքը չբավարարվեց ճնշման այս քաղաքականությամբ։ Նրա նպատակը հայ ազգի հոգևոր բնության՝ քրիստոնեական հավատի վերացումն էր։ Եվ չուշացավ պարսից հազարապետ Միհրներեսի սպառնական թուղթ-հրովարտակը հայոց հավատափոխության վերաբերյալ։ Թղթին պատասխանելու համար հայ ավագանին ժողով գումարեց քաղաքամայր Արտաշատում։ Ժողովը մի անգամ ևս հռչակեց խղճի ազատության մասին Հայ եկեղեցու դավանած համամարդկային գաղափարները, որոնք հաստատագրվեցին պարսից արքունիքի հոված թղթում։ Իրենց հպատակությունը հայտնելով Սասանյաններին՝ այստեղ սակայն անտեղիտալի վճռականությամբ հայտարարվում է, որ Քրիստոս Աստծո նկատմամբ հավատքից «զմեզ ոչ ոք կարէ խախտել» ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք»։ Նամակի հեղինակները նախընտրում են ազգովին նահատակվել, քան հավատափոխ լինել, մերժել Քրիստոսի սերը, անարգ կյանք ապրել, «զի եթէ անմահք իսկ էաք և մարդ էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստոսի, արժան էր, քանզի և նա անմահ էր և այնչափ սիրեաց զմեզ մինչև մահի յանձն էառ, զի և մեք նորա մահուամբն յափտենական մահուանէն ապրեացորք»։ Հայոց այս վճռականությունից սաստիկ զայրացած՝ Հազկերտ Բ-ը հայ նախարարներին պահանջում է Տիգրան ներկայանալ։ Հազկերտը այստեղ ժամանած նախարարներին մահվան սպառնալիք է կարդում՝ հավատափոխ չլինելու և կրակին չերկրպագելու դեպքում։ Ստեղծված

իրավիճակից դուրս գալու և հետագա բարդություններից խուսափելու նպատակով հայ նախարարները հարկադրաբար համաձայնում են առերես ուրանալ՝ Ավետարանի վրա երդվելով, սակայն հետագայում իրենց պայքարը շարունակել և այդ պայքարում մինչև իսկ իրենց կյանքը չխնայել։ Միայն այս պայմանով նախարարները կարողացան համոզել Հազկերտի պահանջին առավել խիզախորեն ընդդիմացող Վարդան Մամիկոնյանին։ Առերես ուրացումից հետո Հայրենիք վերադարձող նախարարների հետ պարսից արքունիքը բազմաթիվ մոգեր ուղարկեց ենթակա երկրների բնակչությանը հավատափոխ անելու նպատակով։ Սակայն մոգերի առաջին իսկ ձեռնարկումները հանդիպեցին հայ բնակչության վճռական դիմադրությանը։ Վերդովված ժողովուրդը հիմնահատակ կործանեց Անգղում, Ջարեհավանում և այլուր կառուցված ատրուշանները, երկրից փտաբեց մոգերին։ Ժողովրդական հուզումները գնալով ահագնանում էին՝ վերածվելով ապստամբական շարժման։ Այդ շարժման գլուխ անցնում է Վարդան Մամիկոնյանը, որը աշխարհիկ և հոգևոր իշխաններին գաղտնի խորհրդակցության է հրավիրում պարսից դեմ պատերազմելու համար։ Խորհրդակցության ժամանակ ընդունված որոշումներն առժամանակ ծածուկ պահվեցին միայն դեպքերի բերումով ապստամբական շարժմանը հարած մարզպան Վասակ Սյունուց, որը համաձայն Եղիշեի հաղորդման, գործակցում էր պարսից արքունիքի հետ։ Այնուհետ Անգղում նախարարներն ու աշխարհագորայիները Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հանդիսավորապես, բարձրադասակ գոչումով երդվում են. «Պատրաստ ենք ի հալածանս և ի մահ և լամեհայն նեղութիւնս եւ ի չարչարանս վասն սուրբ եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութեամբ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերստին ծնաք ի մի յոյս հաւատոցն մկրտութեամբն ի Քրիստոս Յիսուս, ըստ նմին նմանութեան կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս։ Բանգի հայր մեր գտորբ Աւետարանն գիտեմք և մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ. մի ոք չար անջրպետ ի մէջ անկեալ՝ զմեզ քակեացէ ի սմանէ»։ Այս անդրդվելի վճռականությամբ նախարարներն ու աշխարհագորայիները խմբվեցին Վարդանի շուրջը։ Հայոց աշխարհագորը գրավում էր կենտրոնական շրջանների, մասնավորաբար Այրարատ նահանգի ռազմական կարևորություն ունեցող կետերը, երկրից փտարում այդ շրջաններում բույն դրած պարսից կայագորները։ Սակայն այս հաջողությունները չէին կարող էապես փոխել իրավիճակը։ Բանն այն էր, որ Հայոց ապստամբական շարժմանը ջերմորեն արձագանքած Թեոդոսիոս Բ կայսեր մահից (450 թ.) հետո, Բյուզանդիայի նոր կայսր Մարկիանոսը, կայսրության մեջ ստեղծված քաղաքական բարդ կացության պատճառով, մերժում է հայերի խնդրանքը։ Այսպիսով Հայաստանը մնում է մեն-մենակ անեղ թշնամու առջև։ Արտաքին քաղաքականության մեջ օրավոր ապստամական դարձող իրավիճակը է՛լ ավելի է բարդանում ներքաղաքական պայքարի, նախարարական տարբեր տների մեջ նկատվող տարաձայնությունների ու գծությունների պատճառով։ Գծություններ, որոնք ճարպկորեն օգտագործվում էին քաղաքական հեռագնա ակնկալություններ ունեցող Վասակ Սյունու կողմից։ Նրա տեղագիրն ճիգերը տալիս են իրենց դառնալի պտուղները. ապստամբությանը չեն մասնակցում Աղձնիքը, Կորյուքը, Տնորիքը և Հայաստանի մի շարք ծայրագավառները։ Վասակ Սյունուց տեղեկանալով Հայոց գորքի տեղաշարժերի և ռազմավարական ծրագրերի մասին՝ Միհրներսեսին պարսից զորապետ է նշանակում Մուշկան

Նիսալավորտիւն և ուղևորվում Հազկերտի մոտ՝ նրան հայտնելու ստեղծված կացության մասին: 451-ի ապրիլին պարսից զորքը Փայտակարանից տեղափոխվում է Հեր և Զարևանդ գավառների մոտ, որտեղից պատրաստվում է ներխուժել Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայր:

Հայոց զորաբանակի մարտական ոգին բարձր պահելու նպատակով Արտաշատում գումարված զորահանդեսի պահին Վարդան Մամիկոնյանը նրանց քաջալերում է հավատքի և հույսի ապրեցնող պատգամներով, որոնք լիովին կարող էին պատշաճել Գողիաթի դեմ զնացող կորույի Դավթին. «Արդ, աղաչեմ զձեզ, ով քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձեզ լաւագոյն էք քան զիս արդեանք եւ ջանա ի վեր ըստ հայրենի պատուոյն: Բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զորագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեցին քանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց: Մի երկուցեալ զանգիտեցուք ի բազմութենէ հեթանոսացն եւ մի յահագին սրոյ առն մահկանացոյի զթիկունս դարձուցուք, զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեցուք զգօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան, եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկազուք խնդութեամբ արտի, բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեցուք»: Հիրավի սուրբգրային շունչ ու թոխչք ունեցող այս պատգամը դրոշմելով իրենց արտի արբազնասուրբ խորանի մէջ՝ հայ զինվորները պատրաստվեցին կենաց և մահու կոյի, որ տեղի ունեցաւ 451 թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին: Թվով անհամեմատ գերազանց պարսից բանակի առջև կանգնած էր Հայոց փոքրաթիվ զորաբանակը: Դաժան և անտեղիտալի էր պատերազմը: Բախվում էին երկու ուժեր՝ սուրկություն ու մահ բերող պարսից բանակը և իր գոյատևման, հավատքի, ազգային արժանապատվության համար մեկ Ոգի, Կամք ու Միտք դարձած հայ ժողովուրդը: Ավարայրը դարձել էր լույսի և խավարի բախման թատերաբեմ: Գուպարում էին երկու անհաշտելի սկիզբ՝ Ոգին և Նյութը, ստորին բնագոյներն ու երկնաթիռն միտքը, նյութապաշտությունն ու վերինը խրճատող ոգեկանությունը, քրիստոնեությունն ու հեթանոսությունը: Թեպետ Եղիշեն հաղորդում է, որ «ոչ եթէ կողմ էր», որ յաղթեաց եւ կողմ էր, որ պարտեցաւ», սակայն հաղթանակը Ոգու կողմն էր: Ինչո՞ւ. քանզի հավատքի և հայրենյաց տեալականը առարկայացաւ նահատակությամբ, որի լույսը Վարդանների, Խորենների, Արտակների և այլոց առաջնորդեց դեպի երկինք, և հետագա սերունդներին ուսուցանեց ապրել ոչ թե առոնհն, առօրեական հոգսերով, մեղավոր խորհուրդների ծնունդ սնափառ ակրնկալություններով, այլ բացառապէս երկնքի շահերով: Պատմությունը մեկ անգամ չէ, որ ցույց է տվել՝ քանի դեռ մարդն ապրում է որպէս երկնքի քաղաքացի՝ նա կարողանում է դիմակայել բոլոր փորձությունները և իր մեջ ներդաշնակել երկնավոր և երկրավոր հայրենյաց շահերը, մինչդեռ ամեն նահանջ այս սկզբունքից միշտ էլ կործանարար է եղել մեզ համար:

Հաճախ ապրում է, Հայ Եկեղեցին սրբացրեց Վարդանանց սխրանքը, լրացնելով այս միտքը՝ պետք է հաստատել. Վարդանանց սխրանքը առավելագույնս սրբագործեց Հայ Եկեղեցին: Այն առավելագույնս ոգեղինացրեց Հայ Եկեղեցին, նվիրագործեց հայ սերունդների հիշողությունը՝ լինելով ու մնալով աղբյուրը լուստ և ապրեցնող ներշնչանքի, քանզի «Եկեղեցիք Հայաստանայց պայծառապէս զարդարեցան՝ ունելով միշտ բարեխօս զճգնութիւն մարտի սոցա»:

Այսօր ևս փորձության մեջ է հայ ազգը, այսօր ևս ավարարված է Հայաստանն իր Արցախ աշխարհով, այսօր ևս մեզ անհրաժեշտ է ղևհողության հրաշունջ օրհնությունն ու վարդաճանց խրոխտ ոգին, այսօր ևս ազգովին ակնկալում ենք նրանց բարեխոսությունը: Մերօրյա այդ պայքարի մեջ իր կարելին չի խնայում Հայոց Հայրապետը: Օգտվելով պահից՝ թույլ տվեք Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության և ձեր բոլորի անունից ի սրտե շնորհավորել Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսին իր քահանայական ձեռնադրության և անվանակոչության 50-ամյակի բարեպատեն և սոփոփ, Նրան ցանկալ ուժ և կորով իր ազգօգուտ գործունեության մեջ:

Հավերժ փառք Վարդաճանց և Ղևհողյանց ...

ԽՈՂԵՆԿ և օրհնությունն նրանց անմար հիշատակին ...

Բանախոսությունից հետո հոգևոր ճեմարանի սաները, եկեղեցական երաժշտության դասախոս Խորեն Պալյանի ղեկավարությամբ, կատարեցին Մ. Եկմալյանի «Ով դու բարեկամ» երգը: Ճեմարանի Դ լսարանի սան Եղիա Օհանյանը արտասանեց Վ. Թեքեյանի «Վարդաճանց» բանաստեղծությունը, իսկ Ե լսարանի ուսանող բրշ. Համլետ սրկ. Մեհրաբյանը Եղիշեից ընթերցեց հատված Վարդանի ճառից: Որից հետո հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ ՀՀՆԵԿԻՆ Մ. Եկմալյանի «Լոնց», Գարեգին եպս. Սրվանձության «Գողթնի քնար» և հայր Ղևհող Ալիշանի «Պապուն Ավարայրի» սրտառու էրգերը (մեմակատար՝ Դ լսարանի սան Վազգեն Գալստյան): Ապա ճեմարանի ուսանողությունը խանդավառությամբ հնչեցրեց Կոմիտաս վարդապետի «Իմ հայրենյաց» և «Ով հաշկազունք» գեղեցկահուն էրգերը:

Այնուհետև Էջմիածին քաղաքի Ա. Աստվածածին եկեղեցու մանկանց երգչախումբը, ղեկավարությամբ արժանապատիվ Տ. Հովսեփ քին. Հակոբյանի, կատարեց Վարդաճանց հերոսամարտին նվիրված մի բանի շարականներ և երգեր:

Հանդիսության վերջում գոհունակության և օրհնության խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը:

ՆԵՐՍԵՍ ՍՐԲԱԶԱՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍԷԸ

Վեհափառ Տեր,

Գերաշնորհ և հոգեշնորհ եղբայրներ, հարգարժան Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, սիրելի ներկաներ: Երեկ երեկոյան նախատոնական արարողությամբ սկսեցինք Վարդաճանց հիշատակը տոնախմբել Մայր Աթոռ Ա. Էջմիածնում, ինչպես նաև Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Այս առավոտ մեր հոգևոր ճեմարանի սաները խոստովանությունից հետո ա. հաղորդություն ստացան: Վարդաճանց անմահ հիշատակին սուրբ պատարագի հոգեպարար արարողության և հոգեշնորհ Տ. Նաթան վարդապետի զգացումներով լի քարոզից հետո եկանք Վեհափառ հանդես կատարելու Վարդաճանց հերոսամարտին նվիրված: Այստեղ վայելեցինք հոգևոր ճեմարանի տեսուչ Գերաշնորհ Տեր Անանիա եպիսկոպոսի խոհական բացման խոսքը և հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Բյուսեյանի կոտ ու գեղեցիկ բանախոսությունները Վար-

դանանց անմահ հիշատակին նվիրված: Այստեղ նաև հոգևոր ճանապարհի սաների քաղցր երգերն ու արտասանությունները և անակնկալ կերպով ներկայացված Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հովսեփի ավագ բաժնականի մանուկների երգչախմբի գեղեցկորեն կատարված երգերը վայելեցին: Այսպիսով հոգևին մենք մի անգամ ևս փոխադրվեցինք մեր առօրյա սովորական կյանքից դուրս, բարձրանալով ոգեկան ոլորտներն, այստեղ հաղորդվելու համար նրանց հետ, որոնք 451 թվականին անխառն համոզումով և մաքուր հավատով լիցքավորված կարողացան դիմադրել իրենցից շատ ավելի հզոր, թվով բազմապատիկ պարսից բանակի դեմ: Եվ այդ մարտը բարու և չարի մարտը եղավ, լույսի և խավարի մարտ և այդ մարտի մասին մեր սրբազան շարականագիրը՝ Ս. Ներսես Ծնորհավին, իր գրած շարականի ողորմյալի բաժնի երկրորդ տան մեջ հետևյալ բացատրությունն է տալիս. «Հրով հոգւոյն շիշուցին զբոցն զկրակապաշտ պարսիցն»: Սույն նախադասությունը շատ հետաքրքրական է, հոգու հրով, մարեցին, հանգրեցին կրակապաշտ պարսիկների կրոնի կրակի բոցերը, այսինքն՝ ինչպես Քրիստոսի հարության ժամանակ հայտարարվում է «Մահուամբ զմահ կոխեաց», նույն բացատրությունը և նույն հասկացողությունը և նույն ըմբռնողությունը տեսիլապաշտ գտնում ենք Վարդանանց ոգու արիությունը բացատրելու համար, այս ոգին արտահայտությունն է միայն հավատի թռիչքն ունեցող ժողովուրդների: Այս նույն հոգին, սիրելի հանդիսականներ, Վարդանանց օրերից մինչև այսօր գոյատևում է հայ ժողովրդի մեջ, ոչ միայն Վարդանանցով սկսվեց Վարդանանց պատերազմը, այլ նրանից շատ առաջ այդ սկսվեց: Սակայն Վարդանանց պատերազմով իր գագաթնակետին հասավ այդ գոյության պայքարն ու մարտը, և այսօր Վարդանանց այդ բարձունքից մինչև մեր օրերը այդ մարտը տևապես գոյություն ունի մեր կյանքում, երբեմն բուռն չափերով, դեմ դիմաց պայքարով, երբեմն լուռ ու ծածուկ: Հաճախ սպառնալով մեր ինքնությունը, մեր հայրենասիրությանը և մեր հավատքին: Փորձելով բաժանել մեր ժողովուրդը և կոտորակել այս, մասամբ վնասելով մեզ, բայց երբեք չկարողանալով մեզ ընկճել:


Մենք ձմռան այս օրերին որքան կարիքն ունենք արևի և ջերմության: Իսկ մեր հոգու հանգչող ջահը բոցավառելու համար այս ձմռան օրերին տոնում ենք Վարդանանց անմահ հիշատակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, և բոլոր մեր եկեղեցիներում հայ ժողովրդի համար այս օրը սրբազան օր է, և այս օրը ավելի գեղեցկանում է, ավելի է ոգեղինանում, երբ Վարդանանց տոնի օրը տոնավաճառում ենք անվանակոչությունը մեր սիրելի Վեհափառ Հայրապետի՝ Վազգեն Ա. Կաթողիկոսի: Սա խորհրդանշական տոն է, որովհետև Վարդան ցորավարի բանակում Վազգենների, Արտակների, Խորենների, Տաճատների ներկայությունը այսօր խորհրդանշական կերպով կենտրոնանում է մեր Վեհափառ Հայրապետի անձի մեջ: Նրա անձի մեջ է խտանում մի գեղեցիկ գաղափար: Իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պետ, իբրև Հայաստանյայց Եկեղեցու զինվորյալ միաբանության գլուխ և սպարապետ, Վեհափառ Հայրապետը բոլոր տեսակի դժվարությունների առջև ինքն է կանգնած առաջինը, ինքն է ներկա լուռ ու ծածուկ պատերազմների առջև և իր իմաստությամբ, իր խոհեմությամբ կարողանում է մեր կյանքի այս տագնապալի օրերին բոլոր դժվարություններին դեմ դնել: Տե՛սե՛ք, թե՛ ինչպիսի՜ հետաքրքրական ժամանակաշրջան Հայոց Հայրապետին բաժին ընկավ 1955 թվականից մինչև այսօր: Ծատ հետաքրքրական


Է, այնպիսի շրջանում Հայոց Հայրապետը ընտրվեց, երբ Հայաստանի մեջ միայն մատի վրա հաշվվող գործող եկեղեցիներ կային, և կրոնը պաշտոնապես մեր երկրում արտոնված չէր, և իրավական անձ չէր համարվում կրոնի ղեկավարը կամ կրոնականը: Սակայն ժամանակները Սուրբ Հոգու գործությամբ փոխվեցին «զհրով հոգւոյն շիջուցին զբոց գկրակապաշտ պարսից», նորից իրականացավ հազարամյա կորստից հետո հայկական իշխանությունը, նորից է բացվում հույսի դուռը մեր երազած Հայաստանի անկախության: Հայոց Հայրապետը լինում է հին շրջանի վկան իր իմաստությամբ և իր համատ աշխատանքով:

Վեհափառ Տեր, Վարդանանց այս հիշատակության գեղեցիկ օրվա առթիվ մեր մաղթանքն է, որ Աստված Զեզ երկար քաջատողջ կյանք պարգևի: Մնացեք և եղեք, ինչպես որ եղաք սպարապետը մեր հոգևոր կյանքի, և առաջնորդեցեք մեզ՝ նմանյալ Մովսեսի դեպի Ավետյալ երկիրը: Թող Աստված Զեզ անապառ ուժ պարգևի և տա Աստված, որ մեր երկրի բոլոր դժվարությունները, մեր երկրի բոլոր խնդիրները կարողանան հեշտությամբ լուծել, թող դադարի արյան հեղումը Արցախում, որպեսզի կարողանանք ապրել երջանիկ մեր երկրում՝ վայելելով Հայաստանի անկախության բոլոր բարիքները:

Թող օրհնյալ լինի Վարդանանց հիշատակը և նրանց ոգին հավետ ապրի մեր մեջ, այժմ և հավիտյանս ամեն:

Ավարայրի հերոսամարտին նվիրված հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:





ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
1500-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ՑԵՐԵԿՈՒՅԹ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 25-ին, չորեքշաբթի, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Պատմաֆայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակին:

Հանդիսությանը նախագահում էր Մայր Աթոռի դիվանապետ, հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոգապալյանը: Հանդիսությանը ներկա էին Մայրավանքի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հյուրեր:

Ցերեկույթը սկսվեց Տերունական աղոթքով: Ապա ճեմարանի սաները ոգևորությամբ հնչեցրին հոգևոր ճեմարանի քայլերգը: Հանդիսությունը ներածական խոսքով բացեց հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաշյանը: Սրբազան հոր ոգեշունչ խոսքից հետո, «Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» խորագրով բանախոսությամբ հանդես եկավ հոգևոր ճեմարանի «Հայ ժողովրդի պատմության» դասախոս պրն. Գնել Գրիգորյանը:

«Ե դարում հայոց պատմության մեջ տեղի ունեցան այնպիսի կարևոր իրադարձություններ, որոնք իրենց խոր հետքը թողեցին հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Այդ իրադարձություններն էին ա. Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումը, Վարդանանց զինյալ մաքառումը և Մովսես Խորենացու Հայոց պատմության կոթողային երկի երևան գալը:

Դժվար է այս իրադարձություններից մեկն ու մեկին նախապատվություն տալ, որովհետև դրանք իրենց նշանակությամբ հավասարազոր են: Իրոք որ այդ երեքն էլ ծառայել են մեկ նպատակի՝ իր անկախության ու ազատության համար մաքառող ժողովրդի ձեռքին եղել են հատու սուր և ամուր գրամ:

Այս իրադարձությունները կյանքի կոչվեցին պատմական անհրաժեշտությամբ, ժամանակի հրամայականով: Քաղաքական անկախությունը կորցրած և օտարների ոտնձգություններից ենթակա ժողովուրդը նրանց դեմ ծա-

ուսնում էր մերթ զենթով, մերթ սեփական գրերով, մերթ էլ անցյալի հերտաական դրվագների մեջ խորամուխ լինելով ու փորձության անեղ ժամերին դրանք վկայակոչելով:

Եթե ս. Մեսրոպ Մաշտոցի դարագլուխ կազմող գրերի գյուտով արգասավորվեց ու զարգացավ սեփական գիրն ու գրականությունը, ապա Մովսես Խորենացու Հայոց պատմությամբ առաջին անգամ ստեղծվեց հայոց ամբողջական պատմությունը, վեր հանվեց ժողովրդի հերտաական անցյալը, ձևավորվեց նրա պատմական հիշողությունը, որը հետագա դարերում առավել խորացավ ու հարատևեց:

Մովսես Խորենացին ասպարեզ եկավ մի դարաշրջանում, երբ հունահռոմեական պատմագրությունն իր մայրամուտի շեմին էր, իսկ բյուզանդականը՝ նոր-նոր էր առաջին քայլերն անում: Ահա այս տեսանկյունով եթե գնահատելու լինենք նրա տեղն ու դերը, ապա այն դուրս է գալիս ազգային շրջանակներից և համաշխարհային նշանակություն է ձեռք բերում:

Մովսես Խորենացին ծնվել է մոտավորապես 410 թ.: Նա իր ժամանակաշրջանի այն անձանցից էր, ովքեր ստացել էին հիմնավոր և փայլուն կրթություն: Հայրենիքում կրթություն ստանալուց հետո նա ս. Սահակի և ս. Մեսրոպի ջանքերով մի խումբ երիտասարդների հետ ուղարկվեց Ալեքսանդրիա՝ գիտությունների այն ժամանակվա կենտրոն, որտեղ խորացավ աստվածաբանության, հունարենի, պոետիկայի, հռետորության, քերականության, փիլիսոփայության և հին հունական գրականության մեջ:

Իր ժամանակի հարուստ գիտելիքներով առկեցուն Մովսես Խորենացին վերադարձավ հայրենիք և լծվեց իր նվիրական ու սուրբ գործին: Կրանքի վերջին տարիներին նա Սահակ Բագրատունի իշխանի հորդորանքով ձեռնամուխ եղավ հայոց պատմությանը, որն իրականացրեց մեծագույն վարպետությամբ:

Պատմահոր երկը բաղկացած է երեք մասից, որոնք գիրք են կոչվում: Առաջին մասը, որ կրում է «Ծննդաբանություն հայոց մեծաց» խորագիրը, սկսվում է նահապետական ժամանակներից և հասնում Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները: Երկրորդ մասում վերնագրված «Բան միջին պատմութեան մերոցն հայրենեաց» պատմության շարադրանքը հասցվում է մինչև մեր թվարկության Գ դարը: Վերջին մասը՝ «Անարտաբանութիւն մերոց հայրենեաց», քնդգրկում է Տրդատ Մեծի մահից մինչև Արշակունյաց թագավորության բարձունքը: Հայոց պատմությունը եզրափակվում է նշանավոր Ողբով:

Իր պատմությունը ստեղծելիս Քերթովահայրն օգտագործել է բազմաթիվ և բազմազան սկզբնաղբյուրներ, մի աշխատանք, որ նույնիսկ այսօրվա չափանիշներով զարմանք և հիացմունք է հարուցում:

Խորենացին հիշատակում է հետևյալ աղբյուրները՝ Սուրբ Գիրք, Մար Աբաս Կատինա, Հովհանոս Ափրիկանոս, Եվսեբիոս Կեսարացի, Հովսեփոս Փլավիոս, Լարոնիա Եղեսացի, Փերմելիանոս եպիսկոպոս, Ագաթանգեղոս, Հիպոլիտոս, Մանեթոն, Ողյունայ Բուրմ, Արիստոն Փեղղացի, Բարդանան, Բարծումա, Հոմերոս, Պլատոն, Կորյուն, Փավստոս, Կոնստան Ալեքսանդրացի, Դիոդորոս Սիկիլացի, Փիլոն Երրայեցի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիազացի, Կեղծ Կալիստենես, Սոկրատի եկեղեցական պատմությունը, Սեդեկարոսի վարքը և ուրիշներ:

Բացի պատմիչների ու մատենագիրների երկասիրություններից, Պատմահայրն օգտագործել է վիմագրական արձանագրությունները թագավորնե-

րի և այլ գործիչների կողմից գրված ու ստացված նամակները, գրությունները, տարբեր թղթերն ու ճառերը: Գրավոր վավերագրերի հետ միասին մեր պատմիչը մեծապես օգտվել է նաև բանավոր սկզբնաղբյուրներից: Սրանց մեջ հիշարժան են լեգենդներն ու առասպելները, որոնցից է օրինակ Վահագնի ծնունդը գողտրիկ երգը, պատմական ավանդությունները, որոնք մա լսել է վիպասաններից, ինչպիսին է օրինակ Արտաշեսի և Սաթենիկի պատմությունը: Վերջապես սկզբնաղբյուրների այս խմբին են պատկանում հայկական նախարարական տոհմերի ծագման և նրանց գործունեության մասին պատմող գրուցավեպերը:

Սկզբնաղբյուրների թվին պետք է դասել նաև պատմիչի կողմից օգտագործված նյութական մշակույթի հուշարձանները, քաղաքները, բերդերը, ամրոցները, տաճարները, ջրանցքները և այլն: Անկարևոր չէ նաև պատմիչի կողմից իրեն սկզբնաղբյուր լեզվական տվյալների օգտագործումը: Խորենացին տարբեր անուններից բխեցնում և ստուգաբանում է Հայաստանի նախարարական տների, աշխարհագրական վայրերի անունները: Միշտ է, այս դեպքում պատմիչի ստուգաբանությունները հաճախ կամայական են, սակայն դրանք պատմական աղումով արժեքավոր են, որովհետև ժողովրդական ստուգաբանություններից են բխում:

Հիշյալ բազմաթիվ ու բազմազան սկզբնաղբյուրների, հաճախ նաև հակասական ու միմյանց բացասող տեղեկությունների ժողովումը դեռևս չէր նշանակում պատմության ստեղծում: Անհրաժեշտ էր այդ տեղեկությունները մշակել, դրանք ենթարկել գիտական որոշակի կոտ մի համակարգի, մի հանգամանք, որը Խորենացին իրագործեց մեծագույն վարպետությամբ: Պատմությունը Խորենացու համար անցյալի դեպքերի, անցքերի և իրադարձությունների ստույգ վերարտադրումն է, ճշմարտացի պատկերումն ու նկարագրությունը: Պատմահայրը պատմագրության մեջ առաջինը մոցրեց ժամանակագրությունը, առանց որի, իր ասելով, ստույգ պատմություն գոյություն չունի:

Հայոց պատմությունը գրվել է համաշխարհային պատմության հենքի վրա: Նրանում արժեքավոր տեղեկություններ կան ոչ միայն Հայաստանի, այլև նրա մերձավոր ու հեռավոր բազում երկրների ու ժողովուրդների պատմության վերաբերյալ: Այս աղումով Խորենացու մատյանը ձեռք է բերել համաշխարհային արժեք ու նշանակություն:

Մովսես Խորենացին իր ժողովրդի դարավոր կյանքի պատմական իրադարձությունները սոսկ ստոն ու անաչառ արձանագրող չէ, նա իր բոլոր էությունը շաղկապված է այդ իրադարձություններին, խորապես ապրում է դրանցով: Նա գնահատանքի ու մեծարանքի տուրք է տալիս իր ժողովրդին ու հայրենիքին, նրա բարգավաճմանը նվիրված անհատներին ու ընդհանրապես ձաղկում, պարսավում կամ անարգանքի սյունին է գամում հայրենիքի դավաճաններին: Մեծ պատմաբանը կարողանում է պատմական երևույթներն ըստ արժանվույն գնահատել: Այսօր էլ խիստ ալժմեական հնչեղություն ունի Մովսես Խորենացու մեր ազգին տրված գնահատականը. «Ջի թեպեւ և եմք ածու փոքր, և թոռով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տրկար, և ընդ այլով յոյժ անգամ նուանեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի»: Իրոք որ:

Լևոն Ծանթի դիպուկ բնութագրմամբ Մովսես Խորենացու «Գիրքը ասպորդ, տևող, չմեռնող խոսք է, որ տարածություններուն և ժամանակներուն վը-

բայն կիսոսի հեռավորներուն, եկող սերունդներուն, գալիք սերունդներուն և այդ բոլորը կկապե իրար, բոլորին զգալ կուտա իրենց կապը, իրենց ընդհանուր անհատականությունը և կսրբնացնե ազգային գիտակցությունը, որը ավելի ևս ուժ կուտա անոնց ազգային բնական զգացումին ու բնազդին: Եվ կծնի պահանջը ունենալու երկ մը որուն մեջ նկատված ըլլա այդ ընդհանուր ու նոր լրիվ պատկերը, իր ծագումը, իր անցյալը, ներկան, իր ամբողջ կենսագրությունը, իրեն միության նոր և ուժեղ օղակ մը: Որովհետև այդ պահանջին ծնունդն է Մովսես Խորենացիին «Հայոց պատմությունը»:

Մովսես Խորենացու Հայոց Պատմությունը դարեր շարունակ կրթել ու դաստիարակել է բազում սերունդների: Դարերի ընթացքում նրա հայոց պատմությունը մնաց անգերազանցելի, իրեն կոթողային մի ստեղծագործություն: Մովսես Խորենացու գործը դեպի անմահություն է տարել ոչ միայն նրա հեղինակին, այլև այդ հեղինակին ծնող ժողովրդին»:

Այնուհետև Քերթովահոր հոգևոր ժառանգության մասին՝ «Մովսես Խորենացին շարականագիր» լայնածավալ թեմայով բանախոսեց հոգևոր ճեմարանի շարականագիտության դասախոս պրն. Խորեն Պալյանը:

«Եկեղեցական ավանդությունը Խորենացուն է ընծայում մի շարք հոգևոր երգեր ու կանոններ:

Բացի ավանդությունից, մեզ են հասել նաև մի քանի ցուցակներ, որոնց հեղինակները աշխատել են ցույց տալ, թե այս կամ այն կանոնը կամ երգը ո՞ւմ կողմից է հորինվել: Հիշյալ ցուցակները վեցն են: Ստորև ներկայացնում ենք այդ ցուցակները՝ ըստ Հ. Անասյանի մատենագիտության:

Սարգիս Երեցի ցուցակ 13-րդ դար.

Գր. Տաթևացու ցուցակ՝ ըստ «Հարցմանց գրքի».

Անանուն խմբագիր 18-րդ դար.

Առաքել Սյունեցու ցուցակ, չափածո է.

Ստեփանոս Զիգ Զուղայեցու ցուցակ, չափածո.

Հակոբ Սսեցու ցուցակ, չափածո.

Հիշյալ ցուցակներում առկա վերագրումները հիմնականում համընկնում են, բացառություն է կազմում Սարգիս Երեցի ցուցակը, որն ունի որոշակի տարբերություններ: Ահա Անանուն խմբագրի այն տողերը, որոնք վերաբերում են Խորենացուն վերագրվող երգերին.

«Սուրբն Մովսես քերթող զճրագալուցի ուրախացիրն, զկարգն ծննդեան և զԱնթառամն, զՏեառն ընդառաջին, զՅարութեան հարցան, և զառաջին պատկերեն հոգույ գալստեան, զվարդավառին, և զվերափոխման և զմեծացուցեքն»: Բացի փրկչի Աստուածայտնութեան կանոնի Ուրախացիր Սրբոհի օրհնությունից, Խորենացուն են վերագրվում նաև Փրկչի հրաշափառ ծննդյան ութօրեքի կանոնները: Հայտնի է, որ ծննդյան ութօրեքը ձգվում է հունվարի 6—13, և եզրափակվում է Քրիստոսի անվանակոչության տոնով:

Գիտենք, որ Հայաստանյայց Եկեղեցին մի շարք տերմինի տոներ կատարում է ութ, երբեմն ինը օրեր:

Այսպես, Աստվածամոր վերափոխման տոնը, որ մեր եկեղեցվո 5 տաղավարներից մեկն է, մեր եկեղեցին տոնում է ինը օրեր. այն սկսում է Կիրակի և շարունակվում է մինչև հաջորդ երկուշաբթին ներառյալ:

Խաչվերացի տոնը կատարվում է ութ օր՝ շաբաթից մինչև մյուս շաբաթ օրը: Ասենք նաև, որ Փրկչի ծննդյան և Խաչվերացի ութօրյա տոնախմբու-

թյան համար մեր եկեղեցին ունի համապատասխանաբար ութ շարականա-
յին հատուկ կանոններ՝ որոնցից առաջինին՝ ծննդյան ութօրեքի հեղինակը
Մ. Խորենացին է, իսկ խաչի կանոններինը՝ Սահակ Զորափորեցի կամ Ար-
քուղեցի Հայրապետը, որն ապրել է 7—8-րդ դարերում:

Հաշվի առնելով ժամանակի տղությունը, մենք այսօր կանգ կառնենք
Հենդյան ութօրեքի կանոնների վրա:

Ահա այդ կանոններն ըստ տպագիր շարակնոցի.

«Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին».

Օրհն. ԲԶ «Ուրախացիր սրբունի».

Հարց. ԴԶ «Որ դասուց երկնատրաց».

Մեծ. ԴԶ «Ուրախացիր Աստուածածին».

Ողբ. ԲԶ «Անկանիմք առաջի քո».

Տ. յերկ. ԲԶ «Օրհնենք զքեզ».

Մնկ. ԴԶ «Ծագումն հրաշալի».

Ծջ. ԳԶ «Զանճառելի լուսոյ մայր».

Կանոնի օրհնությունը բաղկացած է երկու պատկերից երեքական տնե-
րով: Ծարականագիրը Ս. Կույսին բերում է Գաբրիել հրեշտակապետի ավե-
տիսը՝ ըստ Ղուկասի Ավետարանի Ա գլխի 28—29 և 35 համարների:

1 Ուրախացիր Սրբունի Գաբրիելի ատենտաք,

որ քարոզեացն զգալուստ արքային Տեառն ի յերկնից:

2 Ողջոյն ընդ քեզ Մարիամ ի քեզ Սուրբ Հոգին եկեացէ. եւ զարույթին
բարձրելոյն ի վերայ քո հովանացի:

Ինչպես տեսանք, սա Ավետարանի խոսքերի լոկ շարադրանք չէ, այլ
բանաստեղծի կողմից վերերգված ինքնատիպ մի ստեղծագործություն: Ոչ
միայն օրհնության շարականի տողերն են ուղղված Աստվածամորը, այլ
նաև կանոնի բոլոր բաղադրիչները, որոնց մեջ շարականագիրը ստեղծում է
սքանչելի պատկերներ՝ միշտ պահպանելով լեզվի պարզությունն ու ոճի գե-
ղեցկությունը:

Գեղեցիկ է կանոնի հարցի շարականը. հեղինակը ավելի շատ խորհրդ-
դածում է Աստվածորդու մարդեղության ու փրկագործության հանգամանք-
ների շուրջ.

1 Որ դասուց երկնատրաց անիմանալի,

Այսօր հողեղինաց յայտնեցեր զծածկեալ խորհուրդ...

2 Որ բազմաչեալ Քրովբէից անտեսանելի,

Կերպացեալ զմերս ի սրբոյ կուսէն տնօրինաբար...

3 Որ այսօր մարմնացաւ ի սրբոյ կուսէն յաղագս անծիծիցն, եւ երարձ զպա-
տուհաս նախաստեղծիցն...:

Երգի յուրաքանչյուր տողի մեջ, Խորենացին աշխատում է ցույց տալ,
չեշտել Փրկչի մարդեղության նպատակներն ու նրանց կենսագործումները,
բացահայտել այդ ամենը ըստ ընդհանրական եկեղեցու ուղղափառ դավա-
նության:

Առանձին արժեք ունի նաև այս կանոնի մանկույնը, որը միակ ման-
կույնն է Ութօրեքի շարքում: Ահա այն.

1 Ծագումն հրաշալի, որ անյայտ էր ի մէջ,

Եւ Բանն հայրական անըմբռնելի,

Հոր փառակնացեալ և ի մարմնի բնակեցաւ,

Անվնաս պահելով, զարարածս ամենայն:

2 Ծագումն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ,

Ծառագայթելով զարարածս ամենայն,
Երկինք ցնծային և երկիրս ուրախանայր,
Եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ:

- 3 Առ քեզ ապաիւնիմք ամենասրբոյնի,
Գերագոյն և հրաշալի, և բաշխող բարութեանց,
Աղբիւր եւ ծարաւեաց և հանգիստ աշխատելոց,
Եւ եղեր վերընկալ Աստուածային Բանին:

Եռատուն այս չքնաղ գոհարը, որ մեր լայնաշունչ շարականներից մեկն է, Աստվածաբանական խորը հագեցվածությամբ զուգընթաց, ունի նաև գեղարվեստական մեծ արժեք, և էթե դրանց ավելացնենք նաև շարականի անմման ու հոգեզմայլ մեղեդին՝ ԴՁ ձայնեղանակի բնորոշ տարբերակով հորինված, ապա կարելի է ասել, որ այն համաքրիստոնեական հոգևոր երգասացության կատարյալ գոհարներից է: Կանոն Աստուածայայտնութեան Ա. ատուրն.

Օրհն. ԴԿ. «Խորհուրդ մեծ և սքանչելի» 9 տուն 3 պատկեր.

Հրց. ԳՁ «Անկիզբն էակից բանն համար».

Մեծ. ԳՁ «Ուրախ լեր Աստուածածին յոյս».

Ողբմ. ԳՁ «Ամենիմաստ ամենից հայր».

Տ. յերկ. ԳՁ «Ծառագայթ և կերպարան».

ԾՁ. ԳՁ «Սուրբ գԱստուածածին».

Ինչպես տեսնում ենք այս կանոնի բաղադրիչների մեղեդային կառուցվածքը խիստ միասնական է, բացի օրհնությունից, որն ունի ԴԿ ձայնեղանակ, մնացած միավորները հորինված են ԳՁ ձայնեղանակի ամենաբնորոշ տարբերակով:

Կանոնին մաս կազմող բոլոր երգերում շարականագիրը պարզ ու հակիրճ ոճով պատմում է Փրկչի ծնունդը ըստ Ավետարանի: Ոչ մի ավելորդ բառ կամ հնչյուն:

Անկասկած մեր քնարերգության այս առաջին նմուշները դարձան մեր բանաստեղծության հետագա զարգացման հիմնաքարերն ու չափանիշները:

Այս և Ութօրեքի մյուս կանոնների երգերում պարզորոշ կերպով արտացոլված է սրբազան շարականագրի մեկ ուրիշ կարևոր նպատակը, այն է, ցույց տալ, շեշտել մեր եկեղեցու դավանական տեսակետները:

Մեր շարակնոցում դավանաբանական աստվածաբանական խնդիրներ արծարծող և դրանք լավագույնս արտացոլող առաջին երգերը Ս. Սահակին վերագրվող երգերն են ու Խորենացու մոտ թվում է, թե Ութօրեքի երգերում դավանական որոշ տեսակետներ ու խնդիրներ կրկնվում են: Կարծում ենք, որ հեղինակը այդ արել է հատուկ նպատակով: Կրկնվում են այդ, սակայն բոլորովին էլ կրկնություն չեն դրանք, քանի որ հեղինակը կարողանում է նոր խոսքով, նոր կառույցի միջոցով երկրորդել, շեշտել իր ասելիքը: Ահա մի նմուշ.

1. Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ յատուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան անեռիս աշխարհի:

2. Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի
Որդիք մարդկան օրհնեցէք, Զի վասն մեր մարմնացաւ:

3. Անբաւելին երկնի և երկրի, ի խանձարուրս պատեցաւ, Ոչ մեկնելով ի հաւրէ, ի սուրբ այրին բազմեցաւ:

Ահա և Ութօրեքի Բ. օրվա օրհնությունից մի նմուշ.

— Քրիստոս ծնեալ այսօր ի Բեթղեհէմ ի յայրին,

եւ դասըք վերին գուարթնոցն տակացեալ զարմացեալ կային,
Զի տեսին մարմնով ծնեալ ըզբանն Աստուած:

«Ծնար ի կուսէ անճառ միութիւն.

Անբաժանելի և միշտ գոլով,

Ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ» հարց Ա. ատուր.

Այսպիսով մեր շարականները, մեր եկեղեցւոյ կողմից որդեգրված դասական սկզբունքների շտեմարաններն են: Այս մասին արտահայտվել են նաև օտարները:

Գրիգոր Պահլավունի հայրապետն իր «թուղթ» առ Հաղբատացի վարդապետս»-ի մէջ գրում է. «Վկայեցին եթէ ծանեաք յերգս ձեր և յարհմութիւնս, որ է շարականդ, որ առ Աստուած ճշմարիտ հաւատոյ ձերոյ ուղղափառ դասանութիւն»:

Ըստ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի, այսպես են արտահայտվել հույն բարձրաստիճան հոգևորականները մի գրույցի ժամանակ, մեր շարականների աստվածաբանական հազեցվածության մասին: Խորեհնացուն վերագրվող երգերի մէջ առանձին արժեք են ներկայացնում Աստվածամորը նվիրված «մեծացուցէ» շարականները, որոնց ընդհանուր թիվը՝ ըստ ձայնագրյալ շարակնոցի, կազմում է 57 միավոր: «Մեծացուցէ»-ները նույնպես բաղկացած են երեքական տներից, բացառությամբ ԲԶ «զբեզ կոյս և մայր» մեծացուցեից, որը չորս տուն է: Գեղեցիկ է նաև ծննդյան Ա. օրվա հարցի շարականը:

ԳԶ ձայնեղանակով հորինված այս գոհարն ունի հարուստ ու բազմազան ելևէջներ ու ճոխ զարդախաղեր, այն իր մէջ խտացնում է մեր հոգևոր երգարվեստի ինքնատիպ առանձնահատկությունները: Այն գեղեցիկ է նաև իբր բանաստեղծությամբ:

Հայ շարականագիտության մեծագույն երախտավոր՝ Գաբրիել Ավետիքյանը այսպես տողերով է գնահատել այդ շարականը: «Հարցն այսր կանոնի է մի երևելի շարականաց ըստ գերազանց կազմութեան իմաստիցն, և ըստ ահաւոր ներդաշնակութեան, մինչև պատկառանս բերել երգողացն և խողաց» (Բացատրութ. շրկ. Վեներիկ 1814, էջ 93):

Ծննդյան Ութերորդ օրը մեր եկեղեցին տոնախմբում է Քրիստոսի անվանակոչության տոնը, որով և եզրափակվում է Փրկչի Ս. Ծննդյան Ութօրեքը:

1 Լոյս ի լուսոյ ի հարէ առաքեցար, և մարմնացար ի սուրբ կուսէն,
Զի վերստին նորոգեցես զապականեալն Ադամ,

2 Դու Աստուած ի յերկրի երևեցար, և ընդ մարդկան շրջեցար, եւ փրկեցեր ըզտիեզերս յանիծիցն Ադամայ»:

Բ. պատկեր.

1 Փրկիչն երևեցաւ և զարարածիս ապրեցոյց ի պատրանաց թշնամոյն, որդեգրութիւն շնորհելով ի ձեռն մկրտութեան:

2 Զրով կիզու ըզմեղըս մեր, այսօր երևեալ ապրեցոցիչն, եւ զովացուցանէ զաշխարհս Աստուածային ջրովն:

3 Մըկրտի Քրիստոս և սրբին ամենայն արարածք,
Եւ տայ մեզ թողութիւն մեղաց, ջրով և հոգով վերաարբելով ըզմեզ:
Ծարականագիրը մատնացուց է անում այն բոլոր շնորհները, որ պարգևում է մարդկանց Քրիստոս իր մկրտությամբ: Նա փրկում է մարդուն ազամական մեղքից, ազատում աշխարհի թշնամու պատրանքներից, և որդե-

գրություն շնորհում ամենքին: Նա ջրով այրում է մեր մեղքերը և զովացնում է աշխարհը Աստվածային ջրով:

Մկրտվում է Քրիստոսը և դրանով մաքրվում են բոլոր արածները: Այս պարգևների շարքը թվարկում է մկրտվող հոգևորականը՝ ըստ «Մաշտոցի».
«զմեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ ժառանգակից Քրիստոսի, և տաճար հոգւոյն սրբոյ»: Այս արվում է երեխային երիցս Ս. Ավագանի մեջ ընկղմելուց հետո: Աստվածաբանական խորը ընդհանրացումներով հագեցած է մահ այս կանոնի հարցի շարականը:

1. Տնօրինեցաւ յարգանդի կուսին, իսկակից հար և սուրբ հոգւոյն բանն առաքեալ հարէ յաղագս նախաստեղծ մարդոյն բառնալով զյանցանս ժողովորդք արհմեցէք զառաքեալն ի հարէ զԱստուած հարցքն մերոց:

2 Նախաշախտեան Որդին փառակից հար և Սուրբ հոգւոցն,
ի Յորդանան ելն այսօր մկրտիլ ի Յովհաննէ.

Կերպացեալ իմովս յաղագս իմ, զնախահարն եբարձ ըզմեղս...»:

Սրբազան շարականագիրը ինչպես Ութօրեքի բովանդակ կարգի մեջ, այնպես էլ յուրաքանչյուր կանոնի յուրաքանչյուր երգի մեջ հետևողականորեն աշխատում է բացահայտել եկեղեցու ողորմափառ դավանության հիմնական ու առանցքային տեսակետները:

3 Մաքրողական պարգևեցան շնորհք աղանակերայ իջմամբ սուրբ հոգւոյն ջուրցքն սրբութեան, եւ հայր ի վերուստ վերկալեալ կրկնակի ծնընդեամբ, դա է Որդի իմ սիրելի...:

Ծննդյան Ութօրեքի մեջ բանաստեղծական բարձրարվեստ հորինվածքով առանձնահատուկ արժեք ունի հիմնգերորդ օրվա կանոնի ճաշու շարականը «Անթառամ ծաղիկը»: Այս շարականի մասին առանձին ուսումնասիրություն է գրել Վարդան Արևելցին:

«Տեսութիւն Անթառամ ծաղկի արարեալ Վարդանայ մեծ վարդապետի», տպագրվել է 1834 թվին Երուսաղեմում: Մեր շարականների մեջ սա միակ դեպքն է, երբ մի շարականի մասին միջնադարում գրվել է հատուկ ուսումնասիրություն: Ահա այդ շարականը.

1 Անթառամ ծաղիկ, անդատապարտ շառաիղ,

Վերաբուսեալ յարմատոյն յեսսեալ.

Զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեսոց

Եւթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունարան գոլ,

Աստուածածին եւ կոյս, զքեզ մեծացուցանեմք:

2 Համեղանաշակ պտղոյն բանասոր բարունակ,

Յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յուրախութիւն

Տըրտմեղելոյ ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան,

Սըրբոմի անարատ ամենեքեան զքեզ մեծացուցանեմք:

3 Բաղաբավարեալ ի մարմնի անարատ վարութ,

Այսար յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն

Վերափոխեցար յարքայութի նկրդոյ թո եւ Աստուծոյ մերոյ,

Բարեխառս խոստովանողացս, զքեզ մեծացուցանեմք:

Քերթողահոր ընծայած այս չքնաղ երգն առանձին կարող էր լռեցնել բոլոր այն հայ բանասերներին, որոնք կասկածի տակ են դնում հիմնգերորդ դարում կանոնավոր ու բարձրարժեք սեփական հոգևոր երգերի գոյության հնարավորությունը: Այստեղ չենք ցանկանում թվել այդ մեծարգո բանասերների անունները, մանավանդ այն առարկության հեղինակին, որը գտնում էր, որ «Մեր հոգևոր երգի սկիզբը 5-րդ դարում դնելով հանդերձ անհավա-

նական է կարծել, թե այդ դարում մեծ օրհներգություններ գրված լինեին. հույների մեջ անգամ այդպիսի երգերը ծաղկում են առանձնապես 6-րդ և 7-րդ դարերում...»: (Կարծում ենք, հարկ չկա շարունակել):

Եթե հինգերորդ դարում հույներն անգամ չունեին այդպիսի կանոնավոր, արժեքավոր երգեր, ուրեմն հայերն ընդհանրապես չէին կարող ունենալ: Մենք չենք կարող համաձայնվել այս կարծիքին երբեք:

Գալով խնդրո առարկա «Անթուսամ ծաղիկ» շարականին, որն աներկբայորեն պատկանում է Խորենացու գրչին, հորինվել է Աստվածամոր նընջման կամ վերափոխման տոնի համար, ավելի ուշ, այն նաև մաս է կազմել Ութօրեքի հինգերորդ օրվա կանոնին դարձյալ իբրև ճաշու շարական:

Հայտնի է, որ Աստվածամոր այսօրվա 7 տոներից, 5-րդ դարում տոնախմբվել է նընջման կամ վերափոխման տոնը՝ որն անկասկած հաստատվել է դեռևս Առաքելական շրջանում, այդ մասին են վկայում և Խորենացուն ընծայվող մեծացուցե շարականների առկայությունը, և Աստվածհայտնության և ծննդյան կարգի բազմաթիվ երգերի առկայությունը, և վերափոխման կանոնի Ա պատկերն ու վերջապես «Անթուսամ ծաղիկ» շարականի գոյությունը հինգերորդ դարում, որոնցում սբանչելիորեն մեծարվել ու գովաբանվել է Աստվածամոր կերպարը բազում ու գեղեցիկ համեմատություններով:

Աստվածաբանական խորը ընդհանրացումներով և բնապատկերների առատ օգտագործման միջոցով՝ բանաստեղծը հարազատ մնալով հանդերձ եկեղեցու ուղղափառ դավանության սկզբունքներին, կարողանում է բարձր վարպետությամբ ու ամբողջական կերպով վերերգել Տիրամոր կյանքի պատմությունը՝ ծնունդից մինչև նընջումն ու վերափոխումը:

Աստվածամոր վերափոխման այս չբնադ պատմությունը գալիս է ամբողջացնելու Քրիստոսի Աստվածային փրկագործության, հրաշափառ Հարության ու համբարձման Ավետարանական պատմությունը: Եվ պատահական չէ, որ բովանդակ քրիստոնյա եկեղեցին ինչպիսի մեծ կարևորություն է տվել Տիրամոր վերափոխման սբանչելի ավանդությանը:

Զարմանալի նմանություն կա «Անթուսամ ծաղիկ» և վերափոխման կանոնի Ա պատկերի՝ «Այսօր ժողովեալ սրբոցն» շարականների միջև: Ծարականագիրը հավաստում է, որ Տիրամոր նընջման սրարողության մասնակիցները՝ «Երևելի առաքեալքն եւ Ս. Կուսանքն, ջանազգեստութ պայծառացեալք լուցանէին ըզլապտերս իրեանց, եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ ամենօրհնեալդ ի կանայս»:

Նրանք Կույսի մարմինը դնելով գերեզմանի դռանը, «Ապասէին եւ ակնունէին տեսոն, իսկ ինքնին գլով, գեր ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակաւք..., դեռ ավելին, նրանք տեսան Ս. Կույսին՝ «Թողեալ յօդս, եւ ամպեղէն կառաւքն ի վեր համբարձեալ յերկինս, մըտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն...»:

Այս համաքրիստոնեական ուրախությանը շարականագիրը տոնակից է դարձնում նաև իրեն և իր հետ միասին նաև մեզ, բոլոր հավատացյալներին, որոնք «Յուսապատար խնդութեամբ եւ յաւժարար հնչմամբ, նուագենք քեզ հողեղէնքս ընդ հրաքուն սեռիցն, տօնախմբելով զիշատակ կուսի աղախնոյ եւ մօրքո, Վասն որոյ հրճուողական ձայնի քեզ երգէ եկեղեցի սուրբ, ըզնոր զօրհնաբանութիւն»:

Ահա և «Անթուսամ ծաղիկ» երգի համապատասխան տողերը,

«Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք,
Այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն
Վերափոխեցար յարքայութիւն Որդոյ քո եւ Աստուծոյ մերոյ,
Բարեխաւս խոստովանողացս, զքեզ մեծացուցանեմք:

Այստեղ եւս, ինչպէս և Վերափոխման շարականում Առաքյալները սպասում և ակնկալում էին Տիրոջը, որը պիտի գար վերափոխելու իր մօրը հարքայութիւն:

«Անթառամ ծաղիկ» շարականը ունի ԲԶ ձայնեղանակի մի առանձին և խիստ հետաքրքիր մեղեդի, որը զգալիորեն տարբերվում է ԲԶ-ի մնացած բոլոր երգերից ու դարձվածներից: ԲԶ-ի այս տարբերակով է երգվում միայն հոգեգալստյան Ա կանոնի ճաշու շարականը՝ «Որ ի հարաշարժ ի յաղբերէ»: Գեղեցիկ այս շարականը՝ ըստ ձայնագրյալ շարականցի, ունի նույն «Անթառամ ծաղիկ»-ի մեղեդային կառուցվածքը՝ խաղերի աննշան տարբերությամբ: Սակայն և ձեռագիր, եւ տպագիր շարականցներում եղած խաղերը զգալիորեն տարբեր են, թեւ այս երկու գոհարների տներն էլ ծավալով մեծ են և հավասարազոր են միմյանց: Այս հանգամանքը մտածելու տեղիք է տալիս, թե արդո՞ւք այս երկու երգերը իրենց նախնական մեղեդիներով նման եղե՞լ են, թե ոչ: Իսկ ինչ վերաբերում է երգերի բնագրային խընդրին, կարելի է որոշ վերապահումով ասել, որ այս երկրորդ երգի հեղինակը եւս Մ. Խորենացին է, քանի որ նրան վերագրվող երգերի մեջ հիշվում է նաև «զատաշին պատկերսն Հոգւոյն Գալստեան»ը: (Տես Անանուն ցուցակը 4):

Այսպիսով Փրկչի Ա. Ծննդյան Ութօրեքի երգերը մեր շարականցի հնագույն երգերից են, որոնց հեղինակը մեր պատմահայր Խորենացին է, որին վերագրվող հոգևոր երգերի ընդհանուր թիվը՝ ըստ միջնադարյան ցուցակների շուրջ 100 միավոր է կազմում: Այդ երգերի մանրագին ուսումնասիրությունը հանգեցնում է մի ընդհանուր եզրակացության, որ այդ երգերը նախ և առաջ մեր առաջին գրավոր քնարերգության ինքնուրույն բանաստեղծություններն են Ա. Սահակի ու Ս. Մեսրոպի երգերի կողքին:

Մեր գրականության մեծ նահապետը՝ հայր Ղևոնդ Ալիշանը, մեզանից շուրջ մեկ և կես դար առաջ ուշադրություն դարձնելով Խորենացուն ընծայված Քերթող և Քերթողահայր անվանը՝ իրավացիորեն հավաստում է, որ այդ ոչ թե նրան տրվել է իբրև մեր առաջին պատմիչ, այլ՝ «Աւելի բանաստեղծական կամ երգահան գրուածոց համար, եւ թէ այս մտքով անուանս արժանատր է, վկայ ըլլան մեզի իր ծանօթ սքանչելի շարականները, որոնց չափական շէնքն ալ, իմաստն ալ, եղանակներն ալ կը ցուցնեն թէ շատ գերազանց ոգի եւ ճաշակ ունի եղեր մեր Խորենացին»: (Բազմավեպ 1849, էջ 51):

Այսքանով ցանկանում ենք ավարտել մեր խոսքը Խորենացուն վերագրվող երգերի մասին: Ավելացնենք նաև, որ Խորենացին մեր շարականագիրների մեջ իր բացառիկ տեղն ունի և արժանի է համակողմանի ուսումնասիրության՝ նաև իբրև բանաստեղծ ու երաժիշտ:

«Յափտեմական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:


Բանախոսությունից հետո հոգևոր ճեմարանի Դ և Ե լսարանների սաների կատարմամբ հնչում է Մովսես Խորենացու «Անթառամ ծաղիկ» հոգեհույզ շարականը: Ապա Քերթողահայր Խորենացու «Հայոց պատմություն» երկի թեմաներով գրական-երաժշտական ասքի գեղեցիկ կատարմամբ հանդես


են գալիս հոգևոր ճեմարանի մի խումբ ուսանողներ՝ ղեկավարությամբ Խորեն Պալյանի:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ երգվեցին Սրբազան շարականագրի՝ Մովսես Խորենացու «Աստուածածին երկնային», «Ճառագայթ» և կերպարան», «Ով գերաշնորհ ծաղիկ» և «Ծագումն հրաշալի» հոգեթով շարականները:

Հանդիսության վերջում Մայր Աթոռի դիվանապետ, հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը իր գոհունակության և օրհնության խոսքը բաշխեց գրական-երաժշտական ցերեկույթի կազմակերպիչներին: Սրբազան հայրն ի մասնավորի անդրադարձավ նաև Քերթողահայր Խորենացու «Հայոց պատմության» ազգային ոգեկանությանն ու հոգևոր ներշնչումին:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակին նվիրված հանդիսությունն ավարտվեց վերատեսուչ սրբազան հոր «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, չորեքշաբթի.—Կաղանդ, Տաբեմուտ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և պատարագի վերջում Իջման ա. սեղանից հավոր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:
Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 5-ին, կիրակի.—Ծրագալոյց Ծննդեան և Աստուածաշնչատնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, հանդիսավոր ա. պատարագ մատուցեց Ս. Հովիսիմե վանքի վահանայր գերշ. Տ. Անանիա եպս. Արաքաշյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 6-ին, երկուշաբթի.—Տօն Ծննդեան և Աստուածաշնչատնութեան Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, հանդիսավոր ա. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսէս արքեպս. Պողպապալյանը: «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 7-ին, երեքշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, հոգեհանգստյան ա. պատարագ մատուցեց Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

* * *

Հունվարի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. խորանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 6):

* * *

Հունվարի 13-ին, երկուշաբթի,— Տօն Անուանակոչութեան Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

* * *

Հունվարի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գլըլընյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 22-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունվարի 26-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը: Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. խորանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Վազգեն արք. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 5-ին չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 9-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Նարեկ ավ. քհն. Մատարյանը: Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 12-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 14-ին, ուրբաթ.— Տեառնընդառաջ: Տօն քառասօթեա գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քնն. Սիմոնյանը:

* * *

Փետրվարի 16-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գրուելվող Հունաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ոսկան եպս. Գալիաքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 1-ին, կիրակի.— Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քնն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 4-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 8-ին, կիրակի.— Արտաքսման կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Մակար քնն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը:

* * *

Մարտի 15-ին, կիրակի.— Անառակի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. խորանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քնն. Գրլընյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գևորգ եպս. Սերադարյանը:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 22-ին, կիրակի.—Տնտեսի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Նարեկ ավ. քհն. Մատարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 9):


* * *

Մարտի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 29-ին, կիրակի.—Դատավորի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Վազգեն արք. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Միքայել վրդ. Աջապահյանը (տես էջ 75):



Տ. ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(29 Մարտի 1992 թ.)

«Յանուն Հօր և Որդու և Հոգույն Սրբոյ. Ամէն»:

«Պարտ է մեզ յամենայն ժամ յաղօթս կալ և մի ձանձրանալ»

«Մեզ համար անհրաժեշտ է ամեն ժամ աղոթել և չձանձրանալ»
(Ղուկ. ԺԸ 1)

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Մեծի պահոց չորրորդ կիրակիի խորհուրդն ամփոփված է այս սեղմ տողերի մեջ, որով Հիսուս գալիս է հաստատելու, որ մենք՝ որպէս ժողովուրդ, որպէս մարդկություն, պարտավոր ենք ամեն ժամ աղոթել և աղոթելուց չձանձրանալ:

Մեծի պահոց կիրակիներից յուրաքանչյուրն իր խորհուրդն ունի, յուրաքանչյուրը ներկայացնում է Աստծո և մարդու հարաբերության մեկ կարևոր օղակը, մեկ կարևոր փուլը: Երեսուն օրեր առաջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մեզ բոլորիս հրավիրեց քառասնօրյա ապաշխարության, խոկունի ու աղոթքի: Արդեն անցել են Մեծի պահոց երեք կիրակիները և այսօր հասել ենք չորրորդ տերունական օրվան, որը խորհրդողանշական կերպով կոչվում է Անհրապ դատավորի կիրակի: Մեծի պահոց առաջին կիրակին մեզ ներկայացրեց Աստծո ու մարդու հարաբերությունը որպէս արարիչ-արարածի հարաբերություն, որը երկրորդ կիրակիի խորհրդով վերաճեց հոր և որդու մտերիմ կապի: Եվ եթե Հիսուս անհրապ տնտեսի օրինակով ցույց տվեց, որ մենք նշանակված ենք տնտեսներ լինելու այս աշխարհում, որի Տէրը մեկն է՝ մեր երկնավոր Հայրը, ապա այսօր Անհրապ դատավորի առակով գալիս է մեկ երանգ ևս ավելացնելու Աստված-մարդ փոխհարաբերությանը և հակադրության միջոցով ցույց է տալիս Աստծուն՝ որպէս դատավորի, և մեզ՝ որպէս հաջվորների, խնդրատուների: Եվ Ղուկաս ավետարանիչ, որին մենք պարտական ենք Տիրոջ՝ այնքան գեղեցիկ առակները մեզ փոխանցելու համար, Հիսուսի բերանով պատմում է մեզ այս առակը, որպէսզի մեկ անգամ ևս հաստատի այն հնագույն ճշմարտությունը, որ Աստծո հետ մարդու կարևորագույն կապն աղոթքն է, աղոթելը:

Եվ Հիսուս պատմում է մի առակ այն մասին, որ մի քաղաքում ապրում էր մի անհրապ դատավոր, որ անհրապությանը ու անօրենությանը էր վաստակում իր ապրուստը, և ինչպէս Ավետարանն է ասում, Աստծուց չէր

վախենում և մարդկանցից չէր ամաշում: Եվ այդ նույն քաղաքում ապրում էր մի այրի կին, որն անհրավելի էր, ընչազրկված, և պարբերաբար գալիս էր դատավորի մոտ և խնդրում, որ իր դատը տեսնի և իրեն արված վատությունը փոխհատուցի: Սակայն դատավորը, որը որևէ նյութական սկզկալիք չուներ այրի կնոջից, մերժում էր և չէր ուզում անգամ լսել այդ մասին: Սակայն ամիսներ, տարիներ հետո հանկարծ լուսավորվում է դատավորի միտքը, և նա մտածում է ու ասում. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաշում, սակայն որպեսզի ինձ այլևս այս կինը չանհանգստացնի, սրա դատը տեսնեմ, և թող ինձ հանգիստ թողնի»:

Այս է առակը, սիրելի հավատացյալ ժողովուրդ, և այս առակով Քրիստոս անհրավ դատավորին է հակադրում Երկնային Դատավորին, որն իրավացի է, անաշատ, անկողմնակալ և միևնույն ժամանակ առավելագույնս բարի: Եվ Հիսուս ասում է. Եթե անհրավ դատավորը թախանձագին պաղատանքներից ստիպվելով տեսավ այրի կնոջ դատը, ապա որքան առավել ևս մեր երկնավոր Հայրը, որ երկնքում է և գոյության լի, լսելու է մեր խնդրանքները, լսելու է մեր պաղատանքները, լսելու է մեր աղոթքները և փոխհատուցելու է դրանց համար: Եվ ուրեմն ամփոփումն է այս առակն՝ ասելով, որ պետք է ամեն ժամ աղոթել և աղոթելուց չձանձրանալ:

Այսօր, Քրիստոսից երկու հազար տարիներ հետո, երբ մարդկությունը դրված է նյութական կապանքների մեջ և ժամանակի տնտեսական ու սոցիալական դժվարություններին դեմ հանդիման, մենք կարող ենք մի պահ ընկրկել և տարակուսել այս տողերի հավիտենական ճշմարտացիության վրա: Եվ մենք, որ ցավոք ամենօրյա մշտական վագրի մեջ ենք մեր հանապազօրյա հացը վատակելու, կարող ենք թերևս երկմտել և մտածել, որ աղոթելու ժամանակ իսկ չունենք: Եվ երկար աղոթելն էլ թերևս ձանձրանալու առիթ լինի մեզ համար: Սակայն ո՞վ է այն գիտակից մարդը, որն առավտության արթնանում է և ասում՝ ձանձրացել եմ լվացվելուց, այսօրվանից իսկ այլևս չեմ լվացվելու: Կամ ո՞վ է այն անձնավորությունը, որ գալիս-հասնում է իր կյանքի մի հանգրվանին և ասում՝ այլևս կերակուր չեմ ուտելու, որովհետև ձանձրացել եմ սնվելուց: Եվ եթե չկա այդպիսին մեր մեջ, և եթե մենք՝ քրիստոնյաներս, հավատում ենք, որ մարդը սոսկ ֆիզիկական մի էակ չէ, լոկ նյութական գոյություն չէ, այլ անքակտելիորեն բաղկացած է հոգուց և մարմնից, ուրեմն պետք է մտածենք նաև հոգու մաքրության և հոգու սննդի մասին: Եվ հետևաբար այստեղ է, որ անհրաժեշտ է դառնում աղոթքը: Անհրաժեշտ է դառնում մեր հոգիների սրբագործման, մեր հոգիների բուժման ու վերանորոգման համար: Աղոթքն է, որ մաքրում, սպիտակեցնում ու պաշտպանում է մեր հոգիները, բուժում է մեր ներսում փակված անհրավությունները, մեղքերը, ոգիները, և այդ մաքրությամբ, այդ բուժումով ի վիճակի է լինում ընդունելու աստվածային շնորհները, ի վիճակի է լինում ընդունելու աստվածային ճշմարտությունները, ի վիճակի է դառնում ընդունելու Ս. Հոգուն, որը վերանորոգում է իրեն և ստեղծում մի նոր մարդ, մի նոր էակ, որն այսուհետ պետք է ապրի նոր կյանքով՝ քրիստոնեավայել ու աստվածահաճո:

Սակայն շատ մարդիկ, եթե նույնիսկ աղոթելու ցանկություն ունեն, երբեմն չգիտեն ինչպես աղոթել, ինչ խոսքերով արտահայտել իրենց խոսքը, որպեսզի այն ընդունելի ու հաճելի լինի՝ Աստծուն: Եվ այստեղ Հիսուս մեկ այլ առակով բացահայտում է մեզ աղոթելու ճշմարիտ եղանակն ու կերպը: Այդ առակը փարիսեցու ու մաքսավորի առակն է, որն այսօր նույնպես ըն-

թերցվեց Սուրբ Սեղանից: Այս առակը պատմում է այն մասին, որ տաճար գնացին մի փարիսեցի և մի մաքսավոր: Տաճարում փարիսեցին մի անկյունում կանգնած, իր ինքնագոյության մեջ, Աստծուն փառաբանելու և Աստծո առջև իր ոչնչությունը զգալու փոխարեն, ասում էր. «Գոհանում եմ քեզանից, Հայր, որովհետև մեղավոր չեմ, հանցանքներ ու մեղքեր չեմ գործում, և ոչ էլ այս մաքսավորի նման եմ, այլ տալիս եմ այն, ինչ պատկանում է Տաճարին, և ամեն օր իմ ուխտն ու տուրքն եմ մատուցում Քեզ»: Իսկ տաճարի մյուս անկյունում կանգնած մաքսավորը չէր համարձակվում իր գլուխն իսկ բարձրացնել, այլ ծեծում էր իր կործքն ու ասում. «Աստված, բավիր ինձ՝ մեղավորիս, քավիր իմ մեղքերը»: Եվ Հիսուս եզրակացնում է, որ մաքսավորը տաճարից դուրս եկավ ավելի արդարացած, քան փարիսեցին:

Ահավասիկ ուրեմն աղոթելու ճշմարիտ ձևը, այն հիմնական ճշմարտությունը, որով պետք է մոտենանք Աստծուն, երբ փորձում ենք աղոթել, խոկալ: Եվ մեր մեղքերի խոստովանությամբ է, որ կարողանում ենք մաքրվել, տրված քավությամբ է, որ կարողանում ենք բուժել մեր հոգու վերքերը, և պատրաստ ենք լինում ընդունելու աստվածային լույսը, Քրիստոսին և Ս. Հոգուն:

Եվ շատ գեղեցիկ կերպով մեր եկեղեցու հայրապետները Ս. Զատիկին նախորդող քառասուն օրերին մեզ են տվել ապաշխարության մի շրջան, որ այլ բան չէ, եթե ոչ աղոթքի, խոկումի, ներամփոփումի և Աստծո հետ հարաբերվելու մի փուլ: Եվ եթե մենք այս քառասունյա ընթացքում չհաջողվենք աղոթելու մեջ, չհաջողվենք մեր հոգիները մաքրելու, մեր ներքին վերքերը բուժելու և մեր մեջ Աստծուն բնակեցնելու գործում, մենք լսելով լսելու ենք, սակայն չենք հասկանալու Քրիստոսի հարության կենսաբեր ավետիսը, այլ այն մնալու է մեզ համար լոկ հնչյուն, լոկ խոսք: Որովհետև Քրիստոսի հարության իրական խորհուրդը կարող ենք հասկանալ և ըմբռնել միայն մաքուր, անարատ ու սրբված հոգիներով:

Ուրեմն, սիրելի եղբայրներ ու քույրեր, մեզ՝ քրիստոնյաներիս համար և առավել ևս մեր ժողովրդի զավակների համար պետք է հստակ լինի այս գիտակցությունը, աղոթելու այս անհրաժեշտության զգացումը: Եվ Մեծի պահոց այս խորհրդածություններից հետո եկեք ամենքս մաքսավորի օրինակով և այրի կնոջ համառությամբ մոտենանք Աստծուն, մոտենանք մեր ծանր կամ թեթև մեղքերի լիիրավ գիտակցությամբ, ձգտենք, որպեսզի մեր աղոթքով բուժի մեր հիվանդ ու տառապյալ հոգին, և կարողանանք մեր մեջ բնակեցնել Ս. Հոգուն, որպեսզի ապաշխարության այս շրջանից դուրս գանք առավել մաքուր, առավել մարդկային, առավել քրիստոնյա: Եվ թող աստվածային շնորհը, սերը և խաղաղությունը լինի բոլորիս հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՅՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Կիրակոս Երզնկացին, որ ապրել և գործել է ԺԳ—ԺԴ դդ., հայ մատենագիտության և հայագիտության քիչ ծանոթ դեմքերից է: Նա շարունակել և զարգացրել է Երզնկայի դպրոցի և նրա մեծ ռաբունապետների (Հովհաննես Պլուզ Երզնկացի, Մովսես Երզնկացի) ավանդները Հայ Եկեղեցու համար պատրաստելով կրթված արտասովոր վարդապետներ:

Կիրակոս Երզնկացու կենսագրության մասին քիչ տեղեկություններ ունենք: Ծնվել է 1270¹-ական թվականներին Եկեղյաց գավառի Ագրակ կամ Ագարակ ավանում²: Առաջին անգամ նրա մասին հիշատակվում է 1315 թ. մի ձեռագրի հիշատակարանում³. «... բուրման խնկոց անուշահոտությամբ զրաբունապետս զՅովհաննէս և զԿիրակոս յիշեսչիք ի Տէր...»⁴: Կիրակոս Երզնկացին երկար ժամանակ ապրել է Երզնկայում, որտեղ ծավալել է գրական բեղուն գործունեություն, հաճախ հիշվում է որպես ձեռագրերի ստացող կամ պատվիրատու. 1304 թ. ունի Ոսկան վարդապետ «ի վանս Գլաճոր Ս. Ստեփանոսին ... ի հոյլս հոգնաթիւ աշակերտաց Հայոց...» հիշատակում է նաև Կիրակոս Երզնկացու անունը⁵: Վերջինս իր հերթին 1318 թ. «մեծ ռաբունապետ բոլոր Հայաստանեայց»⁶ է կոչում Եսայի Նչեցուն: Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքին պատկանող 1330 թ. մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս հայկազեան

¹ Ծննդյան մոտավոր թվականը վերցրել ենք Ա. Սրապյանցից. տես ՀՄՀ, հտ. 3, էջ 450—451:

² Մենք չկարողացանք պարզել, թե որտեղից է հայտնի Ա. Սրապյանին, որ Կ. Երզնկացին ծնվել է Ագրակ կամ Ագարակ ավանում: Տես նույն տեղում, էջ 450:

³ Հ. Քյուրտյանը գտնում է, որ Կ. Երզնկացին առաջին անգամ հիշատակվում է 1317-ին մի հիշատակարանում իբրև ստացող և գրիչ. տես Յ. Քիրտեան, Երիզա կամ Եկեղեցաց գավառ, հտ. Ա, Վեներտիկ, 1953, էջ 225:

⁴ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950 թ., էջ 116:

⁵ Ղ. Ալիշան, Սիսական. Տեղեկագրություն Սիսեաց աշխարհի. Վեներտիկ, 1893, էջ 134:

⁶ Տես Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981 թ., էջ 163:

տոմարիս 22Թ (1330) ի հայրապետութեան Տեառն Հակոբայ եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի և Վրաց Գեորգայ: Եւ ի դաւանութեանն Գաւառիդի, յանապատիս Զդանայ՝ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Աստուածակիր սբ. Նշանացս, ձեռամբ ամենամեղ և անարժան ծառայի Աստուծոյ Կիրակոս պիտակ անուն վարդապետի Երզնկացոյ Նժդեհի...»⁷: 1334 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 2102 ձեռագրի հիշատակարանում նշված է. «Զստացողս աստուածային մատենիս, գերաշնորհ և եռամեծ րաբունապետն Կիրակոս»⁸: Ձեռագիրը գրված է Երզնկայում:

Կիրակոս Երզնկացու մահվան թվականի մասին վստահելի աղբյուրը Երզնկայում Ստեփանոս երեցի գրած ժողովածուի հիշատակարանն է. «...լիշեւջիք և երջանիկ և գերիցս երանեալ րաբունապետն մեր Կիրակոս վարդապետն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, նոյնեքեր ԺԵ (15) և մեզ եթող որքս յայսմ կենցաղս..., գրեցաւ ի թոինն Հայոց ՊԵ (1356) յամենեան մարտի ԺԸ (18)...»⁹: Ըստ Հակոբ Կարնեցու վկայության, Կիրակոսը թաղված է Երզնկայի Ս. Սարգիս եկեղեցում, նրա տապանի վրա կա հետևյալ արձանագրությունը. «... Եւ Կիրակոս վարդապետի, որ Արեւելքն է ասացեալ...»¹⁰:

Կիրակոս Երզնկացու անունով մեզ են հասել բավական թվով ստեղծագործություններ: Ձեռագրերի և ձեռագրացուցակների ուսումնասիրությունից պարզել ենք, որ պահպանվել են հետևյալ գործերը .

Ա. Նախերգան Տեառնընդառաջին Կիրակոս վարդապետի ասացեալ

Բարոյախրատական գործ է: Ծառն սկսվում է գովեստով ուղղված Քրիստոսին համարյա ամբողջությամբ պատմում է Ավետարանը: Վերջին հատվածում լուսաբանում է մի շարք դավանաբանական հարցեր, ցույց է տալիս, թե ինչ մեծ մեղք է դավանափոխ լինելը:

Այս գործը մեզ է հասել հետևյալ ձեռագրերում.

Մ. Մ. ձեռ. № 2167. Քարոզգիրք, վայր՝ անհայտ, գրիչ՝ Թորոս Տարոնեցի, ստացող՝ Մարտիրոս քհն. Սանահնեցի, 1346 թ., 245ա—267ա:

Մ. Մ. ձեռ. № 2178, ժողովածու, վայր՝ Տաթև, գրիչ և ստացող՝ Հակոբ Ընշտունցի, ԺԴ դ., 348բ—357բ:

Բ. Կիրակոս վարդապետի ասացեալ ի բանն, որ աւել՝ ի սկզբանէ էր Բանն

Մեկնողական խրատական բնույթի գործ է: Խոսում է արարչագործության մասին: Եվ Հայրը, և Ողորհն, և Սբ. Հոգին հավասար բնությամբ Աստված են: Անդրադառնում է նաև մարդկանց և Աստուծո կապին, օրենքի կարևորությանը և այլ հարցերի: Վերջին հատվածը ունի խրատական բնույթ:

Առկա է հետևյալ ձեռագրերում.

⁷ Տես Ս. Տ. Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Զուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա., Վիեննա, 1970, էջ 66:

⁸ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950 թ., էջ 332:

⁹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Ն. արք. Պողարյան, հտ. Դ, Երուսաղեմ, 1969 թ., էջ 384:

¹⁰ Հակոբ Կարնեցի, Տեղագիր վերին Հայոց, տես Մանր ժամանակագրություններ՝ ԴԳ—ԺԵ դդ., կազմեց Վ. Ս. Հակոբյան, Երևան, 1956 թ., էջ 551:

Մ. Մ. ձեռ. № 1098. ժողովածու, գրիչ՝ Մխիթար, վայր՝ անհայտ, 1320 թ. 110ա—141բ:

Մ. Մ. ձեռ. № 933, ճառընտիր, վայր՝ անհայտ, գրիչ՝ Մկրտիչ, ստացող՝ Մերուն քհն., ԺԵ դ., 136բ—151ա:

**Գ. Կիրակոս սուրբ վարդապետի արարեալ ի սաղմոսն ԾԹ (109)
որ աւէ. «Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աշմէ իմմէ մինչև եղից
(գրշնամիս քո պատուանդան ոտից քոց)»**

Խոսում է Քրիստոսի հայտնության, համբարձման և Ավետարանի քարոզության մասին: Քրիստոսի հարությանը սկսվում է խաչի թշնամիների պարտությունը: Սուրբ Հոգու իշմամբ սկսվում է առաքյալների հաղթարշավը աշխարհում:

Հայտնի է գործի մեկ ընդօրինակություն՝

Մ. Մ. ձեռ. № 4139, Տօնապատճառ. վայր՝ Հաղպատ, գրիչ՝ Հովսեփ, Տիրաչու, Գրիգոր, ԺԴ դ., 372—378բ:

**Դ. Ի բան որ աւէ «Զայն Տեառն ի վերայ ջուրց և Աստուած
փառաց որոտաց և Տէրն ինքն ի վերայ ջուրց բազմաց
Կիրակոս վարդապետի Երզնկեցոյ արարեալ**

Հեղինակը նախ խառում է նյութի, նրա ծագման, արարման մասին: Հետաքրքիր է, որ Երզնկացին այս գործում օգտագործել է մոտեր Պլատոնից, Սկրատից, Դիոնիսոս Արիստագացուց և ուրիշներից: Սակայն նրանց փիլիսոփայական այս կամ այն դրույթը նա մեկնաբանում և բացատրում է Ավետարանական ճշմարտությամբ:

Նույնպես հայտնի է մեկ ընդօրինակությամբ.

Մ. Մ. ձեռ. № 2167. Քարոզգիրք, վայր՝ անհայտ, գրիչ՝ Թորոս Տարոնեցի, ստացող՝ Մարտիրոս Սանահնեցի, 1346 թ., 61ա—90բ:

Ե. Խրատ ուղղափառ հաւատացեալսն

Խրատն ունի ընդհանրական բնույթ, ուղղված է բոլորին. «ընդհանուր ամենայն հաւատացեալ որդիքն, քահանայիցդ և կրանատրացդ վն զիմուրեալ մանկանցդ...»:

Ըստ բովանդակության բաժանված է մի քանի մասերի. ա. Նախաբան, որտեղ հորդորում է լինել լուսավոր «բանն կենաց», ունենալ «ի պարծանս»: բ. Խրատներ՝ ուղղված բոլորին: Նախ նշում է մեղքերը, որոնց մեջ ընկնելով մարդ հեռանում է Աստծուց:

գ. Խրատներ՝ ուղղված քահանաներին. «զամենայն քահանայիցդ եկեղեցոյ, որ ժիր կենաք ի գործ և ի մշակութիւն եկեղեցոյ»:

Պահպանվել է սույն «Խրատի» 10 ընդօրինակություն.

Մ. Մ. ձեռ. № 2542. վայր՝ Ակնանեաց վանք, գրիչ՝ Զաքար արեղա, 1470 թ., 99բ—110բ:

Մ. Մ. ձեռ. № 8727. ժողովածու. գրիչ՝ անհայտ, ստացող՝ Հակոբակ, Ժամանակ՝ ԺԵ դ., 301ա—313բ:

Մ. Մ. ձեռ. № 3050. ժողովածու, վայր՝ Թվան գյուղ, «Կարին», գրիչ և ստացող՝ Ղուկաս սրկ., 1593 թ.:

Մ. Մ. ձեռ. № 1720. ժողովածու, գրիչ՝ Հովհաննես, 1720 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2939. ժողովածու, գրիչ և ստացող՝ Մարտիրոս Ավետիքով Կաֆացի, վայր՝ Հռուսաց գյուղ՝ Նովիխոս, Նոր-Նախիջևան, Նորաշեն. 1774—1799 թթ.:

Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանի¹¹ ձեռ. № 1136. ժողովածու, գրիչներ՝ Գրիգոր վրդ. Սարգիս կրճվր. Նորատունկ դպ. 1621 թ.¹²:

Եղմ. ձեռ. № 1454, Քարոզգիրք, գրիչ մեկ մասի՝ Անդրեաս, ստացող՝ Գրիգոր քնն., վայր՝ անհայտ, ԺԷ դ.¹³:

Եղմ. ձեռ. № 182, գրիչ՝ Կեսարացի Պետրոս վրդ. Աստուածատրեանց, վայր՝ Կ. Պոլիս, 1790 թ.¹⁴:

Վեներաբիլի Մխիթարյան մատենադարանի ձեռ. № 241. Ոսկեփորիկ. գրիչ՝ Խաչատուր աթեղա, ստացող՝ Տեր Գրիգոր, վայր՝ Կապուսի վանք, 1495 թ.¹⁵:

Հռոմ. Հայոց Ս. Վլասի ձեռ. № 38. ժողովածու, գրիչ՝ Միքաել Սանոսյան, վայր՝ Կարին, ԺԵ դ.¹⁶:

2. Լուծմունք հաբիրաւոր թոռոցն Եւագրեայ¹⁷

Երզնկացու այս երկը տես հետևյալ ձեռագրերում:

Մ. Մ. ձեռ. № 1980. ժողովածու, գրիչ՝ Մովսես քնն., ստացող՝ Հովհաննես Վարդենիսի, վայր՝ Երզնկա, ժամանակ՝ 1391 թ.:

Մ. Մ. ձեռ. № 518. ժողովածու, վայր՝ Հալեպ, գրիչ և ստացող՝ Դավիթ, ԺԸ դ.:

Մ. Մ. ձեռ. № 1430, Գիրք պատճառաց և լուծմանց, գրիչ՝ Վարդան Հիգանցի, կազմող՝ Գրիգոր, ստացող՝ Բարսեղ վրդ., վայր՝ Բաղեշ, 1617 թ.:

Մ. Մ. ձեռ. № 6462. ժողովածու, վայր՝ Երուսաղեմ, գրիչ և ստացող՝ Ծապին Գարահիսարցի, ժամանակ 1807—1808 թթ.:

Մ. Մ. ձեռ. № 1812. ժողովածու, վայր՝ Կ. Պոլիս, գրիչ՝ Բրաբիոն, 1780 թ.:

Եղմ. ձեռ. № 132. 1354 թ.¹⁸, 161—279:

Եղմ. ձեռ. № 620. 1354 թ.¹⁹, 1ա—371բ:

Եղմ. ձեռ. № 1407. գրիչ՝ Սիմեոն, 1354 թ.²⁰, 3ա—87բ:

Եղմ. ձեռ. № 2616. ժողովածու, վայր՝ Երուսաղեմ, ստացող՝ Մարտիրոս վրդ., 1668 թ.²¹:

¹¹ Այսուհետև Եղմ.

¹² Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, կազմող Ն. արք. Պողարեան, հ. Դ, Երուսաղեմ, 1969 թ., էջ 211 (այսուհետև Ցուցակ Երուսաղեմի):

¹³ Ցուցակ Երուսաղեմի, հտ. Ե, 1967 թ., էջ 109:

¹⁴ Ցուցակ Երուսաղեմի, հտ. Ա, 1967 թ., էջ 539:

¹⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1921 թ., հտ. Բ, էջ 93:

¹⁶ Ցուցակ ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս և Լեոնեան հայոց վարժարանի, կազմեց՝ Ներսես Աղիճյան, Վիեննա, 1961 թ., էջ 27:

¹⁷ Այս գործի մանրամասն քննությունը տես Բ. Սարգիսյան, Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք ի հնգերորդ դարու, Վեներաբիլ, 1907 թ.:

¹⁸ Ցուցակ Երուսաղեմի, Ա, էջ 831:

¹⁹ Նույն տեղում, Գ., էջ 21:

²⁰ Նույն տեղում, Ե, էջ 220:

²¹ Նույն տեղում, Ե, էջ 448:

Եղմ. ձեռ. № 1635, ժողովածու, ստացող՝ Բարսեղ կրոնավոր, ԺԷ դ.²²:

Եղմ. ձեռ. № 1828, ժողովածու, վայր՝ Ա. Յակոբ, Երուսաղեմ, գրիչ՝ Մարտիրոս, ստացող՝ Սուքիաս վրդ., 1875—1877 թթ.²³:

Ղալաթիայի ձեռ. № 55, Հավաքածո, ԺԷ դ.²⁴:

Ղալաթիայի ձեռ. № 84, Հավաքածո, վայր՝ Ա. Յակոբ, Երուսաղեմ, գրիչ՝ Երեմիա երեց, ստացող՝ Սուքիաս վրդ., 1675 թ.²⁵:

Ղալաթիայի ձեռ. № 115. Հավաքածո, վայր՝ Ա. Յակոբ, Երուսաղեմ, գրիչ՝ Երեմիա երեց, ստացող՝ Սուքիաս վրդ., ԺԷ դ.²⁶:

Վիեննայի ձեռ. № 525. գրիչ՝ Ալեքսան, վայր՝ Կ. Պոլիս, 1749 թ.²⁷:

Անկյուրիայի ձեռ. № 628. Հավաքածո, գրիչ՝ Ծիրինյան Մովսես վրդ., Անկյուրիո առաջնորդ, վայր՝ Կարմիր վանք, 1700 թ.²⁸:

Է. Կիրակոս վարդապետ Երզնկեցույ ասացեալ ի Սուրբ Աստուածածինն—Աստուածածին տաճար բանին բարեխոսեալ առ Միածինն...

Այս գործը պահպանվել է միայն հետևյալ ձեռագրերում, ուստի և նրա բովանդակությունը մեզ ծանոթ չէ:

Վենետիկի Մխթ. ձեռ. № 258. Ոսկեփորիկ, ԺԲ—ԺԳ դդ.²⁹:

Ը. Կիրակոս վարդապետի ասացեալ Է Աստուածածնի վերափոխման—Արևելք գերարփին...

Այս շարականը կա մեր բոլոր շարակնոցներում: Այն մեր վերջին շարականն է, որը մտել է Կանոնի մեջ:

Թ. Յաղագս Ը (8) խորհրդուն Եւագրեայ

Հեղինակը խոսում է այն ութ մեղքերի մասին, որոնք առավել սարսափելի են մարդու համար. ա) որովայնամոլություն, բ) պոռնկություն, գ) արծաթասիրություն, դ) տրտմություն, ե) բարկություն, զ) ձանձրություն, Է) սնափառություն, ը) ամբարտապանություն:

Այս գործը տես հետևյալ ձեռագրերում.

Մ. Մ. ձեռ. № 4040. ժողովածու, գրիչ՝ Գրիգոր աբեղա, ստացող՝ Մըկըրտիչ 1474 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2542, ժողովածու, գրիչ՝ Զաքար աբեղա, կազմող՝ Մելքիսեդեկ, վայր՝ Անկումեաց վանք, 1476 թ.:

Մ. Մ. ձեռ. № 6832. ժողովածու, ԺԵ դ.:

²² Նույն տեղում, Բ, էջ 54:

²³ Նույն տեղում, Ե, էջ 61:

²⁴ Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանին, Անթիլիաս, 1981, էջ 273:

²⁵ Նույն տեղում, էջ 550:

²⁶ Նույն տեղում, էջ 592:

²⁷ Ցուցակ ձեռագրաց Մխիթարեանց ի Վիեննա, Ա, 1895:

²⁸ Ցուցակ ձեռագրաց Անկյուրիոյ Կարմիր վանքի և շրջակայից, Անթիլիաս, 1977, էջ 704:

²⁹ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Բ. Վենետիկ, 1924:

Ղալաթիայի ձեռ. № 481. Հավաքածո, գրիչ և ստացող՝ Ղազար վրդ., 1475 թ.³⁰:

Եղմ. ձեռ. № 1407, 1354 թ.³¹:

Եղմ. ձեռ. № 1363. Ժողովածու, գրիչ՝ Անդրեաս, ԺԼ³²:

Եղմ. ձեռ. № 1262. Ժողովածու, գրիչ՝ Տոնական, 1378 թ.³³:

Եղմ. ձեռ. № 589. Ժողովածու, 1668 թ.³⁴:

Ժ. Թուղթ առ Կարմեցիս³⁵

Առայժմ այստեղ չենք անդրադառնա Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարմեցիս» երկի բովանդակությանը: Կներկայացնենք այն ձեռագրերը, որոնց հիման վրա կազմել ենք «Թղթի» գիտական բնագիրը: Նախ կներկայացնենք տասանմեկ այն ձեռագրերը, որտեղ «Թուղթը» հատվածական ընդօրինակությամբ է, որոնք ձեռագրացուցակներում կամ հենց ձեռագրերում վերնագրված են այլ կերպ, կրում են բովանդակային բնորոշումներ և խորագրեր.

Մ. Մ. ձեռ. № 2335. Ժողովածու, գրիչ՝ Կարապետ քնն., վայր՝ Երուսաղեմ, 1476 թ.³⁶:

Մ. Մ. ձեռ. № 1054, Ժողովածու, գրիչ՝ Անտոն, ԺԵ դ.:

Մ. Մ. ձեռ. № 4070. Ժողովածու, գրիչ՝ Վարդան կրոնավոր, վայր՝ Իլով, 1553 թ.:

Մ. Մ. ձեռ. № 4251. Ժողովածու, գրիչ՝ Ստեփանոս, ԺԶ դ.:

Մ. Մ. ձեռ. № 1177, Ժողովածու, գրիչ՝ Զաքարիա Զուղայեցի, Հարություն Սեբաստացի, ստացող՝ Զաքարիա Սեբաստացի, վայր՝ Կ. Պոլիս, 1653 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2606. Ժողովածու, գրիչ՝ Հովհան Երեց, 1678 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2251, Ժողովածու, գրիչ և ստացող՝ Հովհաննես վրդ., 1694—1698 թթ.:

Մ. Մ. ձեռ. № 2268. Ժողովածու, գրիչ՝ Կարապետ քնն., Դավիթ Եվդոկացի, ստացող՝ Դավիթ Եվդոկացի, վայր՝ Ադամա, 1685—1689 թթ.:

Մ. Մ. ձեռ. № 6509, Ժողովածու, գրիչ՝ Սիմեոն, Դավիթ, ԺԷ դ.:

Զմմատի ձեռ. № 563. Ժողովածու³⁷, գրիչ՝ Հովհաննես, ԺԷ դ.³⁸:

Վենետիկ, ձեռ. № 251. Ոսկեփորիկ³⁹, ստացող՝ Պարոն, ԺԲ դ.⁴⁰:

³⁰ Ղալաթիոյ, էջ 706:

³¹ Ցուցակ Երուսաղեմի, Ե, էջ 61:

³² Նույն տեղում, Գ, էջ 109:

³³ Նույն տեղում, Գ, էջ 438:

³⁴ Նույն տեղում, Գ, էջ 589:

³⁵ Սույն թղթին մտադիր ենք անդրադառնալ առանձին հոդվածով:

³⁶ Այս ձեռագրում հատվածը, որ մկրտության մասին է, սկզբի մասով և վերջապանով մի փոքր տարբեր է մեր բնագրի նույն հատվածի համեմատ. մեր կարծիքով այս տարբերությունները հետագա գրչի միջամտության արդյունք է:

³⁷ Մայր ցուցակ Զմմատի վանքի, Բ, էջ 17:

³⁸ Այս բնագրում կա մի վերջավորություն, որ ևս անծանոթ է մեզ, քանզի չկա մեր բնագրում:

³⁹ Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վենետիկ, 1924 թ. հտ. Բ:

⁴⁰ Հավանաբար ԺԲ դարի այս ձեռագրում հետագայում ավելացվել է Երզնկացու նշված գործը:

Այժմ կներկայացնենք այն ձեռագրերը, որոնց հիման վրա կազմել ենք «Թղթի» գիտական-համեմատական բնագիրը:

Մ. Մ. բնագիր-Ձեռագիր № 705. ժողովածու, վայր՝ Կիլիկիա, գրիչ՝ Սարգիս, ժամանակ ժԴ դ.:

Մ. Մ. ձեռ. № 639. ժողովածու, գրիչ՝ Հովհաննես երեց, ստացող՝ Գրիգոր քին. Խասմելիք, Արմա-խաթուն, ժամանակ՝ 1409 թ.:

Մ. Մ. ձեռ. № 6608. Ճառընտիր, ստացող՝ Յոհաննես քին., որդի Ամիր Բակերչի, ժամանակ ժԵ:

Մ. Մ. ձեռ. № 728. ժողովածու, վայր՝ Ծատախ (Գանձակ), գրիչ՝ Ոհաննես, ժամանակ՝ 1621 թ.:

Մ. Մ. ձեռ. № 614. ժողովածու, գրիչ՝ Սիմեոն, ստացող՝ Պաղում Ճուղեցի, ժամանակ՝ 1625 թ.:

Մ. Մ. ձեռ. № 4063, ժողովածու, վայր՝ Ադրիանապոլիս, գրիչ՝ Մինաս Լտերենցի, ստացող՝ Եփրեմ վրդ., ժամանակ՝ 1694 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2283, ժողովածու, գրիչ՝ Յակոբակ, ժամանակ՝ ժԸ դ.:

Մ. Մ. ձեռ. № 6302, ժողովածու, ժամանակ՝ ժԸ դ.:

Մ. Մ. ձեռ. № 2715. ժողովածու, գրիչ՝ Յակոբ, Յովակիմ կրոնաւոր, ժամանակ՝ ժԹ դ.:

Մ. Մ. ձեռ. № 774. ժողովածու, վայր՝ Քոթահիա, գրիչ՝ Անտոն Քոթահիացի, Գրիգոր, ստացող՝ Ներսես Տաթևացի, ժամանակ՝ ժԹ դ.:

Ինչպես տեսնում ենք Կիրակոս Երզնկացին իր համեմատ տեղն ունի հայ բազմադարյան մատենագրության մեջ և արժանի է լուրջ ուսումնասիրության:

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՅՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ԿԱՐՆԵՑԻՍ» ԵՐԿԸ

Գործի ստեղծման ժամանակը:—Իկոնիայի սուլթանության կործանումից հետո հրա տարածքում առաջանում են մի շարք էմիրություններ. «... Երկուսը դրանցից ավելի ուժեղ էին և զավթող: ԺԴ դարի 20-ական թվականներին, երբ օսմանյան թուրքերը նվաճելով Փոքր Ասիայի բյուզանդական գավառները, շարժվում էին դեպի Մարմարի ծով, սելջուկ թուրքերն ու կարաման թուրքերն սկսեցին արշավել Կիլիկիա»¹: Այս արշավանքների մասին արժեքավոր տեղեկություն է հաղորդում Գրիգոր Կարնեցի եպիսկոպոսը. «Եւ արդ, մինչ է (թուական) Հայոց 2 և Հ (1321) ամպարիշտն ոմն յազգէն Նետողաց, որում անուն Դամուրտաշ ասի, այսինքն Երկաթաքար, անօրէնն գայ յաշխարհն Հոռոմոց, և տեսեալ գերկիրն Հայոց գԼիլիկիա, զի որպէս ճիւղ մի ձիթենոյ մնացեալ դադարէին ի նեղ և ի յանձուկ և ի խորշակահար երկրին: ...Եւ անօրէն Երկաթաքարն այն մտեալ լերկիրն հայոց՝ բազում հետեւակօք և ձիաւորք և բազում աներմունս արարին...»²: Այս արշավանքի մի այլ նկարագրող՝ Ներսես Պալիանենցը գրում է, որ Դամուրտաշը «սաւելի քան 30000 հեծելօք և բազում հետեւակօք, այսինքն՝ ամենայն ուրտուիւն իւր յակաւմայ

¹ Г. Г. Микаелян, История киликийского армянского государства, Ереван, 1952 г., стр. 447.

² Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք և պատմութիւնք Հայոց, մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 530:

և բռնութեամբ ի աշխարհի Հայոց Կիլիկիա մտաւ և բազում աներ արար, սպանութիւն և աւար...»³:

Այժմ ներկայացնենք Դամուրտաշին և բացատրենք, թե ինչ կապ ունի այն մեր ուսումնասիրության առարկա Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» գործի գրության ժամանակի պարզման հարցում:

«ԺԴ դարի 20-ական թվականների սկզբին Կարամանիայում* իշխում էր Աբու-Սաիդի վեզիր Չուբանի որդի Դամիրտաշը...»⁴, որը 1320—1323 թվականներին Եգիպտոսի սուլթան Նաիիրի դրոմամբ արշավեց դեպի Կիլիկիա և նրա հյուսիսային շրջանները: Ահա այս Դամիրտաշի արշավանքների մասին հպանցիկ ակնարկ կա Կ. Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» գործում, որտեղ հեղինակը խոսելով ժամանակաշրջանի խառնակ վիճակի մասին, հուսադրում է Կարնեցիներին, թե, իրավ, ձեզ մոտ կա ներքին պատերազմ, «սուտ եղբարց» դեմ, բայց, ասում է հեղինակը մեզ մոտ էլ խաղաղ չէ. «այլ աներումն ու պաշարումն և սպանուն և գերութիւն և հրձիգութիւն բազմապատիկ կրեցաք, զի մնացեալն ի մարախոյ Տամուրտաշ կոչեցելոյ եկեր թիթորն...»⁵: Այս ակնարկի և վերը ներկայացված պատմական իրողությունների համադրմամբ, կարող ենք եզրակացնել, որ Կարնեցիներին ուղղված իր կարևոր ուղերձը Կ. Երզնկացին գրել է Դամուրտաշ թաթարի Կիլիկիա արշավանքից անմիջապես հետո՝ 1323 թ. կամ ամենաուշը 1324 թվականին:

«Առ արնեցիս» թղթի գրության շարժառիթը:—Այժմ, երբ բավական ճշգրիտ մոտավորությամբ գիտենք այս երկի ստեղծման ժամանակը, առավել հեշտ է ներկայացնել պատմական այն իրադարձությունները, որոնց թելադրանքով էլ մեր հեղինակը շարադրել է հետագայում շրջաբերականի նրշանակությունն ստացած իր թուղթը: Այս իրադարձությունների ամբողջությունը հայ պատմագիտությունը կոչել է «միարարական» (ունիթորական) շարժում, որով պայմանավորված էր մեր հեղինակի մերձավորագույն նախորդներ Սո. Օրբելյանի («Հակաճառութիւն» արևելյան վարդապետների՝ նրա ղեկավարությամբ գրված պատասխանը Կիլիկյան վերնախավին) և Մովսէս Երզնկացու («Ընդդիմադրութիւն սակս ջրոյ խառնման») ուղմարմոյթ երկերը: ԺԴ դարում խաչակրաց արշավանքներից հետո Կիլիկիայի հայկական թագավորության շուրջ առաջանում են լատինական ծագում ունեցող մի շարք թագավորություններ և դքսություններ, որոնք Կիլիկյան թագավորների հետ ստեղծում են մշակութային, առևտրական և քաղաքական սերտ կապեր, այս կապերը ինչպես ցույց է տալիս ակադ. Լ. Խաչիկյանը, ունեցան իրենց թե դրական, և թե բացասական կողմերը:

Նախ, ինչպես նկատում է Լ. Խաչիկյանը, «Հայ գիտական միտքը մինչև ԺԴ դարի 30-ական թվականները սնվում էր հին հունական գիտական գրականության այն փշրանքներով, որ շրջանառության մեջ էր դրվել Ե—Ը դարերի ընթացքում՝ հունարան դպրոցին պատկանող գիտնական թարգմանիչ-

³ Նույն տեղում, էջ 532. հմմ. Մանր ժամանակագրություններ, հտ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 188:

⁴ Շրջան Փոքր Ասիայում. տե՛ս: Энциклопедический словарь. изд. Ф. А. Брокгауза и И. А. Ефранъ, С. Петербургъ, 1895, т. 27, стр. 439.

⁵ Գ. Գ. Микаелян, նշված աշխատ., էջ 447:

⁶ Տես բնագիր, էջ 1:

⁷ Լ. Խաչիկյան, Քոնստի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցին—Յովհաննես Քոնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 17:

ների կողմից»⁷: Սակայն ԺԴ դարի կեսերից սկսվում է լատիներենից հայերեն թարգմանվել Թովմա Աբվիմացու, Նիկողայոս Լյուտացու, Բոնավենտուրայի և այլոց գործերը:

Անշուշտ այս փոխադարձ կապերը միայն հայերի համար չէին օգտակար, նրանք բավական նպաստավոր եղան ման եվրոպական մշակույթի և գիտական մտքի համար՝ Արևելքի մշակույթի հետ ուղղակի շփումը հող նախապատրաստեց եվրոպական վերածննդի համար:

Իսկ այս հարաբերությունների բացասական կողմը հայ ժողովրդի համար այն էր, որ սկսած ԺԳ դարից կրիկյան հայ թագավորները, հատկապես Հեթումյանները, իրենց պետության պահպանման համար հայացքները հանեցին Եվրոպա՝ Վատիկան, որը բացի խոսքերից ոչնչով չկարողացավ և չցանկացավ օգնել Հայաստանին, ընդհակառակը, հայ ժողովրդի մեջ գցեցին երկպառակություն և դավաճաբանական վեճեր:

ԺԳ դարի վերջի և ԺԴ դարի հայոց կաթողիկոսներ Գրիգոր Անավարզեցին և Կոստանդին Կեսարացին ջանք չէին խնայում հայ եկեղեցին Վատիկանին ենթարկելու համար: Հայ ժողովուրդը բաժանվեց երկու մասի՝ ազգային ուժեր, որոնք անգիշում պայքար էին մղում հայ եկեղեցու ավանդության և դավանության պահպանման համար: Այս մասի գլուխ էին կանգնած թուն Հայաստանի վարդապետներն ու իշխանները. «Հաւան ենք մեք ընդ հարսն մեր ի դժոխս իջանել, եւ ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել...»⁸: Այս էր նրանց կարգախոսը, որ այսքան գեղեցիկ ու դիպուկ ձևակերպել էր Մյուկյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը: Մյուս մասը՝ միարարներ, որոնք հակում ունենալով դեպի Եվրոպան՝ Վատիկանը, ձգտում էին ամեն գնով գլուխ բերել հայ և կաթոլիկ եկեղեցիների միության հարցը, որն անշուշտ, վնասում էր մեր եկեղեցուն ու ժողովրդին:

Մինչև ԺԳ դարի վերջը կաթոլիկները բավական զգույշ էին մոտենում հայ ժողովրդի դավանափոխ լինելու հարցին, սակայն Կրիկյան թագավորության անկումից հետո Վատիկանը բացարձակ սկսեց ստիպել հայերին դավանափոխ լինել, ընդունել Հռոմի գերագահությունը:

Միարարական շարժումը բուն կերպով սկսում է զարգանալ և տարածվել հատկապես Հայաստանի հարավային, հյուսիս արևմտյան շրջաններում և Կրիկիայում:

Կաթոլիկների համար վիճակն ավելի բարենպաստ դարձավ, երբ 1318 թ. Հովհան ԻԲ պապի կոնդակով Արևելքում ֆրանցիսկյաններին փոխարինելու եկան ղոմիսիկյանները: Սուլթանիա պապական կենտրոնից կաթոլիկ քարոզիչները մեծ հաջողությամբ սկսում են կաթոլիկացնել ոչ միայն առանձին համայնքներ ու գյուղեր, այլ՝ ամբողջ շրջաններ:

Խոսելով կրոնափոխ հայերի մասին, ապա նրանք ամեն կերպ ձգտում էին արդարացնել իրենց ազգավնաս գործունեությունը. «... չենք զհայրենի ցանկն քակել, ապա Աստուծոյ գրոցն սահմանն զտուրք հարցն կու պահենք...»⁹:

Միարարական շարժման հետ միաժամանակ ծնունդ է առնում հակամիարարական հոսանքը. սրանք այն հոգևորականներն ու աշխարհականներն

⁷ Նույն տեղում, էջ 9:

⁸ Նույն տեղում, էջ 18:

⁹ ՄՄ ձև. № 2037, Գրիգոր Անավարզեցի, Թուրք, էջ ԺԷ:

Էին, որոնք կաթոլիկության քողի տակ տեսնում էին նրա իրական դեմքը, նրա նպատակները հանձին կաթոլիկության նրանք տեսնում էին Հայ եկեղեցու կործանումը, հայ ժողովրդի ձուլումը և ազգային ավանդության վերացումը: Այս շրջանում և հետագա դարերում հայոց պատմության ասպարեզում երևում էին ազգային ավանդների հզոր պաշտպաններ. Սյունյաց մետրոպոլիտներ Ստեփանոս և Հովհանն Օրբելյանները, Ներսես Մշեցին, Եսայի Նշեցին, Հովհաննես Երզնկացին, Մովսես Երզնկացին, Կիրակոս Երզնկացին, Մաղաթիա Ղրիմեցին, ավելի ուշ Գրիգոր Տաթևացին և ուրիշներ: Առաջ են գալիս նաև դպրոցներ, մշակութային-հոգևոր կենտրոններ, որոնք համատ և երկարատև պայքար են մղում ունիթորների դեմ. այդ դպրոցներից են Սյունյաց առաջնորդարանը, Գլաձորի և Տաթևի համալսարանները և այլք: Առաջանում է հարուստ հակառակական գրականություն, որը բազմացվում, տարածվում է ժողովրդի մեջ: Այդպիսի կարևոր գործեր են Ստեփանոս Օրբելյանի «Հակաճառություն ընդդեմ երկրնակաց, շարադրեալի թուին Հայոց ՉԾԱ»¹⁰, Մովսես Երզնկացու «Ընդդիմություն սակս ջրոյն ի Սուրբ խորհուրդըն ի թուին Հայոց ՉԾԲ»¹¹, Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» և շատ ու շատ այլ գործեր: Հետագա դարերում ցույց տվեց Հայաստանում սերմանված կաթոլիկության անգործությունը և անհետանկարայնությունը: Կաթոլիկ հայերի հզոր և ստվար համայնքները ԺԴ դարի վերջերին առաջացած ծանր դրությունից դուրս գալու համար ընդունեցին մահմեդականություն, ապագայնանալով ձուլվեցին թուրքալեզու ցեղերին:

Լ. Խաչիկյանը գրել է. «... Հայ կաթոլիկները, կտրված լինելով ազգային կենսատու ավանդություններից, ... խզեցին կապերը մայր ժողովրդից, ընդունեցին մահմեդականություն»¹²: Ավելի ուշ Ղազար Զահկեցին իր «Դրախտ ցանկալի» գործում, որպես տարիներ առաջ կատարված փաստ, նշում է. «Գեղորայքն բազումք դարձան ի կրոնս պարսից...»¹³:

Այսպիսով կարող ենք ասել, որ ԺԳ դարում սկսած ունիթորական շարժումը մեծապես վնասեց մեր ժողովրդին*, իսկ այն հայերը, որոնք ընդունեցին կաթոլիկությունը, հետագայում զոհ դարձան այս անհետատես շարժմանը միաբանելու պատճառով:

Կ. Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» գործի աղբյուրները:—Կիրակոս Երզնկացին իր գործերում բավական մեջբերումներ ունի Աստվածաշնչից, հատկապես Ավետարաններից և Առաքելական թղթերից, ինչպես նաև Պատարագամատույցից: Բացի այս հիմնական գաղափարական աղբյուրներից, մեր կարծիքով նա ձեռքի տակ ունեցել է նաև Մովսես Երզնկացու «Ընդդիմադրություն» գործը: Վերջինս, ինչպես պարզել ենք, ուղղված էր Սսի 1307 թ. և Աղանայի 1317 թ. նշանավոր ժողովների կանոնների դեմ, իսկ Կիրակոսին առաջադրված հարցերը Հայաստանում վիստացող կաթոլիկ բա-

¹⁰ Տեսնոն Ստեփանոսի նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառություն ընդդեմ երկրնակաց շարադրեալի թուին Հայոց ՉԾԱ, Կ. Պոլիս, 1756 թ.:

¹¹ Եզնկի արեղա Պետրոսյան, Էջմիածին, 1974 թ. Թ—Ժ (ստանձնատիպ):

¹² Լ. Խաչիկյան, Արտագի հայ իշխանությունը և Ծործորի դպրոցը, Բաներ Մատենադարանի, ԺԱ, էջ 125—210:

¹³ Ղազար Զահկեցի, Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735 թ., էջ 333—334:

*Մինչև շոշափելի օգուտը մշակութային այս հսկա ժառանգությունն է, որ ստեղծեցին հայ միարարները, և որը բավական նպատավոր ազդեցություն ունեցավ ԺԳ—ԺԸ դդ. հայ մատենագրության և գիտական մտքի զարգացման վրա:

րոզիչների մեղադրանքներն էին և համընկնում էին վերոհիշյալ ժողովների ընդունած որոշումների հետ: Այսինքն, Կ. Երզնկացին պատասխանում էր նույն հարցերին, որոնց մի անգամ արդեն պատասխանել էր իր նշանավոր հայրենակիցն ու մերձավոր մախորդը: Հենց այս համգամանքներից էլնելով էլ Կ. Երզնկացին օգտագործել է Մովսես Երզնկացու երկը:

Բերենք ասվածը հաստատող մի քանի զուգահեռ.

«Ընդդիմադրություն»¹⁴

«Եւ երկրորդ գրէ և առաքեալն Պօղոս առ Կորնթացիսն, ասելով. «Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս և ըմպիցէք զբաժակս՝ զմահ Տեառն պատմեսցիք» (էջ 49):

«Եւ այն որ ասէ սուրբն Յոհաննի մեկնութիւն Աւետարանին, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչև արարից զդոցա ըստ արքայութեան Հօր իմոյ» (էջ 50):

Հատկանշական է այն, որ այս հատվածները երկու հեղինակներն էլ օգտագործել են Պատարագի՝ խորհրդի քննության մասում: Այս մասնությունը մեկ անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ Կ. Երզնկացին օգտվել է Մովսես Երզնկացու նույնաբանությամբ երկից:

Նույն դավանաբանական ծիսական խնդիրներին վերաբերող հատվածները երկու հեղինակներն էլ սկսում են մնամկող ձևերով: Օրինակ՝

«Ընդդիմադրություն»

«Վասն ջրոյն, թէ պարտ է խառնել ի սուրբ խորհրդոյն, որպէս այլ քրիստոնեայքն: Որոց առաջինն պատասխանի» (էջ 20ա):

Ինչպես ասվեց վերևում, Մովսես Երզնկացին պատասխանել է Սսի կանոններին և Հեթում Բ թագավորին ուղղված Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի հորդորական թղթին: Մի փոքր շեղվելով մեր հեղինակից, բայց չհեռանալով նրա թղթի մեջ արծարծված հարցերից, բերենք այս դրույթը հաստատող երկու համադրությունն ևս:

«Թուղթ Անավարզեցու»

«Գ (3) են, որ վկայեն յերկինս՝ Հայր և Դրդի և Հոգին Սուրբ, և Գ (3) են, որ վկայեն յերկրի՝ Հոգին և ջուրն և արինն...»:

«Եւ զՍուրբն Գրիգոր Նիսացոյն Երգ Երգոցն, որ կու ասէ, բաց գրեալն և խմէ զջուրն ի կողէն զոր տգրն աղբերացոյց»:

Չեռ. 2037, էջ ԺԷ

«Թուղթ առ Կարնեցիս»

«Եւ Պօղոս ասէ, թէ քանիցս անգամ եթէ ուտիցէք և ըմպիցէք, զմահ Տեառն պատմեսցէք» (էջ 10):

«Յայսմ յետէ ոչ ևս արբից ի բերոյ որթո, որթն գինի ծնանի և ոչ ջուր, որպէս ասէ Յոհանն Ոսկեբերանն ի նոյն քանի մեկնութիւն...» (էջ 9):

«Թուղթ առ Կարնեցիս»

«Իսկ երրորդ քանի առարկութիւն, որ ասեն. պարտ է ջուրն խառնել ի Սուրբ խորհուրդն, առ այդ պատասխանենք» (էջ 9):

«Ընդդիմադրություն»

«Գ (3) են որ վկայեն յերկինս՝ Հայր և Բան և Հոգին, և Գ (3) են, որ վկայեն յերկրի՝ Հոգին և ջուրն և արինն և Գ(3)-եան մի են» (էջ 50):

«Նաև. Մեծն Գրիգոր Նիսեսա յԵրգ Երգոցա մեկնութեանն այսպէս գրէ. բաց գրեալն, արբ ջուրն, զոր տգն աղբերացոյց քեզ և զի գինին ջուր է» (էջ 50):

¹⁴ Տես Եզնիկ արեղա Պետրոսյան, Էջմիածին, 1974, Թ—Ժ, էջ 49—50:

Ուրեմն, այս գործերը իրար միանմանություն ունենալը պատահական չէ, նախ որ Սսի և Անավարզեցու թղթերը ինչ-որ կաթոլիկական ներմուծություններ են պաշտպանում, ապա թե Մովսես Երզնկացին և թե Կիրակոս Երզնկացին հակադրվում են դրանց, ապա վերջինս անշուշտ իր հակաճառության մեջ օգտվում է Մ. Երզնկացու գործից:

Այսպիսով, պարզվում է, որ ԺԴ դ. սկիզբներին հայ իրականության մեջ պապականության սերմանած կրոնա-դավանաբանական այս խրտումների գրական երեք աղբյուրները սերտ կապ ունեն միմյանց հետ: Առաջինը Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսի Հեթում Բ թագավորին ուղղված թղթի, Սսի 1307 և Ադանայի 1317 թթ. ժողովների կանոնների ամբողջությունն է, որ ինչպես պարզվել է վերջերս կատարված մի ուսումնասիրությամբ, ԺԴ դ. սկիզբների կիլիկիահայ միարար վերնախավի (կաթողիկոսարանի և արքունիքի) ստեղծած և շրջաբերականի պահանջի նպատակադրմամբ հայոց բոլոր թեմեր առաքված պաշտոնական փաստաթուղթ էր¹⁵: Երկրորդը՝ Մովսես Երզնկացու «Ընդդիմադրությունը» առաջինի ուղղակի և շիտակ պատասխանն է, և ըստ այդմ, այդ փաստաթղթի ետևում կանգնած եկեղեցական-քաղաքական հոսանքի հակառակորդների ավանդական-ազգային ավատամբը: Իսկ երրորդը՝ Կ. Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» երկը, որը մեր հետազոտության բուն խնդիրն է, ուղղված է նույն երևույթի մի այլ դրսևորման դեմ, այն պահանջները, որ պապականությունն իր քարոզիչների ու դեսպանների բերանով ներկայացնում էր կիլիկիահայ վերնախավին և որոնք ընդունվեցին Սսի և Ադանայի հիշյալ ժողովներում, նույն քարոզիչներն ու Կարնո հայության մեջ նրանց որս դարձած նորադարձ կաթոլիկները ներկայացնում էին Կարինի ողջ հայությունը: Վերջինս ստեղծված նուրբ կացությունից ելք գտնելու համար դիմել էր ժամանակի նշանավոր ուսուցչապետներից մեկին՝ Կիրակոս Երզնկացուն: Հ. Երզնկացին էլ չէր ուշացրել խնդրված օգնությունը և իր խնդրարկուններին էր տվել գաղափարական մի հզոր զենք՝ իր այս թուղթը: Ջենքի բարերար ուժը շուտով զգացվել է, ուստի և այս ուղարկվել է նույն «սուտ եղբայրների» ձեռքից տատապող հայկական այլ կենտրոններ ևս: Երկպառակության հոռմեական սերմերով վարակված այս քաղաքներում (Անի, Թիֆլիս, Նախիջևան, Թավրիզ) նույնպես օգտագործվելով, Երզնկացու թուղթը դարձել է կաթոլիկների դեմ պայքարի գործնական ուղեցույց և Հայ եկեղեցու հետևորդներին ծառայել հետագա (հատկապես ԺԶ—ԺԸ) դարերու ևս:

¹⁵ 3. Հ. Վարդանյան, Ներսես Պաղիանեցին վերագրված ժամանակագրական մի ցանկի մասին, Պատմա-քանասիրական հանդես, 1980, Գ, էջ 189—202:

ՄԱՄԱՐԵ ՎԵՐԾԱՆՈՂԻ «Ի ԾՆՈՒՆԴՆ ՓՐԿԶԻՆ» ԾԱՌԸ

Ե դարի հայ եկեղեցական մատենագրության մեջ իր ուրույն տեղն ունի Մամբրե Վերծանողը, որ, ըստ Էակաց գրքի, Մովսես Խորենացու կրտսեր եղբայրն էր¹: Ցավոք սրանից զատ նրա մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել: Դատելով Մամբրեի անվամբ հայտնի երկերից, նա եղել է խոսքարվեստի նորություններին քաջատեղյակ մի հեղինակ և, ինչպես երևում է, իր գործուն մասնակցությունն է բերել հայ թարգմանական գործին: Ըստ մասնագետների, նրա մատենագրությունը պատկանում է հայ վաղ միջնադարյան մշակույթի մեջ կարևորագույն դեր կատարած հումաբան դպրոցի առաջին փուլին (450-ականից 480-ական թթ.)²:

Հրատարակությամբ հայտնի են Մամբրե Վերծանողի «Ծառ ի Յարութինն Ղազարու», «Ծառ ի գալուստն Տեանն յԵրուսաղէմ», «Յաղագս եկաւորութեան Փրկչին յԵրուսաղէմ», ճառերը³: «Վերծանող» մականունը վկայում է, որ Մամբրեն զբաղվել է ոչ միայն թարգմանական, այլև մեկնաբանական գործունեությամբ: Եվ իրապես, ձեռագրերում նրա անվամբ հայտնի է «Դատումն Քերդաճաց» խորագրով մի գործ, որ, ինչպես երևում է, Մամբրե Վերծանողի մեզ ամբողջապես չհասած Մեկնութիւն Քերականի երկի մեկ հատվածն է⁴: Չեռագիր մատյաններն անողղակիորեն հաստատում են, որ մեր հեղինակը իրագեկ է եղել դարաշրջանը հուզող իմաստասիրական խնդիրներին: Այդ է ցույց տալիս Մաշտոցի անվան Մատենադարանի № 1555 ձեռագրում գետեղված (թերթ 285ա—290ա) «Հարցմունք Մամբրեի, որ գիտակ էր արտին փիլիսոփայութեան և պատասխանիք Դատի եռամեծի և Անյաղթ փիլիսոփայի» (Հրց. Զի՞նչ են սահման մարդագոյին: Պոխ. Սկիզբն յերակաց անելութիւն...)» միավորը, որ ամենայն հավանականությամբ հիմնված է մի վաղնջական ավանդության վրա:

¹ Ն. Եպս. Պողարեան, Հայ գրողներ. Ե—ԺԷ դար, Երուսաղէմ, 1971, էջ 21:

² С. С. Аревшатян, Формирование философской науки в Древней Армении (V—VI вв.), Ереван, 1973, с. 154.

³ Կորին վարդապետի, Մամբրե վերծանողի, Դատի Անյաղթի մատենագրութիւնը, Վեներիկ, 1833, էջ 35—54 (տարբեր խմբ. 55—75), 76—87, 88—93:

⁴ Ն. Եպս. Պողարեան, Մաշ ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Դ, Երուսաղէմ, 1963, էջ 558:

Մամբրե Վերծանողի անվամբ մեզ է հասել մահ մի մահ, որ կրում է «Մամբրեի Վերծանողի ի Ծնունդն Փրկչին սասցեալ և ի ծնունդ Նորին Որս աւորն, այդ է՝ Մկրտութիւն» խորագիրը։ Այն, որ այս մահն իրապէս պատկանում է Մամբրե Վերծանողի գրչին, հաստատվում է ոչ միայն խորագրի պարզ ու մեկին տեղեկությամբ, այլև լեզվաոճական տվյալներով։ Խնդրոյ առարկա մտնում կենցաղավարում են մի շարք բառեր, որոնք առկա են Մամբրե Վերծանողի հայտնի մատերում միայն։ Այդպիսիներից են, օրինակ, «արարչեղէն», «կարապետական», «քաջաճայնապէս» («քաջաճայնաբար») բառերը, որոնք Նոր Հայկազյան բառարանը վկայաբերում է Մամբրեի անունով⁵։ Ինչպես հեղինակի անվամբ հայտնի ձեռագրում, այստեղ ևս կիրառված են հունարան հայերենին բնորոշ ձևեր ու դարձվածքներ։ Ճառը երևան է հանում ոչ միայն մեկնաբանական արվեստի օրենքներին քաջագիտակ հեղինակին, այլև՝ հմուտ բառաշինարարին։ Այստեղ առկա են գրված խավորապես հունարան հայերենի հետևողությամբ հորինված բառային միավորներ, որոնք բացակայում են նոր Հայկազյան բառարանում. **անյանցապէս, անպատկառաբան, առաւելաբեր, աստուածատեսաբար, առգանացեալ, աղբիրախաղացք, բացածաւալումն, գիշերացելում, կարապետագոչումն, կանխատօնակք, համափառաբար, ճանապարհակազմութիւն, մարգարէաբանել, մարմնակերպութիւն, նախանձաբերք, ոլորտական, սիրագոյն, պատեքական, վայրագապէս (վայրագաբար)⁶, տարահանեալ, տրամացեալ, օղաղօղակ**։

Մամբրե Վերծանողի այս ժառն իր որոշակի ազդեցությունն է ունեցել հայ հետագա մատենագրության վրա։ Այդ մասին են վկայում Մամբրեի երկում առկա այն բառերն ու արտահայտությունները, որոնք կիրառված են Սահակ Զորափորեցի Կաթողիկոսի (677—703 թթ.) «ՅԱրմատենևացն օր» մատնում։ Այլուստ մեզ անհայտ այդ միավորներից են. «գրաւորական»⁷, «երաժշտապետն Դաիթ»⁸, «եկաորել» («եկաորութիւն») ⁹, «հասարակաց Աւարիշ»¹⁰ և այլն։ Այդ ազդեցությունը երևում է նաև հետևյալ զուգադրությամբ.

Մամբրե Վերծանող

«... Ուստի սկզբնաւորեալ զտէրու
նեան կատարէր սքանչելագործու
թիւնս և զաստուածացեալ հակառա
կամարտն ի տիեզերապետութենէ
լուծեալ արտաքս ընկենոյր...»:

Սահակ Զորափորեցի

«Նշանակէ զաստուածացելոյ հա
կառականարտին ճոխութիւն ի տիե
զերապետութենէ լուծանել ընդ ու
տիւք մեռուացէ...»¹¹:

⁵ «Նոր Բաղդիր Հայկազեան լեզուի», Հտ. Ա, Վեներիկ, 1836, էջ 341, 1064, Հտ. Բ, Վեներիկ, 1837, էջ 985:

⁶ Տե՛ս «Նոր Բաղդիր Հայկազեան լեզուի», Հտ. Բ, էջ 778:

⁷ Տե՛ս «Յովհաննոս Իմաստասիրի Ամենցոյ մատենագրութիւնը», Վեներիկ, 1833, էջ 186, 187, 190:

⁸ Անդ, էջ 186:

⁹ Անդ, էջ 187, 189, 192:

¹⁰ Անդ, էջ 192:

¹¹ Անդ, էջ 189:

Մամբրեի Վերծանողի տակավին անտիպ այս ճառը մեզ է հասել միակ ընդօրինակությամբ, որ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 1798 ձեռագրում (թերթ 440ա—449ա): Ստորև ներկայացնում ենք ձեռագրիս ամփոփ նկարագրությունը՝ օգտվելով նրա ընդարձակ նկարագրությունից, որ կատարել է Օ. Եգանյանը.

Ժողովածու: **Ժամանակ՝** ԺԷ դ.: **Գրիչ՝** Պօղոս: **Թերթ՝** 456+1 (կրկ. 187): **Պրակ՝** Ա.—ԼԸ×12 (Ա 13): **Նիսք՝** թուղթ, արևելեան: **Մեծութիւն՝** 19,6×13: **Գրութիւն՝** միասին: **Գիր՝** բոլորգիր: **Տող՝** 24: **Կազմ՝** դրոշմազարդ, բալագոյն կաշի:

Բովանդակութիւն

Ա. 2բ—46ա Գիրք Պարապմանց սրբոյն Կիրդի վասն մարմնա[նա]ւոյ Միածնին:

Բ. 46ա—321ա Թուղթք և ճառք Կիրդի Աղեքսանդրացոյ

Գ. 288ա—299բ [Բանք Թէոդոսի Անկիրացոյ]

Դ. 321ա—453ա [Ճառք Աթանասի Աղեքսանդրացոյ, Բարսղի Կեսարացոյ, Գրիգորի Աստուածաբանի, Յովհաննոս Ոսկեբերանի, Մամբրեի Վերծանողի, Անտիպատրոսի Բոստրացոյ]:

Մամբրեի Վերծանողի ի Ծնունդն Փրկչին ասացեալ և ի ծնունդնորին Ութ աւուրն, այդ է՝ Մկրտութիւն¹*

Լոյս փայլեալ ի լուսոյ սիրողացն զլոյսն պաշտացուցանէ զտեսութիւն, իսկ երկնային և արարչական լոյս ծագեալ զըն(440բ)դհանուր²* տիեզերս: Լոյս էր օրէնն, «պատուիրանք Տեառն լոյս են և լուսաւորեն զաշս»¹ գրաւոյ սականին (sic) երաժշտապետն խոստովանեաց Դաւիթ: Լոյս էր և Յովհաննոս կարապետական մկրտութիւն և մաքրէր զյանցմանց խոստովանութեամբ և զմարմինն ջրոյ լուացարանաւ և վերագոյն քան զքահանայական մկրտութիւնս էր: Լոյս Իսրայէլի՝ աստուածեղէն յայտնութիւն և մկրտութիւն: Սա է վերագոյն լոյսն և նախաճառեալ լուսաւորութեանցն լուսոյ լոյս, քանզի երբեակ զանազանութեամբ Բան ի ծոցոյ երևեալ Հօր նախ ի մարգարեական ճշոյլափայլ լուսաւորութեամբ ի գիշերացելոյն բազմաստուածութեան զեկաւորելն գուշակէր:

Երկրորդ՝ զաստուածեղէն և զմարմնաւոր ծնունդ յանապական Կուսէ ծնանելով հաւատարմացուցանէր զնախահարցն կանխագուշակ տեսութիւնս, որք զԿուսին յղութիւն, ի Բեղդէմ զծնունդն, զփախչիլն յԵգիպտոս և զԲանն տնօրինեալ և աստուածաբար ընդ մեզ կենցաղավարեցեալ բացալայտնեցին արարչական հոգովն երբեակ յայտնութիւնս տիրապէս և աստուածա/(441ա)-բար: Եւ գերազանցեալ զերկու[ն]քն՝ ճոխանա առաւելաբեր շնորհիւ, վաւրնզի ճշմարտապէս զբնութիւնս զաղափարեաց, իսկ բնաւորութենէ բնութեանն առնէ սկիզբն զծնելութիւն և զերեսներեակ ներք ժամանակս, յորս

* Մկրտութիւն՝ լուսանցքում:

²* Ձեռ. զնթանուր:

¹ Սաղ. ԺԸ 9:

լուր զարարչեղէն սքանչելագործել հրաշս, զի մի իսկ և տարածամ երևեսցի օրինակացն վարդապետելն, լուծանէր զանխանձաբերացն զպատմաստու և, աւարտեալ զմարմնատր տիոցն սահման, զշարակնողացն կտրէր զհակառակաւէր կամսն: Վասնզի յանցաւորութեան յառաջին մարդոյն սակս զյանցաւորի տպաւորի պատկեր երիտասարդական անխաստեղծին տիօք յայտնէր զաստուածային երևումնն, զի յերկուց տարացուցական վկայից արարչեղէն հաւատարմացի բարեբանեալ յայտնութիւնս, քանզի ստուգապէս մարմնանայր Բանն՝ բովանդակ մարդկեղէն մասանց ողջ զկարգն պահելով: Եւ դաստիարակութեամբ Կուսին գողայութիւն հաւատայր և հասարակաց բնաւորութեան աղբիւրն գոլով ի տղայական տիս պատմաւէր զանբանութիւնս և ըստ օրինականին անվանէր աւանդիւք/(441բ) թլխատեալ յութերորդումն ի քառասներորդումն արեամբ աղանեսց ի տաճարի լինի յանդիման: Այսպէս և յերեսներորդումն ի Յովհաննէ մկրտի և զհամօրէն գրաւորականին ժողովարանին աւարտէ զաւանդն, զի մախացողքն անբանացին ի հայհոյական պատճառէ պանծացողքն յօրէնս, քանզի կարապետութիւն Յովհաննու մաքրէր զոգի և զմարմին մարդկեղէն բնութեանս և մարմնացելումն յերկրի աստուածապէս ուղիղ ճանապարհ զմաքրութիւն ոգոյ և մարմնոյ օրինական ժողովարանին առնէր: Ես «ձայն բարբառոյ յանապատի»² ասելով ձայն հնչողական զանխահրաւէր զյառաջագուշակ զիւր կոչումն ասէ և անապատ զանյայտ և զանսկզբնաւորեալ բարոգութիւն առաքելոցն ասէր և ևս անապատ, քանզի ի քաղաքս և ի դրունս թագաւորաց մարգարեաբանեցին սուրբ հարքն: Իսկ մեծն Յովհաննէս յամայացելում վայրի ի Սաղիմս և Յորդանանու եզերս վայրագապէս բացօթեա զնայր և քաջաձայնաբար հնչելով. «Զապաշխարեցէք, հասեալ է արքայութիւն երկնից»³ /(442ա) ապաշխարել ի զոչումն յանցաւորութեանց մկրտելոցն յինքննէ, ասէ, և արքայութիւն՝ զՅիսուսի Աստուածութիւն, որ ի մկրտութեան իւրում զարարչական յայտնէր զօրութիւն և ընդ տիեզերս հասարակաց Հօրն հանել զօրութիւն Սուրբ Հոգին Յիսուսի խոստովանէր և նուցինքն Մկրտիչն յեկաւորիլն ի մկրտութիւն ասէ: Սա Գառն Աստուծոյ և բովանդակ մարդկեղէն մեղաց բարձօղ և զմկրտելն պատկառէր յաստուածային սոսկացեալ կիզմանէ զծառայական առ նա ճառեալ ասէ քանս: Ինչ ի հասարակաց կենդանագործէր պարտ է մկրտի, և զանճառելի արարչութիւնդ ընդ արարածոյս նուաստացուցանես բնութեամբ: Ինձ օրէն է առ քեզ գալ՝ առ տուողդ զՍուրբ Հոգիդ, առ վերածնիչ զտիեզերս յորդեգրութիւն երկնային Հօրն և առ գրօղդ զանուանս ի կենդանեաց դպրութիւն: Տոխիդ զՀոգի Սուրբ, առ իս գաս, որ ոչ ծանեար զմեղս և կիզուս զմարդկեղէն անօրէնութիւնս^{3*}, Արարիչդ արարածոց, նուաստանաս նիւթոյ՝ ճարտարապետդ, ծառայիս՝ Տէրդ, երկնային արքայութիւնդ՝ կարապետականիս, Աստուծո՜ մարդոյս, հոգոյդ տուողի՜ յապաշխարութիւն// (442բ) Մկրտչիս, Տէրդ՝ սպասաւորիս, ոչ փորձեցայց ասէ պաշխարութիւն/(442բ) Մկրտչիս, Տէրդ՝ սպասաւորիս, ոչ փորձեցայց ասէ ծախելի բնութեամբս ի հրեղէն բնութիւնդ հպիլ, զի հուր ծախիչ ես Աստուծո՜ մեր, զմմանն Պետրոսի խոստովանեալ ի պատեքական ընթերէն, յորում հրածարէր մեծն առաքելոցն ի յաստուածեղէն սպասաւորութենէ ի ծախելի սոսկացեալ բնութենէն:

² Յովհ. Ա. 23:³ Մատթ. Գ. 2, Դ. 17:^{3*} ան-ը լուսանցքում:

Աստ Յովհաննէս պատկառելի զարարչական գազաթամբն անել ջոր, անդ Պետրոս սուկացեալ գտերունեան ձեռացն սպասաւորել ոտնալուայութիւն: Աստ արարչական պատասխանեալ բան ասէ. «Այժմ այս պարտ է կատարել»⁴: Անդ ասէ. Թէ ոչ աստուածային լուսցից զոտոդ ձեռօքս, ոչ ընդ իս զորդեգրութեան ընկալցիս շնորհս և ծառայապէս հնազանդեալ երկաքանչիրոց: Աստ Յովհաննէս ի հրամանէն հարկաւոր էր մատուցեալ սարսափմամբ անէր ջոր զաստուածեղէն գլխովն: Անդ Պետրոս ծառայապէս զոտսն առաջի տէրունեանն ունելով սուկայր զարարչական ձեռացն հարկանել: Եւ քանզի յայտնութեան խորհուրդս, որ առնէ ի մկրտութենէ սկիզբըն, մկրտի Յովհաննէս ոչ ըստ կարապետագոյմանն, թէ ուղիղ զձեզ արարչեղէն ճանա// (443ա) պարհին կազմեցէք հետեւեցն ի ձեր մարմնի և յոգւոջ ի մաքուր վարս:

Արդ, հասարակաց Արարիչն որում վերագունի քան զհնքն մաքրեցէ զանձն, զի եթէ Յովհաննէս նորա սակս քաջաձայնէ, թէ յարմարեցէք գտերունեան պողոտա^{4*}, յորմէ՝ պատկառեալ բոլորեցուն Արարիչն հայցէ զմկրտութիւնն ի խոստովանութեանց կարապետիս յայտ է. ես ի քէն հայցեմ զմկրտութիւնն ի տուողէր զմաքուր հոգի ի հոգևորականէր գրաւորականս ի հոգւոյր և ի հրոյ յապաշխարութիւն կարապետիս և ի վերա ծնողէր աւագանաւ յորդեգրութիւնն ի խոստովանութիւն և ի մարմնոյ մաքրութիւն լուսցիչս. ոչ ասէ ոգոյ և մարմնոյ սակս մաքրութեան և կամ վերագունի քան զիս իջելոյ Տեառն ի քէն մկրտիւն: Այլ զբովանդակ կնքեցից կարապետական^{5*} մկրտութեամբք և սկզբնաորեցից^{6*} զիմ անտարանականս յայտնապէս և ի մկրտութենէն սուկ գրով զմկրտելն յորդեգրութիւն հրամայեցից և կոչեցից արարչապէս զմկրտեալսն յապաշխարութիւն մկրտիլ ի Հոգիս Սուրբ և ի հուր և աստուածային յայտնութիւնս ասէ երկուք^{7*} հաւատարմացի՝ վկայիք: Յերկնուստ Հօր քացարձակելով ձայն. «Դայ է իմ Որդի սիրելի»⁸, դովաւ ընդ աշ// (443բ) խարհի հաճեցալ և յերկրէ ճշմարիտ կարապետդ ասելով. «Սա գառն Աստուծոյ և տիեզերաց բարձօղ մեղաց և զաշակերտեալսդ քո կարապետականիդ կորգեցից յիմ անտարանականի սպասաւորութիւն արարչաբար: Վասնզի երկուք վկայիք հօր արարչականսն և Յովհաննոս կարապետականսն և երիտասարդական տիօք Յիսուս կնքէ զօրէնն գրաւորական և զհոգևորական յայտնէ աստուածապէս և զմկրտութիւն Յովհաննոս, որ ի վեր քան զքահանայականն էր փոխէ զգիրն ի հոգի յանտարանական զկարապետականն զծառայականն ի տիրականն և յաստուածեղէն զմարդկապէսն: Քանզի ճրագ զՅովհաննէս գտերունեան խոստովանեաց բերանն և զհնքն արեգակն և զօրինականաց ժողովարան տար օրէնութիւն գիշեր և զեկեալսն ի սարովկացոցն և ի փարիսականացն ի մկրտութիւն խնդալ ասէ ի նորա ջահաւոր կարապետութեան և զիւր եկաւորիւն ի մկրտութիւն արեգական էս և որպէս լուսաւոր ի գիշերի լուցմանէ ճրագի. այնպէս և նսեմաւոր օրինականին մանկունք Յովհաննոս խնդացին կարապետութեամբն: Իսկ յորժամ // (444ա) ճշմարիտ արեգակն Յիսուս եկեալ յիւր^{8*} մկրտութիւն

⁴ Մատթ. Գ. 15:

^{4*} Զեռ. պողոտա:

^{5*} Զեռ. կարապետիական:

^{6*} Զեռ. սկիզբնաորեցից:

^{7*} Այստեղ և հետագայում ձեռ. Բ-ուր:

^{8*} Զեռ. յի

⁵ Մատթ. Գ. 17:

և վկայեալ ի Հօրէ զարեգակնափայլ յայտնէ՝ զվարդապետութիւնն Առաստա-
նա կարապետական ճրագն Յովաննու արեգակնափայլ Յիսուսի անտարա-
նական վարդապետական և տեղի տա ծառայականն արարչականին որպէս.
ճրագ արեգականին, վասնզի բազում ասելով Որդիս Հօրն երկնաւորի, քան-
զի կոչէ որդիս զհրեշտակս և անդրանիկս զԻսրաէլ ի մարդկեղէն ազգաց և
որդիս պարարտութեամբ՝ զքահանայութիւն և զթագաւորութիւն: Այսպէս
զմկրտեալս ի սուրբ առաքանէ կոչէ որդիս: Իսկ ճշմարիտ որդի արարչակից
Բանն ի ծոցոյ հայրենի բնութեան անորոշաբար մարմնացեալ և սիրագոյն
քան զամենայն զարարչակից համափառութենէն ասէ և նովա ընդ աշխարհի
հաճեալ, զի ոչ հայրապետութիւն և մարգարէութիւն կամ քահանայական և
Յովաննու կարապետական մկրտութիւն զհայր ընդ^{9*} աշխարհի կարողացեալ
հաճել բա[յ]ց միայն Միածինն համափառ և համագոյ Հօր և Սրբոյ Հոգոյ
աստուածեղէն յայտնութեամբ հաշտեցուցանել ըստ արարածս զԱրարիչն և
զմիջնորմն քակէր զառաջին մարդոյն պատուիրազանցութիւն և զհրեշտակաց
և զմարդկան խառնել զաստուած//(444բ)եղէն բարեբանութիւն: Զի՞նչ մեզ
Սրբոյ Հոգոյն աղանակերպիլն ի տերունեան մկրտութիւն: Ասա զի զճնեա-
լն ի ջրոյ ի մկրտել Աստուածութեան ի ջրու սպասաւորեացէ: Երկրորդ՝ ա-
րարածոց Յիսուսի անդրանիկն յերկրէ թոշում ծառայապէս սպասաւորեացէ
Երեւակ՝ վասնզի երկնային և արագաշարժ Սրբոյ Հոգոյ արբանէկէր օդալօ
դակ բնութիւն արագագոյն քան զամենայն կենդանիս հաստատ նայէ զծա-
ռայութիւնն ըստ Յովաննու ձայնին՝ Տեսանէի զՀոգին Սուրբ իջեալ աղանա-
կերպ յերկնուստ և վերայ աստուածային իջեալ և հանգուցեալ զխոյն, վա-
սնզի միթեղէն բնութեանն համագոյակից վկայաբանէն: Իսկ տէրունեանն
և ազատ արարչակից Սուրբ Հոգին, քանզի ով յեղեղց զանեղին ծանիչէ
մարմնակերպութիւն, բայց նոյն ինքն մաքուր Հոգին համափառ և յանորիշ
մի իշխանութեամբ: Քանզի երիտասարդացեալ աստուածային Բանն անձա-
ռելի բնութեամբ ճառելիք Հոգոյն համագոյութեան անեղին լինին և ի մկր-
տիլն ոչ իր արարչական մկրտութեան սակս, այլ զմկրտելոցն յորդեգրու-
թիւն տպաւորէր զպատկեր: Զի որպէս յանցաւորի առաջին մարդոյն կեր//
(445ա)պարանակցեաց^{10*} անյանցապէս, այսպէս և անյանցապէս, այսպէս և
անյանց^{11*} գոլով մկրտի յանցաւորաբար, զի զմեղուցելոցն քանեաց զյան-
ցանս, վասնզի «անդրանիկ ամենայն արարածոց» զնա խոստովանեաց Պօ-
ղոս⁶: Զի որ ըստ Աստուածութեան անսկիզբն էր, մարմնանալովն եղանիր
սկզբնաւոր և զճնեալն զկնի ժամանակաց լինէր անդրանիկ արարածոց յա-
ղագս անսկիզբն Աստուածութեան, զի Արարչին և արարածոց անդրանիկն
յերկնային մասանց անդրանիկն ջուրք յառաջեացեն զծառայապէսն սպասա-
ւորել, քանզի ջուր էր, որ ի^{12*} սկզբանն յերկուս որոշէր տեսակս զերկիր ու-
րորտական պարունակութեամբ և զերկին հարթածալս ի վերայ տրամացելոց
հաստատութեանս: Եւ վասն երևեցելոյ զինքն Աստուած ի ձեռն ջրոյ. ջուրք
զմկրտութիւն սպասաւորեացեն Որդոյն Միածին: Յորմէ ասեալ իշխանութեան
սկիզբն յորդեգրութիւն զտիեզերս վերածնեացեն Հօրն բոլորեցուն, քանզի ի
ջուրն էր ի սկզբանն նախագոյացեալ և գրաւորականին թողութիւնս քանու-

^{9*} Զեռ. ընտ:

^{10*} Զեռ. կերպանակցեաց:

^{11*} Ի-ն լուսանցքում:

^{12*} Ի-ն լուսանցքում:

նայական արքանեկեր մաքրութեան և ի կարապետականին զմեղուցելոցն սրբեր զանմաքրութիւն: //(445բ) Իսկ ի տէրունեան մկրտութեանս առնոյր իշխանութիւն ոչ տակ զմեղս քանել, այլ յարարչական մասն ընդունել որդեգրապէս: Վասնզի երևելի լինելութեան և նախագոյ զջորս Մովսէս հառէ և Աստուածայնոյն վերահետկիլ նախագուշակումն երիտասարդացելոյն Հօր^{12*} Բանին և արարածոց անդրանկացելոյ յայտնել զինքն աստուածատեսաբար տիեզերաց ի ջորս և ջրով՝ զընդհանոր^{13*} տիեզերս ի շնչաւորութենէ ծնանել հոգևորս, որում երաժշտապետն Դաւիթ յառաջատեսող մարգարեական եղեալ Հոգով, ասէ. Ջոր որ ի վերայ քանզի երկինս օրհնեցեն զանուն Տեսուն, զի թեպէտ և երկրահով Յորդանանու վտակն խաղայր գերիվերոյ քան զերկին. Էր յաղագս զնստեալն յերկնի և յերկրի^{14*} ընդունել զմկրտութիւն լինէ՞նէ, և նստեալն յերկնի երկրային մարդ երիտասարդապէս և երկրաբար ջորն գերիվերոյ երկնի յաղագս վերահեղով զաստուածային մարմնովն: Նորում աղագաւ անպատկառաբանն Եսայի ասէ. «Ահաասիկ անուն Տեսուն եկաւոր է յամեցեալ ամօք զկնի բազում ժամանա// (446ա) կաց», և յետ սակաւոց ի վերայ բերէ. «և Հոգի մորս, որպէս ջոր ծորալիւր պարանցաթաղ»⁷: Ի բովանդակել մարգարեութեանց և օրհնին կնքել անուն տէրունեան ծնելութեանն հասանէր առ Հերովդէս և քահանայապետն: Իսկ մկրտութեանս Յորդանանու պարանցալիւր ջրով Սուրբ Հոգին բացատրական ձայնի և Հօր համախոհութեամբ ասէ. «Դա է Որդի իմ սիրելի, դովաւ ընդ աշխարհի հաճեցալ»⁸: Քանզի ձորն զՅորդանանու խորութիւն, ասէ, և լրացեալ զոլորտական բացաճաւաւումն և պարանցաթաղ ուսովք չափ զտէրունական մարմինն Յորդանանու պարաճածկել ջրով և զանդուստ ի վեր կարապետական աջոյն պատկառաբար մկրտել, վասնզի ի հասարակաց տիեզերացս կորստեանն ջոր էր, որով երկրի վայելչաթիւնք բառնայր աստուածային հրամանաւ: Իսկ աստ մարդասիրեալ Աշան բարեգթութեան ի ջորս յայտնել գերիտասարդացեալն Աստուած, զի իշմամբ ի ջորս զառաջին անէծսն, որ ի ջրոցն կնքեացէ և զանշնչացուցիչ ջորն ծընիչ յորդեգրութիւն փոխեացէ // (446բ) և վասնզի անդրանիկ ի լինելութեան ջոր անդրանիկ Որդոյ սպասաւորեացէ յերկուս մկրտութիւնս, ի տէրունականին՝ Յորդանանաւ և յառաքելականին՝ մաքուր աւազանաւ: Չայսպիսի ի^{15*} ջրոց արարչային յայտնութիւն մեծն թագաւորաց Դաւիթ յառաջատես Սրբով Հոգով եղեալ ասէ. «Գետք ծափս հարցեն ի միասին ձեռամբ»⁹: Քանզի իջանելով Արարչին ի ջորս տիեզերական խնդացին աղբիրախաղացք վտակ, զի որպէս գոլով ի Յորդանան բովանդակապէս Աստուածութեամբն բոլորովիմբ Էր ընդ^{15*} Հօր, այսպէս և իջանելով ի Յորդանան գրովանդակ լնոյր զջորս: Վասնորոյ ընդ Յորդանան տիեզերական խնդացին ջորք և ծափել ձեռօք զերկուս տօնել մկրտութիւն զտէրունեան Յորդանանաւ և զառաքելականն՝ սրբով աւազանաւ: Իսկ ձեռօք ծափել երկատեսակ աշն զՅորդանան տէրունեանն սպասաւորել մկրտութեան և զառաքելոցն, որ աւազանն նորածնէ որդիս հասարակաց Արարչին: Զի՞նչ մեզ ներելն Յիսուսի զվարդապետելն մինչ յերեսնեկեակ լրումն ամաց և աներևելի // (447ա) զարարչեղէն հրաշս արգելաւորել: Քանզի երեսնամեանն բոլոր կատարե-

¹²ա* Զեռ. յօր:

¹³* Զեռ. զնթանոր:

¹⁴* Զեռ. երկնի

¹⁵* ի-ն լուսանցքում:

¹⁵ա* Զեռ. տ

⁷ Եսայի, Լ 27, 28:

⁸ Մատթ. Գ 17:

⁹ Սաղ. ՂԵ 8

լուծիւն մարմնոյ յինքեան բերելով հասակ ի լուացելոյ և զմարմնոյն աւարտելով սահման, զի կատարեցելով մարմնով երեւցուցէ գերկուս բնութիւնսն յինքեան բերելով անորիշ համագոյութեամբ, զի որպէս անճառելի Աստուածութեամբն էր ամենակատար, այսպէս և երեւելի մարմնովն բոլորայարմար^{16*} տիեզերաց զինքն յայտնեցէ: Երկրորդ՝ զի երեսնամեմէն Յովաննու հանդերձեալ էր մկրտութեամբն յայտնել զուգահաւասար տիօք հանդիպէր Մկրտչին՝ զինքն նստան (sic) գոլ Կարապետին խնդրել զՄկրտելն երիտասարդ յերիտասարդէ, զի ըստ հարցմանցն և համագոյ վկայեցէն տիքն, քանզի ի յատուկ տարջէ Եղիաքէթ յամրութեմէ յղացեալ և սուրբ կոյսն Գաբրիէլի անտաբերութեմէ: Այսպէս և երեսնամեան մարմնացեալ քանն յինքեան Կարապետէն յերեսնամեմէն^{17*} մկրտէր, զի մի անմման և ընդդէմ աստուծային յայտնութեան երեւցի: Եւ ևս զի արութեան և քաջութեան ժամանակ երիտասարդականն է, զոր միաւորեալ ընդ արարչութեան // (447բ) յաղթող աստուածացեալ մարմնովն յայտնէր ի Յորդանան, ուստի սկզբնաւորեալ գտէրունեան կատարէր սքանչելագործութիւնս և զաստուածացեալ հակառակամարտն ի տիեզերապետութեմէ լուծեալ արտաքս ընկենոյր^{18*}: Իսկ վեցերբեակ ամսօք անդրանկական Յովաննու քան գտէրունեան տիսն Կարապետական ճանապարհակազմութիւն էր, որ ոչ տեւեամբ գիշերայնով, այլ տուրջեմականաւ բացարձակ ձայնի հնչեալ ասէ. «Մաքուր զաստուծային պողոտա ի ձեզ կազմեցէք», զի ոչ բազմաժամանակեա եկաւորել խոստովանէր, այլ զհուպ և վեցերեակ^{19*} ամսովք, քանզի ի յայտնելն զիր կարապետելն վեցերեակ յառաջաւոր ամսովք, յորում զԿարապետական կատարէր սպասաւորութիւն երեսնամեան^{20*} տիովք փոխէր ի մկրտել գերեսնամեան զհասարակաց Արարիչն Յիսուս: Զայսպիսի երիտասարդացեալ Աստուան հանճարափառն Սողոմոն յիր իմաստնաւոր տաղսն գրեալ ասէ. «Զբարձացիր երիտասարդ մանկական տիովք»¹⁰: Քանզի բնութիւն երիտասարդի եռանդնացեալ հասարակ միօք և մարմին // (448ա) առաքինոյն ի հոգևոր նահատակութիւնս: Այսպէս և երիտասարդացելոյ Հօր Բանին երեքտասնեան^{21*} տիօք զինքն բացերեւցուցեալ տիեզերաց աստուածապէս արութեան և քաջութեան ժամանակօք, որովք զծովասուղ վիշապին զհնուորութիւնս շնչահեղձոյց մեռուցանէր ի մկրտութեան ջուրս, քանզի ուրախանալ զյայտնելն ասի ի Յորդանան և զՀոգւոյն Սրբոյ վկայելն յերկնուստ իջիւք և գտիեզերական ջրոյն ընդ Յորդանանու համաբերկրական խնդալ և տարերց կնքել զընդունայնութեան հնազանդիւն: Եւ երիտասարդական մանկութիւն գերեսներորդումն ասէ, յորում մահուամբ գտիեզերս ազատս ի մահուանէ փրկանաւորեաց: Եւ յարուցելովքն ի գերեզմանէն և տարախանեալ զինքն յերկին երկնի ամպեղեն կառօք և նստել ընդ աջմէ Հօր համափառաբար նոյն մանկան տիօք մնա անփոփոխելի և տիեզերական խնդութեամբ միշտ խնդա երիտասարդապէս: Վասնորոյ անճառելի և աստուածային յայտնութեան նախամեծար գոլով հրեշտակային բարեբանեցուք երաժշտականութեամբ ընդ Սրբոյ Հոգւոյն միաբանեցուք իջելոյն յերկն// (448բ) ուստ ի Հօ-

16* յարմար-ը՝ լուսանցքում:

17* Ձեռ. յերեսնեմէն:

18* Ձեռ. յի-ը լուսանցքում:

19* Ձեռ. Զ-երեակ:


20* Ձեռ Լ-ամեան:

21* Ձեռ. Գ-տասնեան:

10 Ժող. ԺԱ 9:

րէ ընդ հաւատարիմ վկային երևեցելոյ աղանակերպ լուսափայլ և ողոր-
փառ առնելով զմիտս հերձուածողական աղանդոց: Յովհաննու խոստովա-
նութեան ձայնակցեցուք. «Ահա Գառն Աստուծոյ»¹¹ և տիեզերաց Բարձիշ
մեղաց, զի թեպէտ և ժամանակաւ եմք զկնի հաւատոց խոստովանութեամբ
համաժամանակօք Կարապետին եղիցուք, տէրունեան լիցուք երանիք, թէ
կնիք զոչ տեսեալ մարմնաւոր ակամբք, տեսցուք հոգևոր բըքօք և հաւատոյ
ողորափառութեամբ ընդ Յորդանանու բերկրեցուք՝ զմկրտութիւն զուարճա-
նալով, ընդ տիեզերական գետս ձեռամբ ծափեցուք ընդ առազանեցելոցն
համաշխարհապէս: Եղիցուք կանխատօնակք աստուածային ուրախացեալ
լայտնութեամբ, վասնզի Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ ընդ երկրի, ցնծա-
ցուք ընդ լոեցելոյն զընդունայնութեան հնազանդելն, ընդ տեսանողին զիւր
Արարիչն լայտնութեամբն երևեալ Թագաւոր և զհակառակամարտին տէրու-
թեան հանդերձ բազմաստուածութեամբ ընկեցեալ արտաքս: Վասնորոյ Հօրն
բաւականի և Որդոյն Միածնի և մաքուր և ազատիչ Սուրբ // (449ա) Հոգ-
ւոյն երից անձնաւորութեանց և մին անորիշ Աստուածութեան պանծալի եր-
կըրպագութիւն և մշտնջենաւոր փառաբանութիւն, պատիւ և զօրութիւն յա-
լիտեանս յաիտենից:

¹¹ Յովհ. Ա. 29:



ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ. ՀԱՅԱԳԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հանկարծահաս վիրահատությունից հետո, 1991 թ. հոկտեմբերի 8-ին, իր մահկանացուն կնքեց հայ թարգմանական գրականության անխոնջ հետազոտող, անվանի բնագրագետ Կիմ Մամբրեի Մուրադյանը. եզակի անհատականություն, որը իր ողջ կյանքը անմնացորդ նվիրաբերեց հայագիտությանը: Կ. Մուրադյանն այն հազվադեպ հետազոտողներից էր, որոնք հավատարիմ էին մնացել հայ դասական բանասիրության ավանդներին: Չդավաճանելով իր հանդարտ խառնվածքին, նա գերադասում էր բարեխղճորեն ու մեկիկ-մեկիկ ժողովել սովորաբար աննկատ մնացած նյութերը և անշտապ շարադրել իր փաստառատ աշխատությունները: Նրա հետազոտությունները, որոնք գերազանցապես վերաբերում են տիեզերական եկեղեցու Կապադովկիայի թեմի երեք մեծ հայրերի՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության ուսումնասիրությանը, նոր փուլ են սկզբնավորում հայ թարգմանական, ավելի ճիշտ՝ հայացված ու ազգայնացված գրականության, աստվածաբանական, դավանաբանական ու հայրաբանական հուշարձանների հետազոտության բնագավառում:

Տքնանքով է անցել գիտնականը իր կենաց ճանապարհը: Ծնվել է 1938 թ. դեկտեմբերի 14-ին, Վրաստանի հանրապետության Ախալքալաքի շրջանի ցրտաշունչ Ղադոլար գյուղում, տոհմիկ կարճեցիների ընտանիքում:

Պատանի Կիմը 1960 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որն էլ հաջողությամբ ավարտում է 1965 թ.: Համալսարանական ուսումնառության տարիներին նրա մեջ անշեշ սեր է արթնանում հայ միջնադարյան մատենագրության նկատմամբ՝ հիմնականում հայ միջնադարյան թարգմանական մատենագրության ուսումնասիրության բնագավառում:

Ասպիրանտուրայում ուսանելու տարիներին լեզվաբան Արուսյակ Մուրադյանի օգնությամբ հաղթահարելով բյուզանդական շրջանի հունարենի դժվարությունները, երիտասարդ գիտնականը պատրաստում է իր առաջին՝ «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցարեան» հայ մատենագրության մեջ» ուսումնասիրությունը: Այդ աշխատությունը նա 1970 թ. ներկայացնում է որպես թեկնածուական ավարտաճառ, իսկ 1976 թ. հրատարակում առանձին գրքով:

Դեռևս ասպիրանտական տարիներին, նպատակադրվելով նվիրվել երեք մեծ կապադովկացիների՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու, միջնադարում հայերեն թարգմանված երկերի ուսում-

նասիրությանն ու հրապարակմանը, նա նյութեր է հավաքում «Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ» թեմայով: Այդ աշխատանքները ավարտվեցին 1983 թ., երբ լույս տեսավ եռաստեղության երկրորդ ներկայացուցչին նվիրված մենագրությունը: Այդ հետազոտությունը ջերմ արձագանքի արժանացավ հանրապետական ու արտասահմանյան գիտական մամուլում, իսկ հեղինակին 1985 թ. շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Սակայն գիտական աստիճաններն ու կոչումները չէ, որ ձգում էին հայագետին: Նա հետևողականորեն ձգտում էր ավարտել իր մտահղացած եռագրությունը: Եվ ահա 1990 թ. վերջին Կիմ Մուրադյանը հրատարակության է հանձնում «Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ» մենագրությունը: Նշված երեք աշխատությունները ամփոփում են հայագիտության երկու հարյուրամյա նվաճումները «երեք մեծ կապադովկացիների»՝ մեր ազգային մատենագրության հետ ունեցած աղերսների ուսումնասիրության բնագավառում: Այդ ուսումնասիրություններում լուսաբանվում է վաղ քրիստոնեական Եկեղեցու աստվածաբանության և դավանաբանության մշակման գործում այնքան մեծ ներդրում ունեցող կապադովկացի հեղինակների կենսագրությունը, Հայոց Եկեղեցու գործիչների և հայ մատենագրության հետ ունեցած առնչությունները, ներկայացվում են միջնադարյան Հայաստանում նրանց երկերին տրված գնահատականները և հայ դպրության մեջ հիշյալ հեղինակների համաստեղության թողած մատենագրական ժառանգության ազդեցության ոլորտները: Տպավորիչն այն է, որ այդ ամենն իրականացվել է ահռելի թվով ձեռագիր մատյանների ուսումնասիրությամբ ու առկշումով, արժարժիկ խնդիրներին վերաբերող անգամ ամենաանձամբ փաստերի ու ամենափոքր հիշատակությունների արձանագրումով:

Հիրավի պատկառանք է հարուցում Կ. Մուրադյանի անուիպ ժառանգությունը: Հայագիտության մեջ առաջին անգամ նա կազմել էր Բարսեղ Կեսարացու «Պահոց գրքի» բնական բնագիրը, այսօր հայտնի ձեռագրերի հիման վրա պատրաստել էր Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» նոր հրատարակություն, ավարտել էր Ղևոնդի Պատմության գրչագրերի համեմատությունը, որը կարող էր հիմք դառնալ բնագրի ճշգրտված հրատարակության համար:

Հավերժական հիշատակ անվանի հայագետին, արժանավոր քաղաքացուն և պայծառ մտավորականին:

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ


ԿԻՄ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- 1 Բարսեղ Կեսարացին և հայերը (Կապադովկյան գործունեության շրջան) ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, թ. 9, էջ 49—61
- 2 Բարսեղ Կեսարացու «Վեցարեան», ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, թ. 1, 79—88
- 3 Ս. Բարսեղ Կեսարացի, «Էջմիածին», 1970, թ. 4, էջ 33—39
- 4 Բարսեղ Կեսարացու «Վեցարեանի» և Անանիա Շիրակացու որոշ երկերի տեքստաբանական առնչակցությունը, ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, թ. 3, էջ 99—107
- 5 Սրբագրություններ Բարսեղ Կեսարացու «Վեցարեան»-ում, «Բանբեր մատենադարանի», թ. 10, Երևան, 1971, էջ 43—54

- 6 Գրչագիր վկայություններ Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունների մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, թ. 10, էջ 49—57
- 7 «Վեցօրեայի» հայերեն թարգմանության ժամանակն ու բնագիրը», «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 3, էջ 161—173
- 8 Ս. Բարսեղ Կեսարացու ճանոթը, «Էջմիածին», 1973, թ. 8, էջ 20—25
- 9 Ընդհանուր հատվածներ ու սրբագրություններ Կեսարացու և Օիրակացու գործերում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, թ. 1, էջ 55—72
- 10 Կեսարացու «Վեցօրեան» Օիրակացու տիեզերական աշխատությունների աղբյուր, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, թ. 3, էջ 95—114
- 11 Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» նոր սրբագրություններ (նաո՞ր), «Հանդես Ամսօրեայ», 1976, թ. 1—12, էջ 577—590
- 12 Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, 272 էջ
գրախ. Հակոբյան Վ. Ա., ՊԲՀ, 1977, թ. 1, էջ 251—254
Արգարյան Գ
- 13 Три гомилии Василия Кесарийского в древнеармянском переводе, «Кавказ и Византия», вып. I, Ереван, 1979, стр. 200—230
- 14 Древнеармянский перевод «Эпитафии» Григория Назианзина, «Кавказ и Византия», вып. 2, Ереван, 1980, стр. 155—217
- 15 Древнеармянские переводы гомилий Василия Кесарийского, «Кавказ и Византия», вып. 1982, стр. 180—215
- 16 Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, 284 էջ
գրախ. Անթարյան Փ. Փ., ՊԲՀ, 1984, թ. 1, էջ 205—207
G. Uluhogian, Ինգմալեյ, 1984, թ. 3—4, էջ 347—350
- 17 Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցարեայ արարչութեան (աշխատասիրության) Կ. Մ. Մուրադյանի, Երևան, 1984, 380 էջ
գրախ. Սարգսյան Ա. Բ., ՊԲՀ, 1986, թ. 2, էջ 225—227
- 18 Василий Кесарийский и его «Шестоднев» в древнеармянской литературе. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук, Ереван, 1970, 26 с.
- 19 Григорий Назианзин в древнеармянской литературе. Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук, Ереван, 1986
- 20 Գրիգոր Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ճառի հայերեն թարգմանությունը և Մովսես Խորենացին, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, թ. 2, էջ 139—149
- 21 Ստեփանոս Այունեցու և Ստեփանոս Ասողիկի մի ընդհանուր սկզբնաղբյուրի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, թ. 1, էջ 132—140
- 22 Բարսեղ Կեսարացու երեք թուրը, «Էջմիածին», 1988, թ. ԺԱ—ԺԲ, էջ 104—118
- 23 Հովհանն Օձնեցու մեկ սկզբնաղբյուրի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, թ. 3, էջ 85—88
- 24 Գրիգոր Նյուսացու «Երգ երգոցի մեկնության» հայերեն թարգմանությունը և Վարդան Արևելցին, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, թ. 3, էջ 118—126
- 25 Սկզբնաղբյուրին դիմելու Խորենացու ինքնատիպության շուրջ, «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը» միջազգային գիտաժողովի դրույթներ, Երևան, 1991, էջ 59—60
- 26 Գրիգոր Նյուսացու «Ի յիշատակի սրբոյն Թեոդորոսի...» ճառի հայերեն թարգմանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1991, թ. 2, էջ 21—28
- 27 Եղիշեի մի սկզբնաղբյուրի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թ. 1, էջ 58—61
- 28 Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թ. 3, էջ 101—111

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Բարսեղ Կեսարացի, Պաճոց գիրք (աշխատասիրության) Կ. Մ. Մուրադյանի
Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ
Եվդիկ Կողբացի, Եղծ աղանդոց (աշխատասիրության) Կ. Մ. Մուրադյանի



Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՅՈՒ «ՅԱՂԱԳՍ ԱՂՔԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ» ԾԱՌԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Նազիանզացու «Յաղագս աղքատասիրության» ճառի հայերեն թարգմանությունը իբրև թարգմանական հուշարձան ինքնին կարևոր լինելուց բացի, այն Էական նշանակություն ունի հայոց ինքնուրույն մատենագրության այլևայլ խնդիրների քննության առումով¹։ Պարզվում է, որ նշված ճառը հայերեն թարգմանությամբ գիտեն և նրանից՝ օգտվում են Հովհան Մանդակունի², Գրիգոր Նարեկացի³, Ներսես Շնորհալի⁴ և ուրիշները։ Գր. Նազիանզացու ճառի հայկական միջավայրում ունեցած տևական կենսագործունեության մասին են վկայում նաև պահպանված հայերեն մեկնություններն ու լուծմունքները, որոնք միաժամանակ միջնադարյան գնահատության ինքնատիպ ամուշներ են⁵։

¹ Մույն հուշարձանի թարգմանության առանձնահատկություններից... ժամանակին ու բնույթին, բառազանգի ինքնատիպությանն ու հայոց միջնադարյան գրականության հետ ունեցած առնչակցությանն անդրադառնալու ենք առանձին։

² Տե՛ս ձեռ. № 4716, էջ 112ա—116ա, հմմտ. Տեսոն Յովհաննու Մանդակունու հայոց հայրապետի ճառք, ի Վենետիկ, 1860, էջ 47—56։

³ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի (տե՛ս Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնը, ի Վենետիկ, 1840, էջ 271—367)։

⁴ Տե՛ս ձեռ. № 579, էջ 48ա, հմմտ. Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալու, Յերուսաղէմ, 1871, էջ 261։

⁵ Ձեռ. № 59, էջ 69ա—71ա, հմմտ. ձեռ. № 1480, էջ 158ա—159ա։

«Յաղագս աղքատասիրութեան» ճառի հայերեն թարգմանությունը պահպանվել է տասնչորս ընդօրինակությամբ, տասը գրչագիր պահվում է Երևանի Մատենադարանում: Սույն հրատարակության հիմքում ընկած են Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ գրչագրերը⁶:

1 Ձեռ. № 2600 (Գր. Աստուածաբան, ճառք, ԺԲ դ., 1677 թ., էջ 181բ—220բ)—Ա

2 № 946 (Գր. Աստուածաբան, ճառք, XII դ., էջ 225ա—278ա)—Բ

3 № 1500 (Ճառընտիր, 1283 թ., էջ 752ա—758ա)—Գ

4 № 2601 (Ժողովածու, XIII—XIV դդ., էջ 69բ—73բ)—Դ

5 № 993 (Ճառընտիր, 1456 թ., էջ 330բ—332բ)—Ե

6 № 8215 (Ժողովածու, 1734 թ., էջ 82բ—90բ)—Զ

7 № 7943 (Գր. Աստուածաբան, ճառք, 1787 թ., էջ 97բ—117բ)—Է

8 № 9593 (Գր. Աստուածաբան, ճառք, XIX դ., էջ 172—207)—Ը

9 № 7313 (Ճառընտիր, 1835 թ., էջ 77բ—88ա)⁷—Թ

Հրատարակվող բնագիրը հիմնականում ներկայացնում է հնագույն ամբողջական գրչագրի (ձեռ. № 2600—Ա) պահպանված վիճակը: Ասում ենք հիմնականում, որովհետև, ինչպես ցույց են տալիս տարբերությունները, քիչ չեն մաս մյուս գրչագրերով պայմանավորված միջամտություններն ու անհրաժեշտ փոփոխությունները: Բնագրի համեմատության համար հիմք ենք ընդունել «PG» շարքի մեզանում եղած միակ հրատարակությունը⁸:

A181v

// ՅԱՂԱԳՍ ԱՂՔԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

5

10

A182r

Ա Արք եղբարք եւ աղքատակիցք, քանզի աղքատք ամենեւեան եւ աստուածային շնորհին կարատեալք, թէպէտեւ այլ քան զայլ յառաջադէմ ունել, թոյի փորքումք չափովք չափեալք՝ ընկալալք յաղագս աղքատասիրութեան զբանս, մի՛ աղքատաբար, այլ առատապէս, զի զարքայութիւն երկնից ճոխանայցէք, աղաթակից լերութ եւ մեզ առատաբար զայս ձեզ մատակարարել, եւ կերակրել քանիս զձեր անձինս, եւ բոդել քաղցելոցդ զհոգեւոր հացս: Եթէ լերկնուտ կերակուրն անձրեւիցի՝ որպէս Մովսէս առաջինն այն եւ զհաց հրեշտակաց շնորհեալք¹, եւ եթէ հացիւք սակաւութ յանապատի կերակրեալս մինչեւ յա//գեցումն² եւ քերս՝ որպէս Յիսուս լետոյ ճշմարիտ հացն եւ ճշմարիտ կենացն պատճառ: Արդ՝ ե ոչ յոյժ դիրին զառաքինութեանցն զյաղթողն գտա-

⁶ «Մշո ճառընտիրում» պահպանված հատվածական ընդօրինակությունը (էջ 595—602) գրչագրի ժամանակավոր անմատչելիության պատճառով համեմատությունից դուրս է մնացել:

⁷ Չորս գրչագիր պահվում են արտասահմանյան հավաքածուներում, ընդ որում՝ երկու ձեռագիր Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում (ձեռ. № 217, 1848—49 թթ., էջ 256ա—265ա, № 228, 1847 թ., էջ 122բ—126բ), երկու գրչագիր էլ Երուսաղեմի հայոց սուրբ Հակոբյանց վանքում (ձեռ. № 1268, 1167 թ., էջ 365—449, № 2318 XVII—XVIII դդ., էջ 176—194):

⁸ St'u Migne, Patrologiae cursus completus, Series graeca t. 35, p. 857—909.

¹ Հմմտ. Սաղմ. ՀԷ, 25:

² Հմմտ. Մատթ., ԺԴ, 15:

նել եւ նմա տալ գերիցութիւնն, եւ զյաղթանակն որպէս, եւ ոչ ի մարգս բազմածաղիկս, եւ յանուշահոտս զծաղկացն գեղեցկագոյնն, եւ զանուշահոտագոյնն: Այլ երբեմն այլոյ զհոտոտելիսն, զտեսանելիսն առ ինքն ձգելով եւ նախ քան զհատանելն հաւանեցուցանելով եւ, զոր ասեմս, այսպիսի ինչ է:

5

Բ Բարութ է հաւատ, յոյս, սէր³ եւ վկայ⁴ հաւատոյն Աքրահամ, արդարացեալն հաւատովն եւ յուսոյն⁵, Էնովս, որ առաջին յուսացաւ կոչել զանուն Տեառն⁶ եւ ամենայն արդարքն, որք յաղագս յուսոյն չարչարեցան: Եւ սիրոյ, աստուածայինն առաքեալ, համարձակեալ ինչ եւ ընդդէմ // ինքեան յաղագս Իսրայէլի, եւ աստուածայինքն սէր կոչեցեալ⁷: Բարութ է աստարասիրութիւն, եւ վկայ յարդարսն, Ղովտ Սողոմացին, եւ ոչ սողոմացի արինական, եւ ի մեղաւորս, Հոաւք բոզ, եւ ոչ բոզ յաժարութեամբն՝ յաղագս աստարասիրութեանն գովեալ եւ ապրեալ: Բարութ է եղբայրասիրութիւնն, եւ վկայ Յիսուս, որ ոչ եղբայր միայն այլ եւ չարչարանս յաղագս մեր կրեալ: Բարութ է մարդասիրութիւն, եւ վկայ նոյն ինքն Յիսուս, որ ոչ արար միայն զմարդն ի գործս բարիս⁸, եւ զկերպարանն ընդ հողոյս լծակցեաց առաջնորդ գեղեցկացն, եւ վերնայնոյն առիթ, այլ եւ լեալ յաղագս մեր մարդ: Բարութ է երկայնմտութիւն, եւ վկայ ինքն Յիսուս, որ ոչ զլեզուներս երամակիցն միայն հրաժարեցոյց զհակառակսն ի վերայ // յարուցեալս եւ զբռնացեալսն, եւ ոչ Պետրոսի յատուկ սաստեաց, որ Էսո գտարն⁹, այլ եւ զունկնն բժշկեաց վիրավորեցելոյն¹⁰: Զսոյն եւ Ստեփանոս՝ յետոյ Քրիստոսի աշակերտն, աղաթեաց: Բարութ է հեգութիւն, եւ վկայեցեն Մովսէս¹¹ եւ Դաւիթ¹², ի յայսմիկ նախքան զայլսն վկայեալք, եւ սոցա վարդապետն, որ ոչ հակառակէր, եւ ոչ աղաղակէր, եւ ոչ ի հրապարակսն զձայն արձակէր¹³, եւ ոչ լծակով լինէր առ տարողսն:

15

20

25

30

Գ Բարութ է նախանձ, եւ վկայէ Փենէս, զՄադիանացին¹⁴ հանդերձ Իսրայէլացւոյն խոցելով, զի ի բաց բարձցէ զթշնամանքս որդոցն Իսրայէլի, եւ որ անուանեցան յաժարամտութեամբն յետ նորա ասելով՝ նախանձելով նախանձեցալ զնախանձ Տեառն¹⁵ եւ նախանձեցուցանեմ զձեզ աստուծոյ նախանձուն¹⁶: Եւ ոչ ասէին միայն զայսոսիկ, այլ եւ կրէին: // Բարութ է կրանաւո-

A133

³ Հմմտ. Կորնթ., I, ԺԳ, 13:

⁴ Թարգմանությունից դուրս է մնացել «Այն երեքը» (էջ 860) հարակից կապակցությունը:

⁵ Հմմտ. Ծնունդք, ԺԵ, 6:

⁶ Հմմտ. Ծնունդք, Դ, 26:

⁷ Հմմտ. Յովհ., I, Դ, 8:

⁸ Հմմտ. Եփես., Բ, 10:

⁹ Հմմտ. Ղուկ., ԻԲ, 50:

¹⁰ Հմմտ. Ղուկ. ԻԲ, 51:

¹¹ Հմմտ. Թիմ., ԺԲ, 3:

¹² Հմմտ. Սաղմ., ԾԱ, 1:

¹³ Հմմտ. Եսայի, ԽԲ, 2, հմմտ. ԾԳ, 7:

¹⁴ Հմմտ. Թիմ., ԻԵ, 7:

¹⁵ Հմմտ. Թագաւ., III, ԺԹ, 14:

¹⁶ Հմմտ. Կորնթ., II, ԺԱ, 2:

- րութիւն, եւ հաւանեցուցէ զքեզ Պաղոս, որ տակաին եւս զինքն դաստիարակէր, եւ զարհուրեալ էր յաղագս Իսրայէլի, որ լինեալսն վստահանային եւ թուանային մարմնովն: Եւ Յիսուս ինքն, որ պահէրն եւ փորձեալ լինէր, եւ յաղթէր փորձողին: Բարոք աղաթք եւ տքնութիւն, եւ հաւանեցուցէ զքեզ Աստուած տքնեալ նախքան զչարչարանսն եւ աղաթեալ: Բարոք սրբութիւն եւ կուսութիւն, եւ հաւանեցուցէ զքեզ Պաղոս յաղագս այսոցիկ արիւնադրելովն, եւ առիթ լինելով արդարապէս ամուսնութեան, եւ անամուսնութեան: Եւ Յիսուս ինքն ի Կուսէ ծնեալ, զի եւ զծնունդն պատուեցէ, եւ նախապատուեցի կուսութիւնն: Բարոք ժողովարութիւն, եւ հաւանեցուցէ զքեզ Դաիթ, յորժամ ժողովալեաց ի Բեթղէմ ջրոյն¹⁷, այլ նոյի//րեաց միայն զջորմն՝ ոչ ներելով զիր լնու զախտն այլոց արեամբն:
- Դ Բարոք ամայութիւն եւ լոյսութիւն, եւ վարդապետ է ինձ Կարմեղացին Հէղիու, եւ անապատն Յովհաննու¹⁸, Յիսուսի լեռնըն, յոր բազում անգամ ի վեր ելեալ երեւի եւ ըստ հանդարտութեանն առանձինն լինելով¹⁹: Բարոք եւ ինքն արհամարհութիւնն, եւ ուսուցանէ զիս Հէղիաս հանգուցեալ առ այրոյն, Յովաննէս ստեղծող ողտոք ծածկեալ²⁰ Պետրոս սակաւ լումայիք գնովք ոլոռանց կերակրեալ: Բարոք խոնարհամտութիւն, եւ յովք այսմիկ, եւ բազում ուստեք արիւնակք, եւ նախքան զայլսն, ամենեւեան փրկիչն եւ տէր, որ ոչ նուաստացոյց միայն զինքն մինչեւ ի ծառայի կերպարանսս, եւ ոչ զերեսս եղ ընդ ամաթով // եւ ընդ թթովքն²¹, եւ ընդ անարէնս համարեցաւ, որ զաշխարհս մաքրէր մեղաց, այլ եւ զաշակերտացն լուաց զոսս²² ծառայական ձեռով: Բարոք անստացումութիւն եւ ընչիցն արհամարհանք, եւ վկայէ Զաքէոս, եւ Քրիստոս ինքն, յորոց մին, ի մտանէն Քրիստոսի, սակաւ ինչ նուագ զամենայն պողաքերեաց, եւ միսն զընչեղին զկատարելութիւն յայսմիկ սահմանեաց: Եւ համատաւտագոյն եւս յաղագս այսոցիկ ասել. բարոք տեսութիւն, բարոք գործք. մին աստի յարուցանելով ի սրբութիւն սրբութեանցն զնացուցանէ, եւ զմիտս մեր առ ազգակիցն ի վեր տանի, եւ միսն, զՔրիստոս ընդունելով, բժշկէ, եւ գործովք զսիրելութիւնն յանդիման կացուցանէ:
- Ե Այսոցիկ իրաքանչիւր ուրոք մի է փրկութեանն ճանապարհ, // եւ առ ոմն ի հնձանացն ամենայն իրաք բերէ ի յաւիտենականացն եւ երանելեաց: Եւ զի որպէս զանազանք են վարուցն յաւարտութիւնք, նոյնպէս եւ արթեականք բազումք առ Աստուծոյ,²³ ըստ արժանաւորութեանն իրաքանչիւր ոմեք բաժանին եւ որոշին²³: Ոմն զայս ողղեցէ ստաքիւնութիւն, եւ ոմն զայն, եւ միսն զյոյովս, եւ այլ ոք զամենեւեան, եւ եթէ իցէ կա-

¹⁷ Հմմտ. Թագաւ., II, ԻԳ, 15:

¹⁸ Հմմտ. Դուկ., Ա, 80:

¹⁹ Հմմտ. Մատթ., ԺԴ, 23:

²⁰ Հմմտ. Մատթ., Գ, 4:

²¹ Հմմտ. Եսայի, Ծ, 6:

²² Հմմտ. Յովհ., ԺԳ, 5:

²³ Հմմտ. Յովհ., ԸԴ, 2:

րողութիւն, միայն ճանապարհորդեցէ, եւ փափագեցէ յառաջադիմութեանն, եւ ըստ ոտինն զհետ երթիցէ գեղեցկապէս առաջնորդի, եւ ողջի, որ մեղ ճանապարհան, լընդարձակութիւնն տանի անդ երանութեանն: Ապա եթէ պարտ իցէ Պաղոսի եւ
 5 միին Քրիստոսի հաւանելով, առաջին պատուիրանացն եւ մեծ, իբրեւ գլոխ արիւնաց²⁴ եւ մարգարեից զւերն իմանալ, զտրա
 A185v զարատրագոյնն գտանեմք // զաղքատասիրութիւնն, եւ առ ազգակիցս զբարեգթութիւնն եւ զախտակցութիւնն: Եւ վասն զի ոչ միով իւր յիցս, որպէս ողորմութեամբ, Աստուած սպասատրի,
 10 զի եւ ոչ ընտանեգոյն այլ ինչ քան զայս է աստուծոյ, որոյ ողորմութիւն եւ ճշմարտութիւն զհան առաջի²⁵, եւ որում երգելի է գողորմութիւն իրաւանց²⁶: Եւ ոչ այլով իւր առաւել, քան մարդասիրութեամբ զմարդասիրութիւնն տայ յարդարոյն անդրէն չափեալ, եւ եղեալ ի լծակս կշոռց գողորմութիւնն²⁷:

- 15 Զ Արդ՝ ամենայն աղքատաց բանալի է զգութսն եւ յորոց դէպ իցէ պատճառաց, զի չարչարիցին ըստ այնմ, եթէ խնդալ ընդ խնդացեալսն, եւ լալ ընդ լացեալսն²⁸, հրամանի պատուիրանին: Եւ ի ներքս բերել մարդկան եղելոց զմարդիկ զհանգանակ քաղցրութեանն, եթէ յաղագս այրութեւ//անն պէտս ունիցին
 A186r 20 այսմիկ, եթէ վասն որբութեան, եւ եթէ յաղագս խակութեան տերանցն, եթէ իշխանացն յանդգնութեան, եթէ հարկահանացն անմարդութեան, եթէ առազակացն պիղծ սպանութեանցն, եթէ գողոցն անյագութեան, եթէ զրպարտութեանն յարքունիս, եթէ անւաբեկութեանն: Վասն զի ամենեցուն նմանապէս ողորմել, որք
 25 եւ նոյնպէս հայիցին ի մեր ձեռս, որպէս եւ մեք՝ յԱստուծոյ, յաղագս որոց արդէս մարդեցոյք: Քան զայսոսիկ զամենեւեան, որք ոչ ըստ արժանատրութեանն չարչարին, սովորութեամբ թշուառանալն, որք արդարեւ են ողորմելիք: Բայց առաւելապէս
 30 որք ի մեծագունէ յախտէն են ապականեալք եւ մինչեւ ի մարմինս, եւ յուկերսն, եւ յողեղն, իբրեւ ի հակառակ իմն պատուհասէ անցեալ//լք, եւ մատնեալք ի չարեացն, եւ յանհաւատալի,
 A186v եւ ի նուաստ մարմնոյս յայսմանէ: Եւ կամ թէ որպէս լծակցեցայ՝ ոչ գիտեմ, եւ զհարդ կերպարան Աստուծոյ եմ, եւ ընդ կառոյս զանկեալ եմ, եւ բարեկրեալ պատերազմիմ, եւ վտանգիմ պատերազմեալ, գոր իբրեւ զժառայակից սիրեմ, եւ որպէս ի թշնամւոյ ի բաց դառնամ: Յորմէ իբրեւ ի կապանաց փախչիմ եւ իբրեւ ժառանգակցէ ամաչեմ, հաշտել հակառակեմ, եւ ոչ ունիմ որով գործակցաւ առ ի գեղեցկագոյնսն վարիցիմ, գիտելով յոր ինչ եղեն, եւ եթէ պարտ եւ արժան է ինձ առ Աստուած ի վեր ելանել
 40 ի ձեռն գործոցն:

Է Խնայեմ իբր ի գործակից եւ ոչ ունիմ զհարդ փախեալց ի վերայ յառնելոյն, եւ կամ որպէս մի գուցէ յԱստուծոյ անկայց ծանրացեալ կապանաւքս ի վայր ձգողաւք, եւ ի ստորինսս քար-

²⁴ Հմմտ. Մատթ., ԻԲ, 36:

²⁵ Հմմտ. Սաղմ., ԶԸ, 15:

²⁶ Հմմտ. Ովսէէ, ԺԲ, 6:

²⁷ Հմմտ. Եսայի, ԻԸ, 17:

²⁸ Հմմտ. Հովմ., ԺԲ, 15:

- A187r շողաք ի յատակս: Թշնա//մի է բարեհաշտ, եւ բարեկամ՝ դրժող: Ով լծակցութեանս եւ ատարութեանս: Յորմէ երկնչիմն՝ շուրջ փարիմ եւ զոր սիրեմն՝ զարհուրիմ: Նախքան զպատերազմելն հաշտիմ եւ յառաջ, քան զխաղաղանալն, ի բաց կամ: Զի՞նչ է յիս իմաստութիւնս, եւ կամ զի՞նչ մեծ խորհուրդս այս: Զի՞նչ կամի կերպարան զմեզ լեալ Աստուծոյ եւ ի վերուստ հոսեալս, զի մի՛ յաղագս պատուոյն ամբարտաւանեալք, եւ վերամբարձեալք արհամարհիցենք զարարիչն, մարմնոյս պատերազմաւ եւ կոռոյ առ նոյն ինքն հայել, եւ զլծակցեալ զտկարութիւնն դաստիարակութիւնն պատուոյն: Զի՞ տեսանիցենք զմեզ ինքեանս մեծս լեալս երկրաւորս եւ երկնայինս, ժամանակեայս եւ անմահս, ժառանգաւորս լուսոյ եւ հրոյ եւ կամ եթէ խաւարի, յոր կողմ երբէք եւ հակա//միտիցենք: Այսպիսի է խառնուածս եւ յաղագս այսոցիկ, որպէս ինձ երեւի, զի յորժամ ամբարտաւանիցենք վասն պատկերին, յաղագս հողոյս զիջանիցիմք: Զայսոսիկ, որ անորժիցեն, իմաստասիրեցեղ, եւ մեք ընդ նմա իմաստասիրեցուք ի դէպ ժամանակի:
- Ը Բայց այժմ, որ ինձ ասել բանս յարձակեցաւ, յաղագս մերոց վտանգեցելոց մարմնոցս եւ իմոյ տկարութեանս յատարացն չարչարանս, բժշկելի է, եղբարք, զազգակիցս եւ զծառայակիցս: Զի թեպէտ իբրեւ զթշնամոյ ամբաստան եղեց յաղագս ախտին, այլ իբրեւ զբարեկամ խնամեմ վասն կապակցութեանն: Եւ բժշկելի է եւ ոչ նուազ զընկերացն, քան եթէ իւրաքանչիւր ունէր զիւրն, յառողջիցն եւ ի նմին ախտէ ծախեցելոցն: Վասն զի ամենեքեան մի ենք ի Տէր, եթէ ճոխ եւ եթէ աղքատ, եթէ ծառայ, եւ եթէ ա//զատ, եթէ առողջ, եւ եթէ չարաչար ունիցի զմարմինն: Եւ մի գլուխ ամենեցուն, յորմէ ամենայն, Քրիստոս: Եւ որպէս են իրերաց անդամք, նոյնպէս եւ իւրաքանչիւր ոք իւրաքանչիւրոք, եւ ամենեցուն ամենեքեան²⁹: Ապա ուրեմն ոչ է անտես առնելի եւ ոչ անխնամելի զանկեալն ի հասարակաց տկարութիւն, եւ ոչ սիրելի առաւել, զի մեզ բարոք ունի մարմինս, եւ կամ սգալի, զի թշուառապէս եղբարցն: Եւ վարկանելի է մի զգուշութիւն լեալ մերոցս մարմնոց եւ հոգւոց, ի նոսա մարդասիրութիւնն: Եւ զիտեմք այսպէս:
- Թ Այլոց մի միայն ողորմելի է տարակուսանքն, զոր թերեւս արդեք կամ ցաւ, կամ ժամանակ, կամ սիրելի, կամ ազգակից, կամ ժամանակի փոփոխումն լուծանիցէ: Իսկ որոց այս ոչինչ նուազ եւ կամ թէ առաւել եւս, որք անցաւել եւ ազնել ինքեանց // ի կարեւորսն հաւդերձ մարմնովքն զրկեցան, եւ մեծագոյնս միշտ առաւել, քան զնոյն ինքն տկարութեանն երկիւղն կամ եթէ ինչ առողջութեանն յոյսն, որպէս զի փոքր ինչ ազնիցի ի յուսոյն, որ միայն թշուառացելոցն ի դէղ: Եւ առաւել աղքատութեամբն, եւ ցաւն եւս երկիրոր չար, եւ քան զչարսն փախչելի եւս, եւ ծանրագոյն, եւ ի նզովս յովից առ ձեռն պատրաստագոյն: Եւ երրորդ՝ զի ոչ մերձանալիս զնոսա լեալս, եւ ոչ տեսանելիս յովից, այլ փախչելիս, եւ զարշելիս, եւ որպէս ի բաց

²⁹ Հմմտ. Հովթմ. ԹԲ, 5:

դառնալիս, որ եւ քան զախտսն անցաւ է ծանրագոյն յորժամ զգայցեն, յաղագս թշուառութեանն եւ զատելութիւնն: Արդ՝ եւ եւ ոչ ստանց արտասուաց բերեմ զայնպիսեացն զախտն, եւ յի-
 A189r 5 շատակաս վտանգիմ: Կրեցէք եւ դուք զսոյն, զի արտասուաք // յարտասուացն փախչիցիմք եւ ախտացելովք՝ մերձաւորաց: Գի-
 տեմ զի, որք մի անգամ քրիստոսասէրք եւ աղքատասէրք էք, եւ զԱստուծոյ եւ առ ի յԱստուծոյ զողորմելն ընդունիք, եւ վկայք դուք ախտին:

Ժ Առաջիկայ աչաց մերոց տեսութիւն դժնդակ եւ ողորմելի,
 10 եւ ամենեցուն, բայց ի գիտողացն, անհաւատալի, մարդիկ մե-
 ռեալք եւ կենդանիք, ծայրատեալք յոլովիք մարմնոյն մասամբք,
 ոչ ոյք ոմանք էին, եւ ոչ ուստի իցեն սող ինչ անազ ծանու-
 ցեալք, մանավանդ երբեմն մարդկան թշուառութեան նշխարք,
 15 զհարս եւ զմարս, եւ զեղբարս, եւ զտեղիս, իրեանց ծանաթու-
 թիւն ասելով: Եւ այսր անուան, եւ այս անուն է իմ մայր, եւ այս
 է իմ անուն, եւ դու երբեմն իմ բարեկամ եւ ծանաթ: Եւ զայս
 A189v գործեն, վասն զի ոչ ոմին առաջին պատկերաւն ծանաթանալ:
 20 Մարդիկ շուրջ հաշ//մեալք եւ ի բաց բարձեալք ինչք, ազգակ-
 ցութիւն, բարեկամք, նոյն ինքեանք մարմինքն: Մարդիկ, որք
 յամենեցունց ողորմին ինքեանք եւ ատելիք են մանապէս, ոչ
 ոմին, զոր արդէք մանաւանդ ողբայցեն, զոր ոչն եւս ոմիցին
 ի մարմնոյն, եթէ որք կայցեն մնայցենն, զորս զառաջագոյն
 վատնեաց ախտն, եթէ որք ախտին կայցեն: Զի ոմանք ծախե-
 ցան դժընդակապէս, եւ կէսք պահին եւս դժընդակագոյնք: Ո-
 25 մանք անցեալ գնացին նախ քան զգերեզմանն եւ զայլսն ոչ ոք
 է, որ տայցէ գերեզմանին: Վասն զի եւ որ յոյժ քաղցր եւ աղ-
 քատասէր է՝ սո անոս լինի անվշտանալի: Եւ յայսմիկ միայն
 մոռանամք մարմինք լեալք, եւ զմարմին տկարութեան զգեցեալք,
 եւ այնքան կարատուանամք թշկել զազգակիցն, մինչ զի եւ մե-
 30 րոց մարմնոցս զ//գուշութիւն, զի անցանէ փախտստն կարծել: Եւ
 ի մեռեալ ոք վաղագոյն անդրէն մերձեցաւ, եւ նոյն թերեւս նե-
 խեալ, եւ կենդանեացն վշտաց ոչ համբերեաց նեխեալ մարմնոցն,
 եւ դալոյիք լցեալ ներեաց: Բայց ի անցանէ յոյժ զարութեամբ
 փախչիմք (ո՛վ անմարդութեանն), զի եւ զնոյն մեք ձգեմք,
 35 զաղ, սակաւ ինչ անազ դժուարելով անքա:

ԺԱ Ո՞ քան զհայր հարազատագոյն, եւ կամ՝ ո՞ քան զմայր
 վշտակցագոյն: Այլ փակեցաւ ի անցանէ բնութիւնն, եւ հայրն
 զմանուկ զիր, զոր ծնաւ, զոր սնոյց, զոր ակն ունել ի կենացս
 40 միայն վարկաւ, յաղագս որոյ բազումս Աստուծոյ եւ յոլով ան-
 գամ աղաթեաց, այնքան ողբայ, այլ սակայն ի բաց հալածէ
 զմին կամաւք եւ զմիւսն՝ բռնադատեալ: Եւ մայրն յիշէ զերկունսն,
 եւ աղիքն գալարին, եւ կոչէ // յոյժ ողորմելով, եւ առաջի եղեալ,
 ողբայ իբրեւ զմեռեալ զկենդանին: Որդեակ, ասելով թշուառ-
 45 ական եւ թշուառացելոյ մարս, զոր յինէն բաժանեաց դառնապէս
 ախտոյ, որդեակ ողորմելի, որդեակ, զոր գահից եւ լերանց եւ
 անապատից սնուցի, ընդ զազանս բնակեցես, եւ ծածկոյթ քեզ
 վեմ, եւ ի մարդկանէ զքեզ տեսցեն միայն բարեպարիշտք, եւ
 զայնոսիկ զՅովբայ զողորմելի զբանսն բարբառի: Ընդէ՞ր ստեղ-

- ծար յորովայնի մարս եւ յարգանդէս արտաքս ելեր, եւ ոչ վաղ-
վաղակի կորէար³⁰, ընթացեալ ընդ ծննդեանն անդէն եւ մահն:
Ընդէ՞ր ոչ անցեալ զնացեր տարածամ նախքան զնաշակելոյ քեզ
5 ի չար կեանաց: Հի՞մ հանդիպեցան քեզ ծնունդք: Ընդէ՞ր եղեւ
քեզդ ի ելն զստիկն³¹, թշուառութեամբ կեալ հանդերձելումդ եւ
A191i զկեանս քան զմահ չարագոյնս: Զայսոսիկ ասէ եւ // արձակէ
աղբիւս արտասուաց, եւ գիրկս արկանել կամի թշուառականն,
բայց երկնչի ի յորդոյս մարմնոյ իբրեւ ի պատերազմողէ: Ամե-
նայն բազմութեանն հակառակ աղաղակք եւ հալածմունք, ոչ
10 ընդդէմ գրկողացն, այլ հակառակ թշուառացեղոցն լինին: Եւ ընդ
սպանողի եղեւ որ արդէք բնականից եւ շնացողին ետ ոչ ի յար-
կէն միայն, այլ եւ ի սեղանոյն, եւ կենացն հաղորդ զսեղանա-
կապուտն էառ, եւ որ յայտնէ ինչ նմա զչար դաշնատր եղեւ:
Բայց զայսպիսոյն զախտն, որպէս բամբասանաց, ոչ ինչ տրտ-
մեցուցանողի ի բաց դառնայ: Եւ ստաւել եւս ունի ախտին չա-
15 րութիւնն, եւ զանմարդութիւնն իբրեւ զգարշելի ինչ անպատուեմք:
ԺԲ Ի բաց հալածին ի քաղաքաց, վարին արտաքս ի տանց,
A191v ի հրապարա//կաց, ի ժողովոց, ի ճանապարհաց, ի տանից, ի
20 գինարբուաց, (ո ախտին) ի նմին ինքն ի ջրոյ: Եւ ոչ աղբերք
հոսին, նոցա հասարակաց առ այլ մարդիկ, ոչ գէտք հաւատա-
ցեալ լինին ոչ ինչք ձգեալք ի գարշութենէն: Եւ որ հրաշափա-
ռագոյնն է, իբրեւ զգարշելի սպանողս հալածեմք, եւ որպէս ո-
չինչ տրտմեցուցանողս դարձեալ առ մեզ ինքեանս դարձուցա-
25 նեմք, ո՛չ բնակութիւն բաշխեմք, ո՛չ հարկատր կերակուրս, ո՛չ
բժշկութիւնս վիրացն, ո՛չ ծածկոյթ զախտն՝ որքան ինչ կարողու-
թիւն իցէ զգեցուցանելով: Եւ վասն այնորիկ մոլորեալք են ի գի-
շերի եւ ի տուրնջեան, տարակուսեալք, եւ մերկք, եւ անյարկք,
զհիւանդութիւնն ցուցանեն, զառաջինն պատմելով, զստեղծիչն
30 բարբառին՝ վարելով այլոցն անդամովք փոխանակ պակասեցե-
լոցն, պաճուճողք անդամոցն կեղովք // զողորմութիւնն, հաց սա-
կաւ ինչ հայցելով, եւ կամ այլ ինչ կերակուր դուգնաքեալ, կամ
հանդերձ խարագն ազնականութիւն, ամաթոյն ի մխիթարութիւն
կեղոցն: Եւ մարդասէր այն է առ նոսա, որ ոչ առ ի պէտսն բա-
35 ւական եղեւ, այլ որ որ ոչ դառնապէս ի բաց յողարկեաց: Բա-
զումք ի նոցանէ ոչ ամաթոյն եւ ի տանացն փախչին, ի նոյն
ինքն հակառակն յայնոսիկ մղին յաղագս պիտոյիցն: Զայնոսիկ
ասեմ զամենաժողովսն եւ զաստուածայինսն, զորս մեք ի բժշ-
կութիւն անձանց գտաք, եւ կամ ըստ խորհրդեան իմիք ժողովիմք,
40 կամ ի վկայսն ճշմարտութեանն ժողովեալք, զի զորոց նահա-
տակութիւնն պատուեմք, նմանեցուք բարեպաշտութեանն: Եւ
ամաչեն ի մարդկանէ յաղագս թշուառութեանն, թէպէտեւ են
մարդիկ, եւ ախորժեն թերեւս արդէք ի լերինսն կամ // յանձաւս,
կամ յանտաւս, կամ ի վերջումն գիշերային խաւարան թաքու-
45 ցանել զինքեանս. համայն անկանին ի մէջ բեռն ողորմելի եւ ար-
տասուաց արժանի: Այսոքիկ թերեւս եւ ըստ բանի ինչ, զի մեզ

³⁰ Հմմտ. Յովբ, Գ, 11:³¹ Հմմտ. Յովբ, Գ, 12:

լինիցին տկարութեանս մերոյ յիշատակքն, եւ հաւանեցուցեն մինչ ի մերձակայիցս, որպէս տեսանէմք, իբրեւ ի կայունս հաստատիցիմք: Եւ անկանին ոմանք ցանկութեամբ ձայնի մարդկայնոյ, եւ կէսք առ ի տեսանել, եւ այլք զի դուգնաքեայ ինչ կեանացն հայթաթանս ի փափկացելոյն հաւաքիցեն, եւ ամենեքեան, զի դիրազոյնք լինիցին, զի իրեանց զողբան հրապարակագոյժ առնիցեն:

- ԺԳ. Ո՞ ոչ խորտակիցի նոցա ողբովքն, գորովումն փողակցութեան յարմարելով, ո՞ր լսելիք բերիցեն զլորն, ո՞ր տեսանէլիք տարցին գտեսութիւնն: Զի ոմանք // անկեալ կան առ իրեարս, չարաչար ախտին լծակցեալք, եւ այլ ոմն այլ ինչ զթշուառութեանն առ ի յողորմութիւն առաջի արկանէ, եւ եւն միմեանց յաւելումս ախտին, ողորմելիք հիւանդութեանն, անվշտակցութեամբ ողորմագոյնք: Եւս շուրջ կան գնոբաւք տեսողքն բազումք խառնեալք, ցառակիցք լեալք, այլ առ ժամանակեայ: Եւ նոքա թառալին առ ոռս մարդկանն՝ յարեաւ եւ ի փոշոյն: Է երբէք եւ ի սառնամանիս վայրագս, եւ յանձրեւս, եւ ի մրրիկս հողմոց թշուառացեալք, այնքան ոչ կոխան լեալք, ցորբան եւ մերձենալն ի նոսա գարշիմք: Ընդդէմ երգէ բահանայականաց ի ներքս նուագաց հայցումսն ողբումն, եւ խորհրդական ձայնից ողբք ողորմելիք հակառակ յառնեն: Բայց զի՞նչ պարտ եւ արժան է նոցա առաջի դնել զթշուառութիւնն մարդկան ժողովեցելոց: Թերեւս եւ ձեզ շարժեցից ողբումն, եթէ զամենայն խնամով ողբարն երգեցից, եւ շարժել զտանին զախտն: Արդ՝ ասեմ զայստիկ, վասն զի ոչ կարեմ երբէք հաւանեցուցանել զձեզ, որպէս է երբեմն, քան զհեշտութիւնն տրտմութիւնն պատուականագոյն, եւ տխրութիւն քան զտան, եւ քան զոչ բարոք ծաղր արտասար գովելի:

- ԺԴ. Այսպէս նոքա, եւ յովագոյն եւս քան զորս ասացից 30 հիքբագոյնք, որք ըստ Աստուծոյ մեր եղբարք են, թէպէտեւ ոչ ախորժէք, որք զնոյն ընդ մեզ ունին զբնութիւն, որք ի սմին կայտոյ ստեղծան, յորմէ գառաշինն եղեալք, ջղաւք եւ ոսկերաւք հանեալք նմանապէս մեզ, մորթ եւ միս զգեցեալք նոյնպէս իբրեւ զամենեւեան, որպէս ուրեմն ասէ աստուածայինն Յովք իմաստասիրելով յախտն, եւ արհամարհելք // զմեր զերեւելիսս: Մանաւանդ, եթէ պարտ է զմեծն ասել, որք ըստ կերպարանին եւ առին նմանապէս մեզ, եւ պահեն թերեւս առաւել քան զմեզ, թէպէտեւ մարմինքն ապականեցան, որք զնոյն զՔրիստոս եւ զգեցեալք ըստ ներքին մարդոյն, եւ զնոյն ըստ մեզ հաւատացան 40 զգրաւական հոգոյն, որք նոցին ընդ մէջ հաղորդին արինաց, բանից, կտակաց, ժողովոց, խորհրդոց, յուսոյ: Յաղագս որոց Քրիստոս նմանապէս մեռաւ, որ զամենայն աշխարհի զմեղս երարձ³², որք ժառանգակիցք են վերին կենացն, թէպէտեւ մեծաւնաւորութեամբ աստ վրիպեցին, որք ընդ Քրիստոսին թաղե-

³² Հմմտ. Յովն., Ա., 29:

ցան եւ ընդ նմա արեան³³, զի եթէ ակտակիցք եմ եւ փա-
ռաւորեացիս ընդ նմին³⁴:

A134v

5

ԺԵ Բայց զի՞նչ մեք, որք զմեծ եւ զնոր զանունն ժառան-
գեցաք, զկոչիլն ընդ // Քրիստոսի, սուրբ ազգ, թագաւորութիւն
քահանայութիւն, սեփականքս եւ ընտրեալք, նախանձաւորք
քարեաց գործոց եւ փրկութեանց³⁵, Քրիստոսի աշակերտք հե-
զոյն եւ մարդասիրի³⁶, եւ որ զհիւանդութիւնս մեր եքարձ, որ
խոնարհեցոյց զինքն մինչեւ ի մեր ստեղծուածս³⁷, որ յաղազս
մեր աղբատացան զմարմինս զայս եւ զերկրային խորանս զայս

10

սոնկով ցաւեցեալ եւ չարչարեալ յաղազս մեր, զի մեք ճոխաս-
ցուք աստուածութեամբն: Արդ՝ զի՞նչ մեք, որք զայնքանեաց
զբարեգթութեանց եւ զբարեկրութեանց սուաք զարիմակս: Զի՞նչ
մտաւ անձուք յաղազս նոցա եւ զի՞նչ արացուք՝ անտե՛ս առ-
նիցեմք եւ զանցանիցե՛մք: Թողուցուք իբրեւ զմեռեալս, իբրեւ

15

A195r

զգարշնի՛ս, իբրեւ զսողոնց եւ կամ զգազանաց զչարագո՛յնսն:
Մի՛ երբէք, եղբար՛ք, զի եւ ոչ // առ ի մեզ նոյնպէս, զՔրիս-
տոսի զոչխարսն, զբարոյ հովուին³⁸, որ զմոլորեալն դարձոյց,
եւ զկորուսեալն խնդրեաց եւ զտկարացեալն զարացոյց³⁹: Եւ որ
առ մարդկային բնութիւնս, զվշտակցութիւնն արիւնադրեաց, ի
հաւասար տկարութենէն ուսեալ զբարեպաշտութիւնն եւ զմար-
դասիրութիւնն:

20

ԺԶ Այլ ոմանք արտաքոյ յարկաց թշուառանայցեն, իսկ մեք
բնակիցեմք ի տունս պայծառ, քարամբք ամենապատկաւք ծաղ-
կեալս, ոսկով եւ արծաթով փայլեալս, եւ մանր յախճապակաք,
եղեալս, եւ ազգի ազգի նկարագրութեամբք աչաց խաբէբայ պատ-
րանաւքն: Եւ յոմանս քնակիցեմք, եւ զկէսս շինիցեմք, ո՞ւմ արդէք:

25

A195v

30

Ոչ ժառանգաւորաց մերոց, այլ աստարաց եւ այոց, եւ նոցին
թերեւս ոչ սրրողաց զմեզ, այլ թշնամեացն եւ մախողացն, որ է
վերջին չարեացն: Եւ նոքա սարսուայցեն խարագն // եւ պատա-
ռոտուն գրգիւկաւքն, մանաւանդ եթէ ոչ այնոքիւք փարթամանայ-
ցեն: Իսկ մեք փափկացուցանիցեմք զմեզ ինքեանս կակուղ
զգեստուք եւ շուրջ փաղփեցելովք, եւ ի բեհեզոյ, եւ ի կերպա-
սուց առային անկուածովք, եւ ոմամբք, զի ամաչիցեմք սուա-
ւել, քան թէ վայելչանայցեմք (վասն զի այսպէս եւ կոչեմ զա-

35

մենայն զաւելորդն եւ զվայրապարն), եւ այլքն ի ներքս մեզ
ամբարեալ կայցեն հոգք անպիտանք եւ անմիտք, ցեցոյն ծախք
եւ ժամանակի, որ զամենայն վատնէ: Եւ նոքա եւ ոչ հարկաւոր
կերակրովքն ճոխանան (ո՛վ իմոյ փափկութեանս եւ անդ թշուա-
ռութեանն), այլ անկեալ կան սուաչի մերոյ դրաց՝ լուծեալք եւ
ընդարիւն եկեալք եւ ոչ առ ի հալցելն պատճառս մարմնոյ ու-
նելով, պակասեալք ի ձայնէն յաղազս ողբալոյն, ձեռացն յա-

40

³³ Հմմտ. Կողոս., II, 12:

³⁴ Հմմտ. Հռովմ., Ը, 17:

³⁵ Հմմտ. Տիտոս, Բ, 14:

³⁶ Հմմտ. Մատթ., ԺԱ, 29:

³⁷ Հմմտ. Եսայի, ԾԳ, 4:

³⁸ Հմմտ. Յովհ., Ժ, 11:

³⁹ Հմմտ. Մատթ., ԺԸ, 12, հմմտ. Դուկ., ԺԵ, 4:

- A196r ուսչ կարկատելով ի պաղա//տանսն յոտից գնալոյ, որք ունին
 ի տոր եւ ստութենէ աղոյն, ի քաջապնդութենէ ողբերգութեանն,
 զծանրագոյնս չարեացն բերեալոյնս դատին՝ աշաք միայն
 գոհանալով, զի ոչ յինքեանց հաշմութիւնն հայիցին:
- 5 ԺԷ Եւ նոքա այսպէս, իսկ մէք բազմեալք կամք պայծառք
 պայծառապէս ի վերայ բարձր բազմականի եւ ամբարձացելոյ,
 եւ յաւելորդաց, եւ յանհալելեաց վերարկուացն, թէ եւ զձայնն
 լսիցենք զհայցելոյն դժուարիմք: Պարտ լինի մեզ ի յատակին
 անուշահոտանալ ծաղկաւք, բազում անգամ եւ արտաքոյ ժամա-
 10 նակին, եւ զսեղանն սրսել անոյշ իողովք, եւ իողովք անուշա-
 հոտագունիքն եւ բազմապատկաւք. զի եւ ստաւել եւս մեղկ ի-
 ցենք: Ծառայից մերձ կալ, ոմանց զարդոյ եւ որ ինչ ի կարգին
 է, արձակեալ զվարսս իգականս, եւ ի դիմաց կողմանէ պանու-
 15 ճեալս ա//տաւել ախտ աշաց զաշտոնեցելոցն ազտակարագոյնս
 կազմեալք: Եւ զբաժակսն ի վերայ ծայրից մատանցն բարձեալս,
 որպէս է կարողութիւն, վայելչականք միանշամայն եւ զգոշա-
 գոյնք: Իսկ գեր ի վերոյ քան զգլովսն հողմ հովահարաւք պա-
 20 ճունենն, եւ ձեռացն աղով զյոլովութիւն մարմնոյն զովացուցա-
 նեն: Եւ առ այսոքիւք, յոլովութիւն մտոյ ի սեղանն, յամենեցուն
 մատակարարեալք մեզ առատապէս իմն ի տարբացոյ, ի յա-
 դոց, ի յերկրէ, ի ջրոյ: Եւ վտանգեալք լինին խահարարացն եւ
 հացարարացն մեքենայիւք, հանդէս լինի առաւելագոյն, ո մա-
 25 նաւանդ զաշտոնութիւնն մեզ եւ զապերախտն ողորեսցէ զորո-
 վայն, զծանր զբեռնն եւ զսկզբնաշարն, զանշազ գազանն եւ
 զանհատատարիմն, զխափանեալն անդէն վաղվաղակի՝ հանդերձ
 խափանեցելովք կերակրովքն: Եւ անցա // մեծ իմն եւ յագումն
 30 ջրոյն, իսկ մեզ մինչեւ ցարբեմալն գինոյն թակոյք, մանաւանդ
 թէ եւ ստաւել քան զարբեցութիւնն, արբշտացն: Եւ զոմն ի բաց
 յողարկենք ի զինեացն, եւ զոմն ընտրենք իբրեւ զծաղկահոտա-
 գոյն, յաղագս այսոցիկ իմաստասիրեսցուք, տուգանք թէպէտեւ,
 35 ոչ առ մերձ եղիցի գաւառականան եւ յանուանեցելոցն ոք, իբ-
 րեւ բռնատր: Վասն զի պարտ եւ արժան է մեզ խրախճանս եւ
 քան զպետսն աւելորդս կամ լինել եւ կամ կարծել, իբրեւ ամա-
 չեցեալք, զի մի՛ չար կարծիցիմք, եւ ծառայք որովայնի, եւ որոց
 ընդ որովայնի:
- ԺԸ Զի՞նչ այսոքիկ, ո բարեկամք եւ եղբարք, ընդէ՞ր ախ-
 տացուցանենք զանձինս ախտի առաւել, քան զմարմնոցս դժուա-
 րագունաւ: Որքան զմին ակամայ գիտեմ եւ զմիւսն յաժարու-
 40 թեամք եկեալ, եւ // զոմն ընդ կեանսս ընդ այսոսիկ ծածկեալ,
 եւ զմիւսն երթեալ ընդ մեզ ի փոփոխելն, եւ զմին ողորմեալ, իսկ
 զմիւսն աստեցեալ, որք միտսն ունին: Հի՞մ ոչ աւգնենք բնութեա-
 ճս, ընդէ՞ր ոչ զգեցուցանենք, մարմինք լեալք, զմարմնոյն
 զնուաստութիւն, վասն է՞ր շուայտիմք եղբարցն թշուառութեամբք:
 45 Մի՛ ինձ լիցի, մի՛ ընչաւետանալ, ի անցա տարակուսելն եւ մի՛
 քաշողջանալ, եթէ ոչ աւգնիցեմ անցա վիրացն: Եւ մի՛ կերակ-
 րոյն բառականապէս ունել, եւ մի՛ զգեստուն, եւ մի՛ ընդ յարկաւ
 հանգչել, եթէ ոչ եւ հաց կարկատիցեմ, եւ տայցեմ ի զգեստունէն
 ըստ կարողութեան, եւ ընդ յարկան հանգուցանիցեմ: Այլ կամ

- A198r
5
10
15
A198v
20
25
A199r
30
35
A199v
40
- զամենայն ինչ նուիրելի է Քրիստոսի, զի հարազատապէս զհետ երթայցեմք նորա, զիսչն բառնալով եւ թոչիցիմք իբրեւ թէթեւք ի վերին աշխարհն, եւ քաջապիճոք // ոչ ի միոջէ ունեք ի վայր ձգեալք, եւ շահեցոյք փոխանակ ամենայնի գՔրիստոս, նուաստութեամբն բարձրացեալ, եւ աղբատութեամբն ճոխացեալք կամ ընդ Քրիստոսի զինչս բաժանելի է, զի որպէս ունելն, նովա եւ բարոքն ունել, սրբեացի, եւ հաղորդել, որք ոչն ունիցին: Ապա եթէ սերմանիցեմ յիս ինքն միայն, սերմանեցից ուրեմն, եւ այլք կերիցեն, եւ զի զամենայն ասացից գՅովբայն՝ փոխանակ ցորենոյն բուցի ինձ եղիճ եւ փոխանակ գարոյ՝ դժնիկ⁴⁰: Հողմ խորշակ առցէ, եւ բարձցէ մորիկ զիմ վաստակսն, զի սնոտի վաստակիցեմ: Եթէ եւ շտեմարանս շինեցից ի մամոնայի գանձոց, յայսմ գիշերի զոգիսս պահանջեցայց⁴¹, բան ընկալայց, զորոց չարաչարն գանձեցի:
- ԺԹ Ո՛չ ողջախոհանայցեմք թէպէտեւ յամրագոյն, ո՛չ ի վայր կործանեցոյք զանցատրութիւնն, զի մի՛ ասացից // զոժոյթիւնն, ո՛չ զմարդկայինսս զմտաւ ածցոյք, ո՛չ այլոցն չարեաւք զմերսն գեղեցկապէս յարիմեցոյք: Վասն զի բնութեամբ ի մարդկայնոցս ոչինչ հաստատուն եւ ո՛չ հարթ, եւ ո՛չ ինքնաբաւ, եւ ո՛չ ի վերայ նոցին կացեալ: Այլ շրջանակ իմն մերոց իրացս շուրջ ընթանայ, այլ երբեմն այլ ի միում ատուր բազում անգամ, է երբէք, զի եւ ի ժամու բերէ փոփոխմունս: Եւ հողմոց մանաւանդ գոյ հաւատալ ոչ կացելոց, եւ նախ ընդ խորս գնացելոյ հետոցն, եւ գիշերոյ խաբերայ երագոց, որոց առ սակաւ ինչ է շնորհն, եւ որքան զաւագ մանկունք հարկանեն խաղալով, բան եթէ մարդկան բարարութիւն: Բայց իմաստունք են, որք ի ձեռն ոչ հաւատալոյ մերձակայիցս, զհանդերձեալսն ինքեանց, գանձեն: Եւ մարդկային անհաստատուն կարգասս եւ անհարթիւ, որ ոչն կործանի // զքաղցրութիւնն սիրել, զի յերիցն զմին ամենայն իրաւք շահեցին կամ ոչ երբէք գործել զչարն, վասն զի եւ աստ քաղցրագունիցն բազում անգամ յաջողէ աստուածութիւնն զբարեպարիշտսն, քաղցրութեամբն զվշտակցութիւնն յառաջ կոչելով: Կամ համակութիւն ունել յինքեանս առ Աստուած, իբրեւ ոչ յաղագս չարութեան, այլ մատակարարութեան իրի իմն չարչարեալք եւ, կամ զվերջինն, իբրեւ զպարտս պահանջել ի բարեգործացն զմարդասիրութիւնն, զոր պէտս ունողացն ընծայեցին, յաջողապէս ինքեանք գործելով:
- Ի Մի՛ պարծեացի, ասէ, իմաստունն իմաստութեամբն իւրով եւ մի՛ ճոխն՝ փարթամութեամբ իւրով, եւ մի՛ հզարն՝ զարութեամբ իւրով⁴², թէպէտեւ ի ծայրսն իցեն երթեալք, ոմն յիմաստութեանն, եւ ոմն յնշեղութեանն, եւ միսն զարութեանն: // Բայց եւ յաւելից եւ որք յայտոսիկն յարմարին: Մի՛ երեւելին փառաւք եւ մի՛ առողջն քաջողջութեամբն, եւ մի՛ գեղեցիկն գեղեցկութեամբն, եւ մի՛ մանուկն մանկութեամբն, եւ մի՛ այլով

⁴⁰ Հմմտ. Յովբ, ԼԱ, 40:⁴¹ Հմմտ. Ղուկ., ԺԲ, 20:⁴² Հմմտ. Երեմ., Թ, 23:

միով ինք, որք աստէն գովելիք են, եւ եթէ պարտ է համա-
նաւտարար ասել, որ յայցանէ փբացեալ: Այլ յայտոսիկ պարծե-
ցի միայն յիմանալն⁴³ եւ ի հայցել զԱստուած, եւ ցաւակից լինել
ախտաւցելոցն, եւ առ հանդերձեալսն ինքեան ինչ պիտանացու
ամբարել: Վասն զի ոմանք են հոսանուտք եւ առժամանակեայք,
եւ, որպէս խաղթուեայք, ալ երբեմն յայլս փոփոխեալք, եւ փո-
խազրեալք: Եւ ոչ ինչ ալնպէս ունողին է հեշտալի, որպէս թէ ոչ
ժամանակաւ դադարեալք կամ մախանաւք փոփոխեալք: Իսկ
ոմանք կալունք եւ մնայականք եւ ոչ երբէք տեղի տուեալք, ոչ
փոփոխեալք, եւ ոչ ի բաց վազեալք ի հաւատացելոյն յուսոց:
// Այլ ինձ եւ յաղագս աչտոցիկ թոյի, ոչ ինչ աստ ի բարեացն
լինել հաւատարիմ մարդկան, եւ ոչ բազմաժամանակեայ, բայց
եթէ ինչ զայդ, եւ զայս գեղեցկապէս արուեստաւոր բանիւ եւ
որքան զամենայն միտս գեր ի վերոյ է իմաստութեամբ հմարիք,
խաղ առնել զմեզ լերեւելիսս, ալ երբեմն ալլազգ փոփոխեալքս
եւ փոփոխեն ի վեր, եւ ի վայր բերեցելովքս, եւ շուրջ խո-
տորեցելովքս, եւ նախ քան զանգրմբոնէլն ի բաց գնացեալքս
եւ փախուցելովք: Զի յայտոսիկ զանհաստատութիւնն եւ զան-
հարթութիւնն տեսանելով՝ առ հանդերձեալսն փոփոխեալք յար-
մարիցիմք: Քանզի զի՞նչ արարաք արդեւք, հաստատուն բա-
րի գործելով մեզ, որ եւ յայսքան եւս ընդ ոչ մնացելոմս եմք
կապեալք, եւ այսպէս զմեզ յաղագս սորա հեշտութիւն եւ
խաբէութիւն ունի ծառայեցուցանելով, // մինչ զի ոչ մի ինչ
լաւագոյն, եւ ոչ բարձրագոյն, քան զմերձակայսս զմտաւ ածել
կարացեալք: Եւ այս ըստ պատկերի Աստուծոյ լեալս եւ լուեալս,
եւ հաւատացեալս զվերինսն առ ինքն ձգելով:

ԻԱ Ո՞ հանճարեղ եւ իմացի զայս⁴⁴, ո՞ զանց արասցէ զան-
ցաւորաւքս, ո՞ յարեցի ի մնացականսն, ո՞ յաղագս մերձակա-
լիցս, իբրեւ հեռաւորաց զմաստ ածիցէ, ո՞ վասն յուսացելոցն, իբ-
րեւ կալուն եղելոց, ո՞ որոշեցէ զեան եւ զերեւեալսն, եւ զոմանց
զհետ երթիցէ, եւ զոմանս արհամարհիցէ, ո՞ զշաշափելիս եւ
զճշմարտութիւնն, ո՞ զստորին խորանս, եւ զվերին քաղաքն, ո՞
զպանդխտութիւնս եւ զքնակութիւնն, ո՞ զխաւարի ի լուսոյ, ո՞
զտիղմ խորոցս եւ զսուրբ երկիրն, ո՞ զմարմին եւ զհոգի, ո՞
զԱստուած եւ զաշխարհակալս, ո՞ զմահու ստուերն եւ զկեան//սն
յափտեմականս, ո՞ զմերձաւորաւքս զհանդերձեալսն զնեսցէ, ո՞
ցնդել ի փարթամութեամբս զոչ բակտելին, ո՞ երեւելեալսս զոչ
տեսանելիսն: Արդ՝ երանելի է, որ զայտոսիկ որոշէ, եւ բաժանէ
հառանդո բանին, որ զատուցանէ զլաւագոյնն ի վաւորաբէն,
ելս ի սրտի իրում դնիցէ⁴⁵, որպէս ասէ ուրեմն սուրբն Դաւիթ,
եւ ի հովտ տրտմութեանս յայսմանէ փախչիցի, որքան է կարո-
ղութիւն, զվերինն խնդրիցէ, եւ աշխարհի ընդ Քրիստոսի խաչ-
եալ, ընդ Քրիստոսի յառնիցէ, եւ վերանայցէ ընդ Քրիստոսի, ոչ
եւս փոփոխելոյ կենացս եւ ոչ խաբէբայից ժառանգաւոր. ուր ոչ

⁴³ Հմմտ. Երեմ., Թ, 24:

⁴⁴ Հմմտ. Ովսէէ, ԺԳ, 10:

⁴⁵ Հմմտ. Սաղմ., 2Ե, 6:

A201v 5 եւս խաճանիցէ աւճն ի ճանապարհի եւ ոչ սպասիցէ գարշապարի, եւ ոչ գլուխն սպասեալ լինիցի: Բայց այլոցն մեզ գեղեցկապէս ինքն գոչէ Դաւիթ, իբրեւ մեծա//ձայնագոյն որ ի բարձրաւանդակէ եւ ամենայն բազմութեանն, քարոզութեամբ ծանրասիրտս կոչելով, եւ սիրողս զստութիւն, ոչ յոյժ պինդ ունել զերեւելիսս եւ ոչ այլ ինչ, քան եթէ ժամանակ ցորեմոյ եւ զինոյ եւ զապականեցելոցն, զամենեցուն աստուտ քաջախառնութիւն կարծել: Եւ թոյի ինձ զսոյն, եւ երանելին անկատ Միքէաս, եւ յերկիր անկելոց եւ ի կարծեցելոց բարեացն ի վեր յարուցանելով, մերձեցարուք, ասէ, ի յերինսն յախտեանականս: Արի եւ գնա, վասն զի ոչ է քեզ այս հանգիստ: Զսոյն անդէն եւ սակաւ ինչ նուազ սովին բանիւր ձայնակցութեամբ, Տէրն մեր եւ Փրկիչ հրամայէ, ոմանց ասելով՝ արիք, եկայք, գնացուք աստի⁴⁶, ոչ յայնժամ զաշակերտսն յայնմ տեղոյն փոփոխելով, որպէս իմանայցէ որ արդեւք, այլ զամենեւեան յինքեան // տնկեալսն յերկրէ եւ յերկրայնոցս յերկինս ձգելով եւ յերկնաւորսն:

A202r 15 20 25 30 35 ԻԲ Արդ՝ զհետ երթոցուք այսուհետեւ բանին, հայցեցուք զանդ հանգիստն, ընկեցուք զաստի ճոխութիւնս, որ բարութն է սովա, զայն միայն շահեցուք, ստացուք զանձինս ողորմութեամբն, տացուք ի գոյիցն աղքատացն, զի անտեսաքն փարթամացուք: Տուր բաժին եւ հոգւոյ, մի մարմնոյ միայն, ի բաց բարձ ինչ յորովայնէդ, հոգւոյն նուիրեա, յափշտակեա ինչ ի հրողն, հեռի դիր ի ստորինսս ճարակող է բոցոյն: Յափշտակեա՝ ի բոնատրէն, աւանդեա՝ Տեսունն: Տո՛ւր բաժին եւթանց, կենացս այսոցիկ, այլ եւ ուրից, որ յետ այսոցիկ մեզ կան մնան: Տո՛ւր սակաւ, յորմէ գլովովդ ունիս⁴⁷, տուր եւ որ զամենայն, ամենայնի շնորհէ: Ոչ էրբէք // յաղթեցես մեծապարգետութեանն Աստուծոյ, թէպէտեւ զամենայն տացես զգոյսդ եւ ի վերայ գոյիցդ եւ զքեզ ինքն յաւելցես: Եւ այս է առնույն, Աստուծոյ տալն, որքան ի ներքս բերցես, առաւել է միշտ պակասութիւնն, եւ ոչինչ տացես զքո սեպհական, զի ամենայն յԱստուծոյ է: Եւ զոր աւրինակ ոչ գոյ հնար ըստ իւր ինքեան ստուերն անցանել իւրաքանչիւր ումեք տեղի տալով, եւ որքան յառաջ մատչիմք, եւ հաւասար միշտ մերձ ընկալեալ: Եւ ոչ գեր ի վերոյ քան զգլուխն լինել մեծութեանս մարմնոյն, որ ի վերայ կայ ամենայն մարմնոյն, նոյնպէս եւ որովք տամքն ոչ յաղթեմք Աստուծոյ: Զի եւ ոչ արտաքոյ ինչ ի նորայոցն տամք, եւ ոչ առաւել քան զնորս աստուծութիւնն:

A203r 40 45 ԻԳ Ծանի՛ր ուստի՞ է քեզ գոյդ, տո՛ւր եւ աստութիւն աւդոյդ, իմանալդ, նոյն ինքն մեծդ, ճանաչելդ // զԱստուած, յարքայութիւն երկնից յուսալ, հրեշտակացն զուգապատուութիւն, փառացն տեսութիւն, այժմ ընդ հայելի ստակաւ, բայց յայնժամ կատարելապէս եւ մաքրագոյն: Որդի լինել Աստուծոյ, ժառանգակից Քրիստոսի, համարձակեալ ասացից, եւ Աստուած ինքն: Ուստի՞ քեզ այսոցիկ ամենեւեան եւ յումէ՞: Եւ զի զփոքունս ինչ ասա-

⁴⁶ Հմմտ. Յովն., ԺԴ, 31:

⁴⁷ Հմմտ. Ժողով., ԺԱ, 2:

- ցից եւ գերեւելիս՝ ո՞ր ետ քեզ զգեղեցկութիւն երկնի տեսանել, զարեգական ընթացս, զլուսնի բոլորակութիւն, զաստեղաց զբազմութիւն, եւ որ յայտոսիկ յամենեւին, իբրեւ ի քնարի, քաջալարմարութիւն եւ կարգ նոյնպէս ունի, ժամոց ալլալլութիւնս, փոփոխմունս ժամանակաց, զտարեաց շրջագալլութիւնս, զտուրնջեան եւ զհշերտոյ զուգամասնութիւն, զերկրի զբոյսս, զաղոյ զցնդումն, զլայնութիւն ծովոյ զլուծելոյն եւ զ//կայուն եղելոյ, զերկայնութիւնս գետոց, զհողմոց զհոսմունս։ Ո՞ր զանձրեւս, զերկրագործութիւնս, զկերակուրս, զարուեստս, զբնակութիւնս, զաւրէնս, զքաղաքականութիւնս, զկէանս ընդէս, զյանկութիւնս առ ազգակից։ Ուստի՞ քեզ կենդանեացն ոմանք ձեռընդէք են եւ ընդ լծով անկեալք, եւ կէսք ի կերակուր տուեալք։ Ո՞ր զքեզ տէր եւ թագաւոր ամենեցուն կացոյց երկրայնոցս։ Զի՞ մի ըստ իւրաքանչիւր ունէք ասացից, ամենեցուն, որոց նախապատիւ ես, ոքան զալլսն պարգեւեաց։ Ո՞չ սա, որ այժմ նախ քան զամենեւեան եւ փոխանակ ամենեցուն հայցէ ի քէն զմարդասիրութիւնն։ Եւ արդ ո՞չ ամաչիցեմք, զոմանս առեալ, եւ զկէսս վատահացեալս, ոչինչ այնպիսի ի ներքս բերիցեմք Աստուծոյ, զեղբայրսիրութիւնն։ Այլ նա ի գազանացն զմեզ // որոշեաց եւ բանի միայնակս յերկրայնոցս պատուեաց, իսկ մէք զմեզ ինքեանս գազանացուցանիցեմք, եւ այնքան ի փափկութենէն ապականիցիմք ի մոլեցելոյ, եւ ոչ ունիմ զի՞նչ ասացից, մինչ զի միանգամայն զանգուածովն եւ թեփովքն, զորս չարաչար թերեւս շահեցաք, եւ բնութեամբ եւս վեհագոյնս լեալս քան զնոսա կարծիցեմք։ Եւ զոր արիւնակ էր ինչ հնոցն, որպէս լսեմք, ազգ հսկայիցն եւ ալլոցն մարդկան։ Նոյնպէս եւ մէք, քան զնոսա լինիցիմք բարձրագոյնք եւ գեր ի վերոյ քան զմարդ, որպէս Նեբրովթըն⁴⁸ այն, կամ Ենակայ ազգն⁴⁹, որ նեղէրն գիւրալէլ, կամ յաղագս որոց ջրհեղեղն զերկիր մաքրեաց։ Եւ նա ոչ ամաչէ կոչել հայր մեր, որ Աստուածն է եւ Տէր, իսկ մէք զազգակիցսն ուրանայցեմք։
- Ի՞նչ Մի՛ երբէք, ո՛վ բարեկամք եւ եղբարք, մի՛ լիցուք չարք տուեցելոցն մեզ մատակա//րարք, զի մի՛ լուիցուք ի Պետրոսէ, որ ասէրն՝ ամաչեցէք, որք զալլոցդ ունիք եւ նմանեցէք հաւասարութեանն Աստուծոյ, եւ ոչ որ եղիցի աղքատ։ Մի՛ վատակեցուք զանձեղով եւ պահելով, ալլոց աղքատութեամբ աշխատեցելոց, մի՛ թշնամանեցէ եւ սպառնասցի դառնապէս մեզ աստ երանելին Ամովս ալսպիսի բանիւք, որք ասեքդ այժմ։ Ե՞րբ անցէ ամիսս, եւ վաճառեցուք, եւ շաքաթք, եւ բացցուք զշտեմարանս, եւ որք ի վերայ ալսոցիկ, որովք մեծամեծաւք եւ փոքումբք կշռովք ստանայցեմք⁵⁰, յաղագս որոյ Աստուծոյ ռխակալութիւնն ի վերայ յառնէ։ Աստուատ եւ երանելին Ամվոս⁵¹ թոի, թէ եւ զնոյն ինքն գիտակութիւնն ի բաց կտրէ, որպէսզի յագեցումնն զթըշնամանս ծնանի, եւ շուայտելն ի վերայ գահոյից փղոսկրէից, եւ

⁴⁸ Հմմտ. Ծնունդք, Ժ, 8:⁴⁹ Հմմտ. Թիւք, ԺԳ, 29:⁵⁰ Հմմտ. Ամովս, Ը, 5:⁵¹ Երանելին Ամովս-ի փոխարեն բնագրում ունենք՝ «Երանելին Միքայաս» (էջ 889):

- A205r առաջին իդոլը փափկանալն, մատաղ որ//թուք լանդոց եւ ուլովք ի հատից⁵², որովք պարարին եւ առ յայնս նուագարանացն կայթելն, եւ եւս առաւել կարծելն կայուն ինչ գայնոսիկ գոլ եւ մնացական: Թոի թէ եւ ոչ այնպէս այսոքիկ դժնդակագոյնք
- 5 կարծեցեալք, որպէս ոչ ինչ ցաւելն ի վերայ բեկմանն Յովսէփու նոցա փափկանալն⁵³: Զի գայն ի յագեցութեան ամբաստանութիւնն յաւելոյր, զի մի՛ պիտասցուք այժմ մեք եւ մի՛ այնքան փափկասցուք, մինչեւ զԱստուծոյ զմարդասիրութիւնն արհամարհել, եւ այսոքիք դժուարեալ թէպէտեւ ոչ մերձ առ ոտս, եւ ոչ
- 10 միանգամայն ընդ չարութեանն ի վերայ ածիցէ զբարկութիւնն մեղուցելոցն:
- Ի՛նչ նմանեցուք Աստուծոյ արինացն վերնագունիցն եւ առաջնոցն, որ տեղայ ի վերայ արդարոց, եւ մեղաւորաց, եւ ծագէ ամենեցուն նմանապէս զարեգակն. // գերկիր ցամաքայնոցս
- A205v 15 ամենեցուն տարածեաց ընդարձակ, եւ գաղբերս եւ զգեստ, եւ զանտառս: Զառչս թոչուն բնութեանդ, եւ զջուրս, որոց բնութիւն է ջրային, եւ զառաջին կելոյ պատճառս առատապէս ամենեցուն շնորհեաց. ոչ բոկութեամբ կալեալս, ոչ արինաւք բովանդակեալս, ոչ սահմանաւք արգելեալս, այլ եւ հասարակաց
- 20 գայնոսիկ եւ առատս ամենեցուն առաջի եղ⁵⁴, զբնութեանս զուգապատուութիւն հասարարութեամբ պարգեացն պատուեաց, եւ եցոյց զվնծութիւն իւրոյ բաղցրութեան: Մարդիկ զոսկի եւ զարծաթ, եւ զգեստոց, որք կակղագոյնքն են եւ առաւել քան զպէտս, եւ ի քարանցն զպայծասն ծածկեն, եւ որ այլ ինչ նոյնպիսիք
- 25 են, որք պատերազմի, եւ խոռովութեանց, եւ առաջին բռնաւորութեանցն են ծանալութիւնք: Եւ ապա // ամբառնան զյանն յանմտութենէն, եւ որոց դէպ իցէ յազգականացն զողորմութիւնն փակեն, եւ ոչ աւելորդաւք ի հարկաւորսն ազնել կամեցեալք
- A206r (ո՛վ անխրատութեանն, ո՛վ յիմարութեանն), թէ ոչ այլ ինչ, 30 զոնեալ գայն զմտաւ ածելով, զի աղքատութիւն եւ ընչեղութիւն, ազատութիւնն, զոր անեմք, եւ ծառայութիւն, եւ այսպիսի անուանք, լետոյ ի ներքս եմոտ յազգ մարդկան, իբրեւ այստածեւորութիւնք իմն հասարակաց չարութեամբ ի միասին՝ ի ներքս անկեալք: Եւ այնորիկ են իմաստք, զի ի սկզբանն, ասէ, ոչ եղեւ այսպէս⁵⁵, այլ որ ետտեղծ ի սկզբանն զմարդն, ազատ եղող եւ ինքնիշխան, արինաւք պատուիրանին միայն կեալ, եւ ճոխ դրախտին փափկութեամբ: Զսոյն եւ այլոմ ազգի մարդկան կամեցեալ շնորհեաց ի ձեռն միոյ առաջնոյ սերմանն: Ազա//տու-
- A206v 40 թիւն եւ ճոխութիւն, որ է պատուիրանին միայն պահպանութիւն, աղքատութիւն ճշմարիտ եւ ծառայութիւն, այսորիկ զանցանելն:
- Ի՞նչ Ուստի մախանք եւ հեռք, եւ նենգաւոր աւժին բռնաւորութիւն, միշտ զաշտութեամբ հեշտութեանն քարշեալ, եւ ի վե-

⁵² Հմմտ. Ամովս, 2, 4:

⁵³ Հմմտ. Ամովս, 2, 6:

⁵⁴ Հայերեն թարգմանությունից դուրս է մնացել շարունակվող հետևյալ միտքը՝ «և ոչինչ ապկի բացի անկարողությունից չեն առաջարկում» (Էջ 889):

⁵⁵ Հմմտ. Մատթ., Ժ, 8:

- րայ յարուցեալ ի տկարագունիցն զյանդգնագոյնսն, պատուեցաւ ազգակցութիւնն յանուանցն ատարարութիւնս, եւ զքնութեանս զազգակցութիւն աշահութեամբ ստանել, ացտեաց եւ զարեմս, բռնատրութեանն ազնականութիւն: Բայց դու հայեա ինձ յառաջինն հաստաք արեմս, մի՛ ի վերջին քաժանութեանն, մի՛ ի զարացեալն միայն, այլ ի յարարիչն ազնեա: Որքան կարողութիւն է բնութեանն, զսկզբնական ազատութիւնն պատուեա՛, պատկառեա՛ ի քէն ինքեմէ, ծածկեա՛ զազգիոյ զանպա/տրութիւն, բաւական լեր հիւանդութեանն, զկարատրութիւնն միխթարեա՛, որ առողջն է եւ փարթամ, զհիւանդին եւ զաղքատին, որ ոչ երբէք գայթազեաց, զգլորեցելոյն, եւ զխորտակեցելոյ, որ յաջողութեամբքն է առաւելեալ, զձախու կողմանն եւ աշխատեցելոյ: Տուր ինչ Աստուծոյ գոհացողութիւն, եթէ ի բարի առնել կարողացն եղէր, այլ ոչ ի բարի կրել կարատեցելոցն, զի ոչ հալիս յատարացն ձեռս, այլ ի քոյսո՛ւ՝ այլք: Ծոխացիր մի ընչիւքն միայն, այլ եւ բարեպաշտութեամբ, մի՛ ոսկւովն յատուկ, այլ լեւ առաքինութեամբ⁵⁶: Աթեան լե՛ր ընկերին պատուականագոյն, եւ լերեւելն քաղցրագոյն, լե՛ր թշուառացելումն աստուած, ողորմութեանն Աստուծոյ նմանելով:
- Ի՛նչ վասն զի ոչ ինչ այնպէս, իբրեւ զբարին առնել, մարդուն յԱստուծոյ, թէպէտեւ ոմն մեծագունին, // իսկ միւսն սակաւուն բարեգործէ, իրաքանչիւր որ, կարծեմ, ըստ իւրում զարութեանն: Մին արար եւ արձակեալ հաւաքէ դարձեալ, իսկ դու զանկեալն մի՛ աճտեա առնիցես: Նա ողորմեցաւ ի մեծամեծսն, տալով ամենեցուն արեմս մարգարէս եւ առ այսոքիւք զքնական արեմսն զանգրաորականսն, զգործեցելոցն քննիչս, յանդիմանեաց, խրատեաց, դատարարակեաց եւ, ի վերջնումն, փրկական զինքն ետ յաղագս աշխարհի կենաց: Ենորհելով առաքեալս, աւետարանիչս, վարդապետս, հովիւս⁵⁷, բժշկութիւնս, Աշաւրս, վերստին ճանապարհ առ կեանսն, մահու լուծումն, ի յաղթութիւն հակառակ յաղթողին, զկտակն ստուերին, զկտակն ճշմարտութեանն, զհոգւոյն սրբոյ քաժանմունսն, զնորոյ զփրկութեանս զխորհուրդ: Իսկ եթէ մեծամեծաքն կա/րող իցես, եւ որովք ողիղ բարեգործի անձն (վասն զի արար զքեզ եւ յայնոսիկ ճոխ Աստուած, եթէ պարծեցես), մի՛ այնոքիւք բարի առնել Առաքեցես կարատեցելումն, մանաւանդ եթէ զառաջինսն եւ զմեծամեծս խնդրողին քէն տաս, եւ նախ քան զհայցելն, որ զբոլոր արն ողորմի եւ տայ փոխ զբանն, եւ պահանջէ աշխատասիրաբար զփոխորդին հանդերձ վաշխի պարտապանին յանելուածով, զոր միշտ քանի յանելու, զոր ունի յինքեան եւ անեցուցանէ յինքեան առ սակաւ զբարեպաշտութեանն սերմանս: Ապա եթէ ոչ, զերկրորդսն եւ որքան ի կարողութիւն գալ, ազնեա՛, կարկառեա՛ կերակուր, կարկառեա՛ կապերտ, մատո դեղ, զվերսն պատեա՛, հարց ինչ յաղագս թշուառութեանն,

⁵⁶ Ծարունակութեան «քան միայն այդ» (Էջ 892) միտքը հայերեն թարգմանությունում չի արտացոլվել:

⁵⁷ Հմմտ. Եփես. Դ, 11:

A208v

5

10

A209r

15

20

A209v

30

35

A2.0

40

45

վասն ժովկարութեանն իմաստասիրեալ, մերձ երթ, քաջալերեցիր, մի ինչ վատ//թար բան գրեզ ինքն յայնոսիկ լիցես: Ոչինչ առես յախտէն, թէպէտն յոյժ խենթեշն զայն կարծիցեն բանիւք սնոտեալք խաբեալք, մանաւանդ եթէ զայն առաջի արկանեն իրեանց վատթարութեանն կամ ամպարշտութեանն պատասխանիս յերկշտութեանն, իբրեւ ի մեծ իմն եւ իմաստուն ապահին: Զայս հաւանեցուցեն գրեզ բանք, եւ թժկացն մանկունք, եւ տնակիցքն նոցա սպասաորք, յորոց եւ ոչ որ երբէք այնպիսեալքն ինչ յառաջանալով վտանգեցաւ: Որպէս զի, եթէ իրքն ահաւորք եւ կարծեաց արժանաւորք էին, ո ծառայ Քրիստոսի, աստուածաւոր, եւ մարդաւոր, մի՛ ուցիս մի ինչ վատթարագի, հաւատովն քաջալերեցիր: Յաղթեցէ երկշտութեանն գոյթն, Աստուծոյ երկիւղն մեղկութեանն կացցէ, առաջի մարմնասիրացն խորհրդոց բարեպաշտութեանն: Մի՛ անտես արասցես, // մի՛ զանցանիցես զեղբարքն, մի՛ ի բաց դարձցիս իբրեւ ի պիղծ սպանողէ, իբրեւ ի զարշելոյ, իբրեւ յայլոց իմիք փախչելեաց եւ ի հրաժարելեաց: Քո է անդամն, թէպէտն թշուառութեամբն ի վայր խոնարհեալ է: Քեզ թողեալ է աղքատն իբրեւ Աստուծոյ, թէպէտն յոյժ զանց առնիցես մեծախորհրդաբար, թո՛ւ թէ գրեզ այսպիսեալքս թախանձեցից բանիւք: Քեզ առաջիկայ մարդասիրութեանն պատճառ, թէպէտն աստաբացուցանէ գրեզ ախտանալովն աստարն:

Ի՞նչ Ամենայն, որ նաւեն, մերձ է ի նաւաբեկութիւն, եւ այնքան առաւել, որքան յանդգնագոյնս նաւիցէ: Եւ ամենայն, որ մարմին գգեցեալ է, հուպ է ի մարմնոյն չարիս, եւ այնքան առաւել, որքան ողորպէս զնայցէ, եւ ոչ տեսանիցէ նախ քան զինքն զանկեալն: Մինչ դեռ նա եւ արտաքոյ վտանգիցն, նաւաբեկ/կեցելումն տուր ձեռն, մինչ դեռ առողջ եւ եւ ընչաւետաւանդ, չարչարեցելումն ազնեալ: Մի՛ անասացես ի քէն ինքեմէ ուսանել, որքան չար է անմարդութիւնն եւ որքան բարի գոյթք, որոց պէտս ունին բացեալք: Մի՛ ամսործեցես ի վեր ամբառնալ զձեռնդ Աստուծոյ ըստ բարձրալզիցն եւ զանցարարողացն զայլոց թշուառութեամբքն: Այսոքիւք խրատեցի՛ր, տո՛ւր ինչ փոքր կարատեցելումն, զի եւ ոչ փոքր է, որ ամենայնին է կարատեալ, այլ եւ ոչ Աստուծոյ, եթէ իցէ ըստ կարողութեան: Տո՛ւր փոխանակ մեծամեծացն զլաւարկութիւնն: Եթէ ոչ ինչ ունիցիս, արտատեսալ, մեծ է հիքացելումն դեղն, ողորմութիւն յանձնէդ ի ներքս քերեալ, վշտակիցն լինել հարազատաբար, քաղում իմն թեթեւացուցանէ ի թշուառութեմէն: Ոչ է անպատուականա//գոյն քեզ քան զանասուն մարդն, ո՛վ մարդ, զոր անկեալ ի խորխորատ կամ մոլորեալ, ի վեր յարուցանել գրեզ եւ անդրէն անել արեւնքն հրամայեն, եթէ այլ ինչ ծածկեալ անճառելի եւ խորագոյն, որպէս յոլովք փոքումբք խորովք եւ կրկնակաք, ոչ է մեզ զայն զիտել, այլ որ զամենայնն հետազատէ եւ զիտէ հոգւոյն: Բայց որքան եւ հասանեմ, եւ որքան լիմ եկն ի բանս, կրթէ զմեզ ի փոքունս մարդասիրութեամբն՝ ի կատարելագոյնն եւ ի մեծն: Զի որքա՛ն ինչ պարտ իցէ համազգեացն եւ զուգապատուաց, որ մինչեւ յանբանիցն պահանջեալ է:

Իժ Արդ՝ զայսոսիկ բանն եւ արեւնքն, եւ ի մարդկանէ չա-
 փաւորագոյնքն, առ որս առնելն ինքեան բան զկրելն պատուա-
 կանագոյն է, եւ փութալի բան զշահն ողորմութիւնն: Զի՞նչ ար-
 դեք ասիցես ըստ մեզ իմաստնոցն: Վասն զի թո՛ղոմ ի բաց
 ասել զարտաքին շատագովսն, որք աստիքն զաստուածսն գտա-
 նեն եւ շահիցն զատաջինսն բաժանեն, որք անդէն, եւ
 որքան զայսոսիկ վատթարագոյնն է եւ մարդասպանել կար-
 ծեն: Է՛ առ ոմանս դիպումսն եւ առ այլս յազգացն մասն բա-
 րեպաշտութեան իրեանց անմարդութիւնն, եւ այնպիսի զոհիք
 ինքեանք զուարճանան, եւ զաստուածսն իրեանց կարծեն, չարք
 չարաց բուրմք եւ ծանիչք լեալք: Այլ են եւ ի մերոցս ոմանք,
 զորս արտասուելն է արժանատր, որքան հեռի են ի վշտակից
 լինելոյ եւ ազնելոյ աշխատեցելոցն, մինչ զի թշնամանեն եւս
 դառնապէս, եւ ոտնահար լինին, եւ իմաստասիրեն սնոտիս եւ
 ընդունայնս եւ ձայնեն ստուգապէս յերկրէ՞⁵⁸, եւ յադախասին
 եւ ոչ ի լսելիս քաջահանճարս, եւ յաստուածայինս սովորեալս
 աւանդութեամբքն յանդ/զինս ասել: ՅԱստուծոյ թշուառանայն
 անցա, յԱստուծոյ բարի կրելս մեզ: Եւ ո՛վ եմ եւ զարեւն լուծա-
 նել զԱստուծոյ, զի սիրելի երեսեցայց: Տաժանեցին, թշուառա-
 ցին, այսպէս հաճոյ թուցաւ: Եւ աստանաւ միայն են աստուա-
 ծաւերք, ոչ է պարտ եւ արժան պահել զդանգսն, եւ հակառակ
 թշուառացելոցն յանդգնել: Եւ զի ոչ յԱստուծոյ զբարիորք գոր-
 ծելն իրեանց վարկանին, երեսեցուցանեն յայտնապէս յորոց
 ասենն: Քանզի ո՞ք այնպէս զմտաւ ածիցէ յաղագս կարատա-
 ցելոցն, զԱստուած գիտելով մատակարար, զոր ստացեալն է:
 Զի անցին է ունելն ինչ յԱստուծոյ, եւ վարելն ըստ Աստուծոյ,
 զորս ունին:

Լ Արդ՝ եթէ յԱստուծոյ չարաշար կիրքն անցա են չեւ եւս եւ, յայտ
 է, ամբողջ եւ չնքենէ միթո՞ն բերէ զանկարգութիւնն, իբրեւ հոս-
 մամբ: Եւ ո՞ք գիտէ, եթէ ոմն վասն չարութեանն տանջի, եւ ոմն
 իբրեւ գովեալ ամբարտաւանէ, այլ ոչ // հակառակն՝ ոմն վասն
 չարութեանն բարձրանայ, եւ մեւսն վասն առաքինութեանն փոր-
 ձի, նա առաւելապէս ամբարձեալ, զի եւ կործանեցի չարաշար,
 զամենայն լքանելով յառաջագոյն, իբրեւ զախտ ինչ, պատառեալ
 զիր զչարութիւնն, զի եւ տանջեցի անբաւոյնս: Իսկ սա ըստ
 ոչ կարծեաց ճնշեալ, զի իբրեւ զոսկի ի բովս փորձեալ ի չարու-
 թեանն, եւ թէ ինչ փոքր ունէր, եւ զայն հալեաց, վասն զի մա-
 քոր յաղտոյ ամենեւին եւ ոչ որ լինել ի բնութիւնս, որպէս լուաք,
 եւ կամ զի երեսեցի ընտրելագոյն: Զի գտանեմ եւ այսպիսի իմն
 յաստուածային Գիրս խորհորդ: Եւ երկայնագոյնս է թուել զա-
 մենայն զհոգւոյն զձայնս, որք զիս առ այսոսիկ բերեն: Այլ ո՞ք
 զաւագ ծովու եւ զշիթս անձրեւոյ, եւ զխորոց երկայնութիւնս չափեա-
 ցէ: Ո՞րք արդեք զԱստուծոյ առ ամենայն իմաստութեան զխորսն հե-
 տագատեցէ, որով եւ արար // զամենայն, եւ մատակարարէ
 ամենայնի, զորս ինքն աստիճէ եւ գիտէ: Քանզի բաւական է,
 ըստ աստուածայնոյն Առաքելոյ, սքանչանայն միայն ընդ այսպի-

⁵⁸ Հմմտ. Եսայի, Իժ, 4:

